



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Man
2238



ARMENISCHE
CHRESTOMATHIE

VON

DR. M. LAUER

KÖNIGL. PREUSS. REGIERUNGS- UND SCHULRATH IN CÖLN.

38

ZU DES VERFASSERS GRAMMATIK DER CLASSISCHEN
ARMENISCHEN SPRACHE.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈՐ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

WIEN, 1881.

WILHELM BRAUMÜLLER
K. K. HOF- UND UNIVERSITÄTSBUCHHÄNDLER.

1999

VORWORT.

Bei Herausgabe meiner Grammatik der classischen armenischen Sprache im Jahre 1869 hatte ich die Absicht, eine armenische Chrestomathie, welche den ganzen Text der Geschichte Gross-Armeniens von Moses von Chorene mit erklärenden Noten und einem Glossar enthalten sollte, in kurzer Zeit folgen zu lassen. Indess haben meine seitherigen Amtsgeschäfte die Verwirklichung dieser Absicht erst jetzt ermöglicht und dazu noch die Beschränkung der Chrestomathie auf den Text des zweiten Buches des genannten Geschichtswerkes nebst grammatischen Noten und Glossar geboten.

Ich habe jenen Textabschnitt gewählt, weil er meistens erzählend ist, mehrere Briefe enthält und eine grosse Zahl griechischer und lateinischer Eigennamen in armenischer Schreibung gibt. Die grammatischen Noten sollen dem Anfänger die erste Lectüre erleichtern und gleichzeitig das Studium der Grammatik fördern, wesshalb sie stets auf diese verweisen. Das Glossar beansprucht nicht die etymologische, sondern die gebräuchliche Bedeutung der einzelnen Wörter zu geben.



h. S. 2221

Möge das Buch mit diesem Inhalte das Studium der armenischen Sprache und Literatur beleben und fördern, und von der Kritik mit Berücksichtigung seines Zweckes beurtheilt werden.

Cöln, im Herbste 1880.

Dr. M. Lauer,
Regierungs- und Schulrath.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈՒԲ Շ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

I.

T E X T.

Ա

Պրեմ քեզ այժմ և որ ինչ առանձին մերոյ աշխարհիս զործք, երկրորդ ասնելով զիրս, սկսեալ 'ի թագաւորութենէն Աղեքսանդրի, մինչև զթագաւորութիւնն սրբոյ և քաջի ասնն մեծին Տրդատոսոյ, կարգաւ, որ ինչ եղեալ աստ զործ քաջութեան և արութեան, իմաստից և կարգաց միոյ միոյ սբաւք 'ի նոցանէ, սրբ յաբբայէն Պարսից Արշակոյ և Վաղարշակոյ եղբօրէ նորս, զոր մերոյ ազգիս թագաւորեցոյ. և ինչ որ յետ նորս եղեն թագաւորք աշխարհիս մերոյ 'ի նորին սերմանէ, սրբի 'ի Տօրէ ասնելով զտէրութիւնն՝ անուանեցան արշակունիք Արշակոյ. աւերբղքն յազգ և 'ի բազմութիւն աճեցեալք, և միակն ըստ կարգի հետեանոց 'ի թագաւորութիւն: Բայց զբեմ կարճ 'ի կարճոց որ ինչ մեզ անկ է, և զաւերբղքն թողում: Քանցի բաւական է յազապս այլոց ազգաց որ ինչ 'ի բազմաց ասացեալ եղև:

Յետ Թիրեղլոյ ամենայն Թիւզբայ Աղեքսանդրի մակեդոնացոյ, սրբոց Փիլիպպեաց և Ուրմուխազոց, որ երբոսն և չորրորդ Աբբիզոյ, բազմաց տարով զտէրութիւնն կտակաւ, զի ամենեցուն իշխանութիւն՝ մակեդոնացոյն անուանեցի, ինքն մեռանի: Օկնի սրբ թագաւորեալ Բարեթմի Սելեկիոս, զյուլիոց կորցելով զիշխանութիւն. աստի և զՊարթևս հնադանդեաց մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ՝ Նիկանովր այնորիկ ազադաւ: Սորս Թիրեալ ամն երեսուն և մի, թողաւ զթագաւորութիւնն սրբոց իբրում Մաթիոբոց անուանեցելոցն Սաւաթր ամն իննետասն: Օստ յաջորդէ Մաթիոբոս, ասացեալն թուրա, ամն տասն. և 'ի մեռաւաներորդին ապտամբէն Պարթևք 'ի ճառացութենէ

մակեդոնացւոյն : Ուստի և թագաւորեաց Արշակ քաջ, որ է 'ի զաւակէ
Աբրահամու, 'ի քետուրական ծննդոց, առ 'ի հաստատել բանին Տեառն
առ Աբրահամ, թէ թագաւորը աղգաց 'ի քէն ելցեն :

Բ

Թագաւորեալ Արշակայ և որդւոցն, պատերազմ ընդ մակեդոնացիս, և սեր ընդ
հռովմայեցիս :

Որպէս ասացաք, յետ վաթսուն ամի մահուանն Աղէքանդրի՝
թագաւորէ 'ի վերայ Պարթևաց Արշակ քաջ 'ի քաղաքին, որ կոչէ
Բահզ Առաւատին, յերկրին Վառչանաց : Այս ասոյ պատերազմ աստիկ
յոյժ, թափելով յինքն զամենայն արեւելեաց : Հարած է և 'ի Բարե-
լովնէ զմակեդոնացւոց իշխանութիւնն : Ան զգործանալն հռովմայեցւոց
'ի վերայ արեւմտից և ծովու, և թէ 'ի սպանիացւոցն թափեցին զովնն,
ուստի սկի և արծաթն հասանի. և զգաղատացիս հարեալ ընդ հարկիւ
կացոյց, և զթագաւորութիւնն ասիացւոց : Հրեշտակս առաքեալ, խնդրեք
զգաշնաւորութիւն, զի մի օչնեացէ մակեդոնացւոցն. ոչ տարւլ հարկս,
այլ պատարագս միայն ամի ամի հարիւր քանքարոյ :

Այսպէս տիրեալ ամս երեսուն և մի, և յետ նորա Արտաշէս որդի
նորա ամս քսան և վեց, զոս պայազատէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ
մեծ. պատերազմի ընդ Պսեմտոր և որդւոցն Պսեմտորեաց Անտիգոնեաց.
քանզի 'ի վերայ նորա եկն 'ի Բարելովն մակեդոնական զօրու, և
պատերազմեալ 'ի գերութիւն ըմբռնեցաւ. զոր կալեալ Արշակայ՝ տարաւ
'ի Պարթևս երկաթեղէն կապանօք, ուստի և Սիրիպիեղէն կոչեցաւ :
Այլ իմացեալ եղբօր նորին սիդիացոյց Անտիգոնայ զգնալն Արշակայ, զայ
սննի զԱշորիս : Իսկ Արշակ երկատասան բիւրեաւ անդրէն զարձեալ, և
Անտիգոնս 'ի աստիկ ձմերայնոց հերքեալ, պատահի նմա պատերազմաւ
յանձուկ տեղիս, և կորնչէ հանդերձ զօրօքն. և Արշակ տիրէ երբորդ
մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեաց է
ուսանել 'ի չորրորդէ, որ յաղագս բաժանելոց զբարբ երկիրս յերիս
մատունս, և կոչեալ զովն Աւրոպիէ, և զովն Ալիբիէ, և զովն Ասիայ, որում
և տիրեաց Արշակ :

Գ

Թագաւորեցուցանել զԱղարշակ Հայոց աշխարհիս :

Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր Աղ-
արշակ մերոյ աշխարհիս, զհիւսիսի և զարեւմուսս տարւլ նմա սահմանս :
Սա, որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այլ քաջ և խոհեմ՝
ընդարձակեաց 'ի վերայ սահմանաց իւրոյ. և կարգս կենցաղականս,
որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս. և նախարարութիւնս, և նոյցին
նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս,
որ 'ի զաւակաց նախնւցն մեր Հայկայ և յայլոց :

Վանդի յետ սանձահարելոց զմակեդոնացիս և զաղարելոց պա-
տերազմայն, սկիզբն առնէ բարեգործութեանց Պարթևս քաջ. նախ և
առաջին փոխարէն բարեաց հաստեցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ,
որ 'ի Հրեկոյն՝ Համբայ Բաղարատ. տալ նմա իշխանութիւն աղգաւ
թագադիր լինել արշակունեաց. և որ 'ի նմանէ ծնեալ աղգ՝ լինել յանուն
նորա կոչմամբ բաղբատունի, որ և այժմ մեծ նախարարութիւն 'ի մէջ
աշխարհիս : Վանդի այս Բաղարատ նախաձեռն ընծոյ ըստ կամաց
մատոց զինքն Աղարշակայ յառաջ քան զպատերազմն Արշակայ ընդ
մակեդոնացիսն, և սա 'ի դրան արքունի : Իսկ 'ի ծայրս հայերէն խօսից
կողմնակալ իշխան բիւրոց և հազարաց յարեւմտից կուսէ :

Բայց գարձցաք անդրէն 'ի վեր պատմելով յաղագս պատերազմին
Աղարշակայ ընդ պոնդացիս, և որ 'ի Փոնդիայ, և վասն յաղթու-
թեանն :

Գ

Եթէ որպէս միաբանեալ Աղարշակայ զքաջս Հայոց 'ի կարգ զօրու, խաղոց 'ի
վերայ մակեդոնացւոց մտերմաց :

Յետ պատերազմին Արշակայ ընդ մակեդոնացիս և ունելոց զԲա-
րեւն և զարեւելս և զարեւմուսս աստրեստանի, միաբանէ և Աղարշակ
զօր բաղում յԱրարատականէ և 'ի Հայոց, որ 'ի միջոցի աշխարհիս, արս
անուանիս և քաջս, և զկոչեցեալն Բաղարատ, և որ ընդ նովաւ քաջք,
1*

և զծովեղերեսցան մանկունս, որք 'ի Գևեղամայ և 'ի քանանացոց, և Շարայի ծնունդք և Գուշարայ, և առ թէր սիսականան, և զկազմանան և գնոցա մերձաւորան, որպէս թէ զկէս մասն աշխարհիս: Հասանէ 'ի միջոց աշխարհիս վերագոյն քան զսիւրնս մօրին մեծիկային Աբասկոց, մօտ յԱբմուխին որ ասի բլուր. աւուրս շատս առնելով անդ, որպէս պարս է սակ. զի ոչ զիտէին զկարգս ինչ:

Առ աստի միաբանեալ զբոլոր կողմ աշխարհիս, հասանէ առ սահմանօքն Խաղտեաց: Վանդի Ղաղկիայ, Պանդաս, Փոխգիւց, Մաժարք և այլք, ոչ զիտելով զհամ պատերազմին Աբշարայ, առ մակեդոնացոց պետութիւնն զմիաբանութիւն գաշանցն հաստատուն պահէին: Վասն որոց ոմն Մորփիւղիկեաց միաբանեալ զասացեալ կողմանս զպատիկ, և զբլուր 'ի պատերազմ ընդ Վաղարշակոց: Բայց պատահէն միմեանց առ բարձրաւանդակի միջ բլրով քարազազածիւս, որ սցոժ ասի Կողմնիայ. և մօտեալք 'ի միմեանս ձիւ սապարխօք միջոցոցն. սմբանան երկրքին կողմանքն բովանդակ աւուրս:

Ե

Պատերազմ Մորփիւղիկեայ և միգահար մահ:

Չկնի անցանելոց բազում աւուրց ամբանալոց կողմանցն երկրոյանց, զբլուրի պատերազմ 'ի մերմէ կողմանէս զիմեալ. վասն որոց յարգարէ կամաւ կամ սկամոց և Մորփիւղիկեան զիւրոց կողման ճակատն, հասանէ յանդուզն յարձակմամբ: Վանդի սյր սրտեաց էր, և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ, զոյդ մարմնոցն և ոյժ աստիկ սնելով: Ամբացեալ պղնձով և երկաթով, և սլլովք ընտիր վառելովք, ոչ աստիկ ինչ թուով, տապաստ յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս 'ի մանկանցն Վաղարշակոց. և ջանայր անցանել հասանել յարքոյն Հայոց 'ի մեջ խմբի մեծի և զինու ամբացելոց: Առ մօտ անցեալ աջոյցեաւ ձղել զսփինս. քանզի էր կորովի և երկայնածիղ, հնոի գաշտէնս արձակեալ որպէս 'ի թուիչս սրաթիւ հաւուց: Այլ ոչ ինչ կարի յամեցին ընդ մեջ անցանել արք քաջք և անուանիք 'ի զարմից Հայկոց և ասորեստանոցն Սենեքերիմայ. և աշտէիւ հարեալ սաստակեն զքաջն, և զգօրսն առաջի

արկեալ 'ի փախուստ դարձուցանէին. բազում վտակս արեան հեղեալ, զերկիրն սուղանէին իբրև հեղեղք անձրեաց: Առ յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակոց, և մակեդոնացոցն դադարեալ գտն:

Զ

Եթէ որպէս կարգեաց Վաղարշակ զարեմուս և զհետեօի մերոց աշխարհես:

Առ սոս սյսպէս կատարեալ, կարգէ զկողմանս Մաժարայ և զպանդացիս և զեզերացիս. դառնայ առ ասորեստովն Պարխարայ ընդ մեջ Տայոց 'ի զիջին և 'ի մառախլուտ տեղիս մայրեայն և 'ի լուսաւետս. զեզերցիկ իմն կարգելով զերկիրն, հաւատարելով զեռնայինն և զճերմահասն 'ի բարեխառն և 'ի զուգապեղեցիկ վայելչութիւն իւրոց թաղաւորութեանն. ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով, յարժամ զհետեալ երթիցէ: Պոմն զերկուս տախարակն անտառախիտս հանդերձ լեւրամբքն կազմելով, և որոց տեղիս. և զճերմութիւնն Կողայ 'ի մարմանդս սյղեաց և բուրաստանեաց: Այլ խորեմ աստ վասն սիրելի առնն յայտնի զբել զամենայն և մանրագատում. զի անցի մայն զտեղիսն նշանակելով, զհաւատսին և զոճն 'ի բաց թողեալ, վասն զկապ սիրոց զհրաշալոցն անխղելի պահելոց:

Առ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ 'ի գաշին հիւսիոց և որ զասորեստով մեծի լեւինն Վաւիտոց, և որ 'ի հովիտս կամ 'ի ձորս երկայնագողս խորացեալս, 'ի լեւնէն' որ զհարստով իջեալ մինչ 'ի գաշտաբերանն մեծ. պատուէր տարով զուսպակութիւն և զմարդազատութի 'ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ սեսեալ գնտոս, առաջնորդս և իշխանս հանդերձ զեզերցիկ կարգօք հաստատուցէ: Առ արձակէ գնտոս հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուք յիւրմէ: Առ ինքն արձակեալ զարեմուսեաց բազմութիւնն, իջանել 'ի տեղիս խոտաւետ մերձ 'ի սահմանն Շարայի, զոր հինքն Անիոյց և վերին Բասեան կոչին. իսկեացոց վասն հաստաւածին Վաղարշար Բաղկարայ Վաղայ բնակելոց 'ի տեղիս, յանուն նորս անուանեցաւ Վանանդ. և անուանք շինիցն յանուն եղբարց և զարմից նորս անուանեալ կոչին մինչև յայժմ:

Իսկ 'ի ցրտանալ հիւսիսց 'ի դառնահոտ փշեղց, խաղց իջանէ 'ի գաշան մեծ . և անդ դափամբ մօրին մեծի բանակի 'ի տեղոջ, ուր դեան մեծ 'ի ծովակէն հիւսիսց սկիզբն առեալ իջանէ և խառնի 'ի մօրն մեծ : Եւ անդ կարգեալ զգօրս աշխարհին, և թողեալ յինքնէն վերակացուս, և իւր առեալ զամենայն զլխաւորսն՝ չուէ 'ի Սժբբն :

Է

Յօրինուած թագաւորութեանն, և թէ ուստի զնախարարութիւնն բազմացոյց, որպէս և զնորդ կենցաղաւարել հրամայեաց :

Այս դրուակ մեծ, և հաւաստի պատմութեամբ լի, և արժանի բանից սղորկադունից և յորովից : Վանդի բաղում ինչ աստ կարգաց և յօրինուածոց, տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և համայն ասել օրէն թագաւորութեանն, և որ ինչ շուրջ զթագաւորութեամբն . զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց, և որ նման սյուսիկ :

Արդ նաև և առաջին օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով 'ի զլխոյն իւրմէ և 'ի թագէ : Եւ զիտեցեալն Բաղարատ, որ 'ի Հրէիցն, շնորհակարութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջասացեալ տանուտերական պատիւն ազգին պարզեւելով . և իշխել նմա թագ 'ի զլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր և ասպետ . և առանց ոսկոյց և ականց զկրտսեր մարգարիտն երեքտակէն վարտակալ ամէլ՝ յորժամ յարքունիս և 'ի տան թագաւորին շրջիցի :

Եւ զգեցոյցանողս իւր զձեռէս 'ի զաւակաց քանանացոց . անուն կոչէ ազգին զնթունիս : Եւ թիկնապահս իւր, զննու հանդերձ, 'ի զաւակացն Խոռայ հայկացոյ՝ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս . և զլուխ նահապետ նոցա զՄաղխազ ոմն : Բայց անուն ազգին զնախնականն պահէ : Իսկ զՂաատ 'ի զաւակէ Պառնկայ, որ 'ի Պեղամայ, 'ի վերայ սրտց արքունականաց կարգէ : Որոց սրգի եղեալ Վարժ, յանուն նորա անուանի ազգն . բայց այս զինի, յաւուրս Արտաշեսի : Եւ զՂաբաղ ոմն 'ի վերայ կուտից, և զԱբէլ ապասարար և զահաւոր . և շէնս պարգեւէ նոցա, յորոց և անուն կոչին . սասպէս և նախարարութիւնքն՝ արեղէն և գարեղէն :

Եւ զարծրունիսդ զխտեմ՝ ոչ արծրունիս, այլ արծիւ ունիս, որք արծուիս առաջի նորա կրէին : Թողում զառասպելեացն բաջաղանս, որ 'ի Հագամակերտին պատմին . մանկան նիրհէլց անձրև և արև հակառակեալ, և հովանի թռչնոց պատանուցն թալկացելց : Պիտեմ զշնունիսդ զինի ունիս, որ առաջի թագաւորին պատրաստէր զըմպելիսն . որ պանչելի իմն զիպեալ եղև ըստ գործոյն և անունն . քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր և համեղ զինեաց, ունէր և կոչումն անուանն Պիին . ընդ որ կարի զուարճացեալ, ասեն, Վաղարշակի կարգէ 'ի թիւ նախարարութեանն ազգաց մեծապէս : Եւ են այս երկու տունքս 'ի զաւակէ Սենեքերիմոց, արծրունիս և զնունիս :

Առեմ և զսպանդունիսդ 'ի վերայ զենարանաց, և զհաւենունիսդ՝ բաղեակիրս և բաղեակալս յազադս 'ի մայրիս բնակելց : Եւ եթէ առցոխս ոչ ունիցիս, զձիւնականդ՝ ամարայնոցաց պահակա և ձիւնակիրս, և յառաջագիմութեանէ ազատացեալս, որպէս ընտանիք թագաւորաց :

Եւ զունդս և պահապանս դրան արքունի պատրաստէ զարս, զմի մի իւրաքանչիւր վառելովք 'ի նոյն հին զարմից թագաւորացն՝ որ 'ի Հայկոց, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութեան 'ի հարանց ատացեալ գեւղս և դաստակերտս : Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս բեմ, յայցոց յարուցեալ զունդս և ստտան անուանել . ոչ զխտեմ թէ վասն ապաւելց ազգին առաջնոց, թէ վասն ընդգիմութեան իրիք լինելց շկապեալ և 'ի բաց ընկեցեալ զազգն, զայլս 'ի տեղիս յարուցին զունդս անուամբ արքունի : Այլ առաջինն հաստատ 'ի զարմից թագաւորացն, առաջնոց . որպէս և պիտմ 'ի Վրաց աշխարհին, որ Սեփծուղն կոչէ : Եւ և ներքինիս հրամայէ 'ի նոյն ազգէ խղել . և նահապետ նոցա զՀայր իշխանն մասին յԱրաբատականէ մինչև յըճուաշ և Նախճաւան : Բայց թէ որպէս է և ուր արս իբր անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ :

Ը

Երկրորդ թագաւորութեանն լինել 'ի զաւակէ Աշգահակոյ Մարաց թագաւորին : Բայց յետ կարգելց գտուն թագաւորին, երկրորդ թագաւորութեանն լինէր 'ի զաւակէ Աշգահակոյ՝ Մարաց եղելց թագաւորի, որ պիտմ Մարացանդ կոչեն : Վանդի ոչ ասեն նահապետի ազգին՝ Մու-

ըսցան տէր, այլ մարացոցն տէր: Աւ թողու 'ի վերայ նորա զամենայն շէնս, որ 'ի գերութենէն Սարայ: Աւ յարեւելից կողմանէ զեղերբ հայկական խօսից կողմնակալս, զերկու ցեղից նահապետութեանցն՝ սիսականն և կազմեացն, զորոց զանուանան յառաջնում ճառին կարգեցաք:

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբեր զարեւելից հեփոց կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զպր անուանի և յամենայն զործ մտաւորութեան և հանճարոց առաջին, զԱռան. առ մեծ գետովն, որ հասանէ զգաշան մեծ, որ անուանի Սուր: Բայց զայս զխտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մտացումն եղև մեզ յառաջին մատենին յիշատակել, զգուճոս սիսական՝ որ ժառանգեաց զգաշան Աղուանից, և զեռնակալն նորին գաշաի, 'ի գետայն Արափայ մինչև ցամաքն՝ որ ստի շնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կռչեցան Աղուանք. զի աղւ ձայնէին զնա: Աւ 'ի սորա ճննողոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ 'ի պարթեւէն Վաղարշակոց կողմնակալ բխրասր: Բարա գաւակէ ասեն սերեալ զազդ առեացոց և զարգամնացոց և ծովգեացոց և զարդարացոց իշխանութիւնն:

Իսկ Վառչարոց, որ յարդոցն Շարայի, ժառանգեաց զեւտն ժթին, որ է Սանդարք, և զիւս մտինն Ջաւախոց, զՍողբ, զԾար, զՉար՝ մինչև ցամաքն շնարակերտ: Բայց զտերութիւնն Աշոցոց, և զսեպհակալութիւնն Տաշոց՝ կարգէ Վաղարշակ 'ի գաւակայն Վառչարոց հայկացոց: Իսկ ընդդէմ լերինն Աստիտոց կողմնակալ հեփոց կարգէ զմեծ և զհօր ազգն. և նահապետութեանն անուն կարգայ՝ բղեշն գաղարացոց. որ էր լեալ 'ի գաւակէ Միհրդատոց Վարեհի նախարարի, զոր ածեալ Աղեքսանդրի, թողեալ իշխան 'ի վերայ զերութեան 'ի վերիացոց ազգայն, զորս էսած՝ Նարեգոպանտար, որպէս Արիւզենոս պատմէ այսպէս ասելով. Մեծագորն՝ Նարեգոպանտար բռնագոյն էր քան զԱրակիւս լերիացոց. զօրոժտրով լեալ, հասանէր 'ի վերիացոց աշխարհն, և վանեալ խորտակեալ ընդ ձեռամբ նուաճէր. և զմասն մի 'ի նոցանէ յաջակալն Պանդոս ծովու յարեմուտս տարեալ բնակեցաւ ցանէր: Իսկ 'ի հովտին մեծի Բասենոց կարգէ նահապետութիւն զորդունին անուանեալ, որ 'ի գաւակայն Շայկոց:

Իսկ զպր խոժտագեղ և բարձր և կազարաննն և տախարթիթ, խորակն և զժնահայեաց, 'ի գաւակէ Պառքամոց, 'ի Շայկակոց թոսնէ,

Տորք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահագիմութեանն ձայնէին անդեղեաց, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուտակալ արեւմոց. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անդեղ տուն: Բայց եթէ կամիս, ստեմ և ես յաղագս նորա անյաջ և փցուն, որպէս պարսիկք վասն Ռոստամոյ Սագճիի հարեւր և քսան փոյց ոյժ ասեն ունել: Վանդի կարի իմն անյարմար թուէին նմա երզ բանիցն վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոցն. որում ոչ Սամանի և ոչ Արակեաց և ոչ Սագճիին յարմարեն այս զոյցքս: Վանդի երզէին նմա բուռն հարկանել զորճաքար վիտայ ձեռօք, ուր ոչ զպր զեղութիւն, և ճեղքել ըստ կամոց մեծ և փոքր. և քերել ըղնդամբք և կազմել որպէս տախտակ, և զբել նոյնպէս ըղնդամբք իւրովք արծուիս և այլս պայտիս: Այլ յեղբոս ծովուն Պանդոսի զիպեալ նուաց թշնամեաց, զիմն 'ի վերայ. և 'ի խաղախ նոյս 'ի խորն իբրև սապարեզս ութ, և սա ոչ ժամանեաց նոցա. առնու, ասեն, վէմն բլրաձևս, և ձգէ զինի. և 'ի սաստիկ պատումանէ ջուրցն ընկղվին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն, որ 'ի պատումանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւն բազում մընոս: Ո՛հ, կարի է առապելս, այլ և առապելաց առապել: Բայց քեզ զի է. քանզի էր արդարեւ սաստիկ հօր, և այսպիսեաց զուցաց արժանի:

Բայց զինի գորս հաստատէ զմեծ նահապետութիւնն Ծովոց 'ի չորրորդն կոչեցեալ Շայս: Այլ և զնախարարութիւնն ապահանեաց և զմանաւագեանն և զըզնունեանն 'ի նոյն գաւակայն Շայկոց. 'ի բնակչաց գտեալ պերճազոյն, տեսարս կարգէ յանուն շինից և գաւառաց կոչելով:

Այլ մտացաք և զգժնեայ Աւքն անուանեալ այր. զոր ոչ կարեմ հաւատեաւ ասել, 'ի Շայկոյ եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհին, զոր հին զոյցքն պատմեն լինել. բայց էր այր քաջ: Չաս կարգէ սակաւ արամբք պահել զեւտնն, սրալ զքօշն. որք անուանեցան Սիլուսիք: Այսպէս և 'ի նոյն իրս և զՄիանդակն անդառնալի. և 'ի ամանէ մանդակունիք:

Բայց յարդոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ ընդրեցին զմհենիցն պաշտամունս, պատուէ մեծապէս, 'ի ձեռն տարով նոցա զքրմութիւնն. և կարգէ ընդ առաջին նախարարութիւնն, և անուն կոչէ վահագնիս: Ստպէս և զառաւենեանն և զարեհասանեանն գտեալ 'ի զարմից առաջին թաղաւորացն, կարգէ 'ի նոյնանուանս աւանս:

Այս զՇ արաշան 'ի տանէ Սանասարայ հաստատէ բղէշիս մեծ և կուտակալ յարեմոսից հարաւոյ, յեղեր սահմանացն ասորեստանի, առ աին Տիգրիս գետոյ, դաւառս պարգեւելլով զԱրծն, որ շարջ գնովաւ, և զԼեւան Տաւրոս, ուր և Սիմ, և զԱղեսուրն ամենայն:

Իսկ զմիկայցն 'ի նոյն դաւառէ գտեալ պր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկոյս բազում, նախարարութիւնս հաստատէ: Աջնպէս և զիրողուացիս, զանձեացիս, զակէացիս 'ի նոյն դաւառաց: Իսկ զորշատնիս և զգողութնեցիս գտի պատմեալ 'ի սիտականէն արդարեւ հաստաւած. ոչ զիտեմ, թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, և թէ յանուն դաւառացն զնախարարութիւնն կոչեցեալ:

Իսկ յետ պար ամենայնի մեհեան շինեալ յԱրմաիր, անգրիս հաստատէ արեգակն և լուսնի և իւրոյ նախնեաց: Այս աղերսեալ որ 'ի Հրէիցն Շամբայ Բագարատ, որ և թագադիր և ասպետ, հանդերձ հարկեցուցանող բանիւք, թողուլ զօրէնս հրէութեան, և պաշտել զմեհեանս. զոր շառեալ յանձն, ըստ կամաց թողու. զնա արքայն Սաղարշակ:

Հրամանս տայ և զքաղաքն Շամիրամայ նորոգել, և յայլ բազում տեղիս շինել քաղաքս բազմաբնակս, և շէս գլխաւորս և մարդակիտս:

Այս օրէնս իմն հաստատէ 'ի տան թագաւորութեան իւրոյ, և ժամն որոշէ ելեմոսից և խորհրդոց և խրախճանութեանց և զբօսանաց: Այս կարգս զինուորութեանց, և նոցունց առաջինս և երկրորդս և երրորդս, և որ 'ի կարգին: Այս յիշեցուցանողս երկուս 'ի ձեռն գրոյ. այլ ոմն զբարի յիշողութիւնն առնելով, և այլ ոմն զվրէժինդութեանցն: Այս բարոյ յիշեցուցանողն հրամանս տայ 'ի բարկութեան արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրան և զմարդասիրելն: Իրաւարարս 'ի տան արքունի, իրաւարարս 'ի քաղաքս և յաւանս: Հրամանս տայ քաղաքացեաց մարդկան արդոյ և պատիւ լինել քան զգեղջկաց, և զեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զելիսանս. և քաղաքացեաց մի կարի առ զեղջկոքն պերճանալ, այլ և զբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման պտոյցիկ:

Այս քանզի բազում ունէր ուտտերս, պատշաճ վարիաւ ոչ ամենեցուն առ իւր կալ 'ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսս բնակել 'ի դաւառս Հաշտենից, և 'ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ 'ի

նոսս թողլով զէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ուսմկաց կարգելոց յարքունուսա: Այս միայն զառաջին սրդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր 'ի համար թագաւորութեան, և զնորին ուսար՝ զոր անուանեաց Արտաշէս, և յոյժ սիրեցեալ. քանզի էր արդարեւ սղայն կայսառ և հզօր մարմնով. սրպէս զի կարծիս հայեցողայն տալ՝ որ 'ի նմայն աճելոց էին արութիւնք: Այս եղև այս յայնմ հետէ և առ յապոյ օրէնք 'ի մէջ արշակունեաց, միոյ սրգոյ բնակել ընդ արքայն՝ փախանորդ լինել թագաւորութեանն, և այլ ուտտերաց և գտտերաց գնալ 'ի կողմանս Հաշտենից՝ յաղդին ժառանգութիւն:

Բայց Սաղարշակ յետ պայսիսեաց արութեանց և բարեկարգութեանց մեռանի 'ի Մծբին, թագաւորեալ ամն քսան և երկուս:

Թ

Յաղագս մերոյ Արշակաց առաջնոյ, և նորին գործոց:

Արշակ որդի Սաղարշակոյ թագաւորէ 'ի վերայ Հայոց ամն երեքստասան. նախանձաւոր և հետեւող հայրենի առաքինութեանցն լեալ, բազում կարգս ուղղութեանց զործեաց, պատերազմելով ընդ պոնդացիս, և նշանակ էթող յեղեր ծովուն մեծի. զնիզակն իւր զբոյսրատեղ, որ էր արեամբ զեռնոց մխեալ, ձգեալ 'ի հետեւակուց՝ խորագոյնս նստոյց յերկանաբար արձանին, զոր կանգնեաց 'ի ծովեզերն: Չայս արձան բազում ժամանակս պատուեցին պոնդայիք որպէս զառ 'ի յաստուածոց գործ: Իսկ 'ի գոռալն Արտաշիսի միւսանդամ ընդ պոնդացիս, ընկեցեալ ասն զարձանն 'ի ծով:

Ի սորս աւուրս աղմուկ մեծ լեալ 'ի գօտիս մեծի լերինն Սաւկատու յաշխարհին Բաղլարոյ, և բազումք 'ի նոցանէ հաստաւածեալք եկին յաշխարհս մեր, և բնակեցան ներքոյ Սողայ՝ յարգաւանդ և 'ի հայաւէտ տեղիս բազում ժամանակս:

Ի ամանէ նեղեալ որդիք Բագարատոյ վասն զկուռս պաշտելոց, երկու 'ի նոցանէ սրով կատարեցան արիաբար 'ի վերայ հայրենի օրինայն. զորս ոչ պատկառեմ ասել հետեւող լինել անանիանցն և եղիազարանց: Բայց այլքն յանձն առնուն պոշափ միայն, 'ի շարթու հեծանել յորս

և 'ի պատերազմանս, և զմանկունս թողուլ անթլիատս, յորժամ լինիցին. քանզի անկին էին: Եւ հրամայեցաւ յԱրշակայ մի տալ նոցա կանցս յամենայն նախարարութեանցն, և թէ ոչ ոխտ պայմանի հաստատեցեն՝ թողուլ ըզթլիատութիւնն: Չորս յանձն առնուն զերկուս զոյս միայն, այլ ոչ զերկրպագութիւն կուցն:

Ատաննոր սպառին բանք ծերունայն Մար Աբաս Կատինայ:

Ժ

Եթէ ուստի եղիտ զպատմութիւնն զնի մատենիցն Մար Աբաս Կատինայ:

Սկիզբն արասցուք պատմել քեզ 'ի հինգերորդ զբոցն Աբրիկանոսի ժամանակադրի, որում վկայէ Յովնէպոս և Հիւսրղիտայ և այլք բազումք Յունաց: Վանդի նա բովանդակ փոխադրեաց և որ ինչ 'ի քարտէս գիւանին Եդէսիայ՝ որ է Ուսայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատէր. որ մատենքն 'ի Մծբնայ էին փոխեալ անդր. և 'ի Մինսպոյ Պանդուս 'ի մեհենական պատմութեանցն: Մի ոք անհաստատայի, քանզի մեզէն իսկ ականատես եղաք այն գիւանին: Եւ վկայ քեզ 'ի մօտոյ երաշխաւորեցէ Եդէսիատէ գիրք Եստերի կեսարացոյ, զորս ետ թարգմանել էրանելի վարդապետն Մաշտոց 'ի հայ լեզու: Ինդիր արասցես 'ի Վեդքըսնի 'ի գաւառին Միւնեաց, և գտցես յառաջին հաղնեղութեանն յերեքտասներորդ թուին, զի վկայէ յԱդէսիայ գիւանին լինել ամենայն գործոց ստաջին թագաւորացն մերոց մինչև յԱբդար, և զնի Աբդարու մինչև յԱբուանդ: Որ այժմ կարծեմ գամնի պահեալ 'ի նոցն քաղաքի:

ԺԱ

Յաղագս մերոց առաջնոց Արտաշեսի, և յոփշտակելոց զնախագահութիւնն:

Արտաշէս թագաւորէ Հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ 'ի քոսն և 'ի չորրորդ ամի Արշականայ Պարսից արքայի. և յառաջագեմ եղեալ, ոչ զերկրորդականն ունի գահ, այլ զաւագութեան թեկն ածէ. որում հաւանեալ, յանձն առնու Արշական տալ նմա գնախագահութիւնն: Վանդի էր այր հպարտ և պատերազմատէր. որ և արքունիս իւր 'ի

Պարսից աշխարհին շինեաց, և դրամ առանձին զիւր պատկերն հարկանէր. և զԱրշական ընդ իւրով ձեռամբ կացուցանէր թագաւոր Պարսից, որպէս զՏիգրանն որդի իւր՝ Հայոց:

Բայց տայ զՏիգրանն որդի իւր յպատանի ոմն Վարստ անուն, որդի Վատայ, որ 'ի զուակէ Վասնիայ՝ որ 'ի Վեդանայ, քանզի էր պատանին նշաւակ 'ի նեռածգութիւն կորովութեան, ուսուցանել զՏիգրանն: Չնա իշխան արքունականացն արարեալ որոց, և շէնս պարկեւայ նմա առ Հրազդան գետով, յանուն նորա կոչն ազգն վարածնունի: Բայց զգուտար իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումնն Վրաց բղէշի մեծի, որ էր 'ի զուակէ Միհրդատայ՝ Վարեհի նախարարի, զոր կացուցեալ էր Աղեքսանդր 'ի վերայ գերութեանն վերիայոց, որպէս յառաջագոյն պատմեցաք. և հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պանդոս ծովու:

ԺԲ

Խաղաշն Արտաշեսի յարեմուտս, և ձերբակալ առնել զԱրիստոս, և աւարել ընձեռել Հայոց զպատկերս կուց:

Յայնժամ հրաման տայ Արտաշէս զոր յարուցանել յարեւելոյ և 'ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչև ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս և յիջևանս քար բոտ մարգաթուի կարկառ՝ նշան բազմութեանն թողուլ: Խաղաշ յարեմուտս, և ձերբակալ արարեալ զԱրիստոս թագաւոր լուգացոյ:

Եւ գտեալ Միսիայ պղնձածոյլ սկէզօժ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպոլոնի, տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեցեն յԱրմաիր: Չոր առեալ քրմապետացն, որ էին յազգէ վահանեաց, զԱպոլոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաիր. իսկ զՀերակլայն զառնապատկերն, զոր արարեալ էր 'ի Սկիւզեայ և 'ի Վիպլիտոս կրետացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի, կանգնեցին 'ի Տարօն յիւրեանց սեփհական զեւոյն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշեսի:

Բայց Արտաշեսի նաւածեալ զցամաքս միջոյցայ ծովուցն և բիրցունց, լնու զՈվկիանոս բազմութեամբ նուազ, ծառայեցուցանել կամելով զբոլոր արեմուտս: Վանդի մեծ յոյզք խոսովութեան եղեալ 'ի Հուովմէ, ոչ ոք

ընդդիմանայ նմա հղորակէս : Այլ ոչ զիտեմ ասել յորպիսի ազդմանէ, ահագին իմն ազմուկ լեալ շփոթից, բազմութեան զօրացն զմխկանս կոտորեալ . իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն, յիւրոց զօրաց . թագաւորեալ ամս քսան և հինգ :

Բայց և Ալլադայ առեալ պատկերս զՎիտաի, զԱրտեմիդայ, զԱթենայ, զԱփեստու, զԱփրոդիտեայ, տայ բերել 'ի Հայս . որ ոչ ժամանեալ միջամուտ լինել յաշխարհս, բնն զբոթ մահուանն Արտաշիսի . և փախուցեալ բնկնուն զպատկերն յամբոյն յԱնի . և քաբմբ զնոցին զհետ լինելով, դադարեն առ նոսա :

ԺԳ

Այսութիւնք տիեզերակալութեանն Արտաշիսի և կապելոյն զԱրիւստս, յայլց պատմագրաց :

Օայս ասացեալ պատմագրացն Յունաց, ոչ մից կամերիւց, այլ բազմաց . ընդ որ տարակուսեալ մեր՝ բազում խոյզ խնդրոյ արարաք : Վանդի լեւաք 'ի պատմութեանց ոմանց՝ Աիւրոսի սպանեալ զԱրիւստս, և բարձեալ զթագաւորութիւնն լիւդէացոց : Աւ դարձեալ պատմի առարկութիւնն Արիւսեայ և Նեքրտանեայ . և Նեքրտանեոս այս վերջին թագաւոր է եգիպտացոց 'ի Մանեթոս պատմեալ զոր ոմանք հայր Աղեքսանդրի ասացին : Աւ գտանեմք զժամանակս Արիւստի երկերիւր ամառ յառաջ քան զՆեքրտանեայ, իսկ զՆեքրտանեայ ժամանակս աւելի ևս երկերիւր ամառ յառաջ եղեալ քան զառաջին Արտաշիսի թագաւորի Հայոց :

Բայց քանզի բազումք են, որ ասեն զԱրիւստս մերոյ Արտաշիսի կալեալ, և ոճով իմն պատմեն, ես հաւանիմ : Վանդի ասէ Պոլիկրատես այսպէս . Վ և հ ինձ Արտաշէս պարթև . քան զմակեդոնացին Աղեքսանդր, զի կալով յիւրում աշխարհին, իշխեաց թաւրայ և Բարբելոնի . և չև ընդ Ալիւսս զեա անցեալ, զլիւդականն սատակեաց զգօրս, և կալաւ զԱրիւստս . և յառաջ քան յԱյիայ հասանելն՝ Աշտաիկէ դղիկին քարոկցաւ : Աւայլ բախաին . միայն թէ 'ի տերութեանն և ոչ 'ի փախտեան էր փախճանեալ :

Հանդայն դմին ասէ Աւագարոս . Փոքր Աղեքսանդրի և Վարեհի պատերազմ՝ առ Արտաշիսին բաղդատեալ . քանզի նոցայն ոչ փոշոյն մաքուր երևէր ըյս տունջեանն, այլ սա ծածկեաց նետաձգութեամբն և ստուերացոյց զարեգակն, ձեռագործ դիշեր զմիջօրէիւ արարեալ : Ոչ փախտեաց համբաւաբեր լիւդացոյն թողեալ . այլ և զթագաւորն նոցին զԱրիւստս 'ի տապակի հրամայեաց կացուցանել : Վ անս տրա և ոչ ուխք զգեան ստուարացոյցին, արբմամբն 'ի ձմեռնային նուազութիւն իջուցանելով . վասն զի և զթուոյն եցոյց տկար՝ բազմութեամբ զօրացն, մինչ զի չափոյ պէտք եղեն առաւել քան զհամարոյ : Քնդ այս ոչ հպարտացեալ, այլ արտասուեաց ասելով . Աւայլ փառացս անցաւորի :

Պարէ և Սամադրոս այսպէս . Խաբկանք լինէին հպարտացելոցն լիւդացոց, Արիւսեայ Պիւթիայ հարցուկն պատասխանելով . Արիւստս անցեալ ընդ Ալիւսս զեա քակեաց զիշխանութիւնս : Օ որ նորս զօտարաց կարծեցեալ, զինքն քակէ . քանզի կալեալ զնա պարթևին Արտաշիսի, հրամայեաց հանել յերկաթեղէն տապակ : Իսկ Արիւստի յիշեալ զքան Սողոմնի աթենացոյ, ասէ յիւր լեզուն . Ո՛վ Սողոմն Սողոմն, զեղեցիկ բարբառեցար, ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցլխնճան : Աւ լուեալ որ մերձն կային, պատմեցին Արտաշիսի, եթէ զնոր ոմն աստուած կարգայ Արիւստս : Աւ զթացեալ Արտաշիսի, հրամայեաց ածել, և հարցեալ և ուսեալ, թէ զինչ է որ ազաղակեայն, հրամայեաց ներել դտանջանան :

Պարէ և Փղեդոնիս . Ամենայն թագաւորաց հուժկու եղեալ պարթևն Արտաշէս, և ոչ միայն զլիւդացիս վանեալ և զԱրիւստս կապեալ, այլ յԱշէսպոնտոս և 'ի թօրակէ զտարեբացն փոխեաց զընութիւն . ծովադնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հետեակելով . թետեղացոյն սպանալով, և համբան հիացուցանէր զհելլենականն : Արծանեաց զակեղեմնացիս, փախոյց զփոկեացիս, զավրացիք անձնատուրք եղեն, բիւտացիք մասն են 'ի կազմածոյ նորս . առ հասարակ նմա Ալլադայ մատուցանէր զահն : Յետ փոքու ժամանակի աղէտք անցին զամենեքումբք . ոչ այնքան թշուառացաւ Աիւրոս ընդ Մաքրոթիս պատերազմելով, ոչ այսպիսի կիրս կրեաց Վարեհ 'ի սկիւթացոյն պահուստ, և ոչ Վամբիւսէս յեթովպացիս . փոքր և Վսեբրոնն Ալլադայ զօրու երթան, թողլով նոցա զգանձս և զխորանս, միայն կենդանի փախուցեալ մազապուր :

Այլ առ մեծամեծ յաղթանակօք պանծացեալ, 'ի յիւրոյ զօրացն խողխողի:

Արդ ես հաւատարմութեան արժանի համարիմ զայցտիկ պատմութիւնս . և զայն Արիւստս, որ առ Աիւրաօս և կամ Ալեքսանտրեան պատմին, կամ առ լեալ, և խամ միով անուամբ բազում թաղաւորաց վարեալ, որպէս յարմից է սովորութիւն:

ԺԳ

Յաղազս թաղաւորութեանն Տիգրանայ միջնոյ և ընդդէմ կալոյ զօրացն Յունաց, և զմէհեանն շինելոյ, և արշաւանս առնելոյ 'ի Պաղեստինէ:

Յետ Արտաշէսի առաջնոյ թաղաւորէ Տիգրան որդի նորա յիննուտաներորդ ամի Արշականայ թաղաւորի Պարսից: Աւ ժողովեալ զզօրս Հայոց, ընդդէմ երթայ զօրացն Յունաց . որք յետ մահուանն Արտաշէսի հօրն իւրոյ և ցրուելոյ զօրացն՝ հետամուտ լեալ զիմեալ զայնն յաշխարհս մեր: Որոյ ընդդէմ պատահեալ Տիգրանայ, արդելեալ 'ի վերջ նահանջէ: Աւ 'ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄաթաթ և զհօղս մէջերկրացոյն, և զօր բազում թողեալ նմա, զառնայ յաշխարհս մեր:

Առաջին զործ զմէհեանն շինել կամեցաւ: Իսկ քրմացն, որ եկեալ էին 'ի Յունաց, զմտաւ ածեալ՝ զի մի 'ի խորագոյն Հայս վարիցին, պատճառեցան ըզմութիւնս, իբր թէ զիքն անդէն կամին զքնակիլն: Որում հաւանեալ Տիգրանն, կանդնեաց զորմուկիական պատկերն Պիտիս յամուրն Մէնի, և զԱթենաս 'ի Թիլ, և զԱրտեմիդայ զմեւ պատկերն Մարբոլոյ, և զԱփեստան 'ի Բաղայցափնջ: Բայց զԱփրդիտայ զպատկերն իբրև Արակիկայ տարփաւորի առ նորին պատկերին Արակիկայ հրամայեաց կանդնել յաշտից տեղինս: Աւ ցատուցեալ ընդ վահանինն, եթէ ընդէր յիւրեանց սեպհականին իշխեցին կանդնեցին զպատկերն Արակիկ առաքեալ 'ի նորին հօրէ, ընկեաւ զնոսս 'ի քրմութենէն, և զգեւոյն յարքունիս առնու, յորում պատկերքն կանդնեցան:

Աւ այպէս մէհեանս շինեալ, և առաջի մէհենիցն բազինս կանդնեալ, զսհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր շատեալ յանձն ազգին բազրատունեաց, զմիոյ

զեղուն հատեալ, որում անուն էր Ասուդ, վասն պատկերացն անարդութեան, և ոչ այլ իւիք խաշտանդէ. քանզի յանձն առին ուտել 'ի զհիցն և զմիս խողի, թեպէտ և ոչ ինքեանք զոհեցին երկրպագութեամբ: Ասան որոյ առնու 'ի նոցանէ 'ի բայ զիշխանութիւն զօրուն. բայց միայն զթագակապ սպետութիւնն ոչ հանէ: Ինքն իջանէ 'ի Միջագետս, և զտեալ անդ զԲարշաւինայ զպատկերն, զոր 'ի փղակոյ և 'ի բիւրեղէ կաղմեալ էր արծաթով, հրամայէ տանել կանդնել յաւանին թարդան:

Աւ նոյնհետոյն զիմէ յաշխարհն պաղեստինացոյ վրէժ պահանջել 'ի Պաղմայիդ Աղէսպարայ յաղազս Պիտինիս որդոյ նորն առ հայր իւր յանցանաց: Առեալ զերի բազում և 'ի Հրէիցն, նոսի շուրջ զՊաղմայիդ քաղաքաւ: Իսկ զշեոյն Հրէից Աղէքսանդրիայ, որ և Մեսաղինայ, որ էր լեալ կին Աղէքսանդրի, որդոյ Յոհաննու, որդոյ Շմասնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազումս տարով դարձոյց զնա անտի: Կանդի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ խոպէ զերկիրն Հայոց, զեւառն ամուր կալեալ, որ և այժմ յանուն յեղուզակին կոչին վայկունիք:

2238

ԺԵ

Պիտինն 'ի մեղ Պամպիոսի համայնեցոյ զօրավարի, և առնուն շՄաթաթ, և մահն Միհրդատայ:

Յայնմ ժամանակի Պամպիոս համայնեցոյ զօրավար զօրօք բազմաք եկեալ հասեալ 'ի մէջերկրայս, զՍկաւրոս սպարապետ իւր Մարտիս առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ: Որոյ եկեալ, և ոչ պատահեալ Տիգրանայ, քանզի էր դարձեալ յիւր աշխարհն վասն խուճապանաց յեղուզակին, անցեալ Սկաւրոս 'ի Վամասկոս, և տեսեալ զքաղաքն առեալ 'ի Մեսեղայ և 'ի Վուդայ, զնոսս հարածեալ անտի, ինքն 'ի հրէաստան փաթայր հասանել 'ի վերայ Արիտարուզի օչնահանութեամբ եղբօր նորա երիցու՝ Հիւրկանու քահանայապետի, որդոյ Աղէքսանդրի:



Իսկ Պոմպիոս պատերազմեալ ընդ Միհրդատայ, առանէ սաստիկ ընդդիմակացութիւնս և ահագին մարտս, և վտանգի յոյժ. սակայն բազմութեանն յաղթեալ, փախտական լինի Միհրդատ 'ի կղմանս Պոմպիոսի: Յորմէ իբր թէ զերծեալ Պոմպիոս, որում ակն ոչ ունէր, և առեալ զՄագաբ, և կալեալ զորդի նորա զՄիհրդատ, նստուցանէ զոր 'ի քաղաքին. և ինքն ոչ հետամուտ լինի նմա, այլ ընդ Ատրիս 'ի հրէաստան փութայ հասանել: Եւ 'ի ձեռն հօրն պոնդապոյ Պիլատոսի զՄիհրդատ սպանանէ թռնաւոր դեղովք: Վ կայէ այսմ բանիս և Յովնէպոս 'ի ճառին, որ վտան Ապրտամին պատմէ, այսպէս ասելով. Պոմպէի հուպ յԱրիքոյլ հասանեն առեփք մահուանն Միհրդատայ:

Ժ.Օ.

Յաղագս յարձակմանն Տիգրանայ 'ի վերայ զօրացն հռոմայեցոց, և խոյս տալ Գարիանոսի, և արձակելոյ զմանուկն Միհրդատ:

Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն Հրէկցն նստուցեալ 'ի Արմաւիր և 'ի յաւանին Վարդգէսի, որ 'ի վերայ Վաստղ գետոյ, և գլեղազական բնաջինջ արարեալ 'ի լեռնէն, և զսուգն Միհրդատայ կատարեալ, խաղայ գնայ Մատրիս 'ի վերայ զօրացն հռոմայեցոց՝ առ 'ի վրէժս պահանջել: Ընդդէմ նորա գայ Գարիանոս սպարապետն հռոմայեցոց, զոր թողեալ էր Պոմպիոս 'ի դառնալն իւրում 'ի Հռոմ. և Գարիանոս ոչ իշխեաց 'ի դիմի հարկանել Տիգրանայ, դառնայ յԱփրատայ յԱդիպոտոս, զՊտղոմէոս ունելով պատճառս: Եւ գաղտնի հաշտութիւն խօսեցեալ ընդ Տիգրանայ, տայ զքերորդին նորա զպատանին Միհրդատ, զորդին Միհրդատայ, զոր կալեալ էր Պոմպէի 'ի Մագաբ, ասելով՝ թէ գաղտ գնաց:

Ժ.Ե.

Պատերազմ Արատոսի, և սատակումն նորին 'ի Տիգրանայ:

Օ կասկած առեալ հռոմայեցոցն, զԳարիանոս փոխեն, և զԱրատոս փոխանակ առաքեն. որոյ եկեալ և առեալ զամենայն գանձս

զտեալս 'ի տաճարին Ատուռոյ յԱրուսաղէմ, խաղայ 'ի վերայ Տիգրանայ: Եւ անցեալ ընդ Եփրատ, սատակի ամենայն զօրօքն հանդերձ 'ի պատերազմին ընդ Տիգրանայ: Օ որոյ ժողովեալ Տիգրանայ զգանձան, դառնայ 'ի Հայս:

Ժ.Զ.

Թէ որպէս Ասատիոս ընդդիմակաց եղեւ Տիգրանայ, և սպտամբէն Միհրդատայ, և շինեն զԱլեսարիայ:

Օ չարեալ հռոմայեցոց, առաքեն զԱսատիոս անթիւ զօրօք: Սա եկեալ և ընդդէմ կացեալ, շտայ թոյլ զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ և ստպատակել Մատրիս:

Օ այրու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգրանայ 'ի պատանին Միհրդատ, չկարծելով ինքեան քուեր սրդի, շտայ նմա մասն ինչ իշխանութեան, այլ և ոչ զիւր աշխարհն Վ ըաց: Եւ Միհրդատայ արհամարհութիւն կրեալ 'ի քեռոյն իւրմէ Տիգրանայ, սպտամբութեամբ անկանի առ Աեսար. իշխանութիւն դառեալ 'ի նմանէ զՊերզեայ քաղաքի, զօրավիզ օղնականութեան լինի Ադիպատրոսի հօր Հերովդի, Աեսարու հրամանաւ: Սա շինէ զՄագաբ ընդարձակագոյն և պայծառ շինուածովք, և անուանէ Աեսարիայ 'ի պատիւ Աեսարու: Եւ յայնմ հետէ բարձեալ լինի իշխանութիւն Հայոց 'ի քաղաքէն յայնմանէ:

Ժ.Ը.

Յաղագս միաբանութեան Տիգրանայ և Արտաշէի, և առաքեալ սպատակ 'ի Պաղեստինէ, և գերութիւն Հիւրկանու քահանայապետի և այլ բազմութեան Հրէկց:

Յետ այսր ամենայնի 'ի հիւանդութիւն եղեալ Տիգրան, աղերսէ 'ի սէր զԱրտաշէղ արքայ Պարսից, յաղագս հպարտութեան հօրն հանելով 'ի նոցանէ զնախագահութիւնն: Իսկ սա իւրովք կամօք զերկրորդականն ունելով ըստ իրաւանց, դարձուցանէ 'ի նա զնախագահութիւնն. և 'ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէղ, առնու 'ի նմանէ զօր յօղնականութիւն ինքեան: Յայնմ ժամանակի առեալ Տիգրանայ

դՔարդափրան նահապետ բռնապետնեաց նախարարութեանն, սպարապետ հայուցանէ Հայոց և Պարսից զօրաց, և առաքէ 'ի վերայ զօրացն հռովմայեցոց, հրաման տուեալ զքնակիչս աշխարհին Ասորոց և պաղեստինացոց 'ի հաշտութիւն հաւանութեան խօսել: Ամս ընդ առաջ լինի սմն Պակարոս անուն, որոյ հայրն թագաւոր լեալ Ասորոց, և ինքն խնամի Անտիոնեայ արխտարուղեանց: Աւ եկեալ առ Քարդափրան նահապետ բռնապետնեաց և սպարապետ Հայոց և Պարսից, և խոտանայ հինդ հարիւր կին զեղեղիկ և հազար քանքար սուրայ, զի օգնեացէ նոցա՝ ընկեկերով՝ 'ի թագաւորութենէ Հելեից զՀիւրկանոս, և թագաւորեցոցանէ զԱնտիոնոս:

Իբրև ետես Հիւրկանոս Հելեից քահանայապետ և թագաւոր, և Փասայեղոս եղբայր Հերովդէի, և թէ զզօրս հռոմայեցոց փախտապետ արարեալ, զամանս 'ի ծով, զամանս 'ի քաղաքս, խաղաղութեամբ ընդ երկիրն անցանէր Քարդափրան, խօսին և ինքեանք զխաղաղութիւն առ Քարդափրան: Աւ նորս զՊանէլ սմն սակառապետ արքային Հայոց, որ էր յազգէն գնունեաց, առաքէ Աշրուսաղէմ հանդերձ հեծելազօրու, իբր թէ 'ի պատճառս խաղաղութեան. բայց 'ի դաղանիս՝ օգնել Անտիոնեայ: Աւ Հիւրկանոս զսակառապետն ամենայն զօրօքն ոչ բնդուներ Աշրուսաղէմ, այլ միայն հինդ հարիւր հեծելով: Աւ սակառապետին դաւով խրատ տուեալ Հիւրկանու՝ զի առ Քարդափրան երթիցէ վասն աւերածոյ աշխարհին. և ինքն խոտանայր լինել բարեխօս: Աւ Հիւրկանու երգումն խնդրեալ 'ի Քարդափրանայ, երգնու նմա յարեզակն և յամենայն պաշտամունս իւրեանց երկնայինս և երկրայինս, և յարև Արտաշէզի և Տիգրանայ: Բնդ որ վտահայեալ Հիւրկանոս, թողու զՀերովդէս 'ի վերայ Աշրուսաղէմի, և զՓասայեղոս երեց եղբայր Հերովդէի առեալ ընդ իւր, զայ առ Քարդափրան 'ի ծովեզնն՝ 'ի դեօնն որ կոչէ Աքքոսիպոս:

Աւ Քարդափրան խորամանկութեամբ պատուէր գնտաս. և ինքն յանկարծակի գնացեալ անտի, մնացելոյ զօրացն հրաման տայր՝ 'ի բառն առնուլ գնտաս, և 'ի ձեռն Անտիոնի մասնել: Աւ Անտիոնոս 'ի վերայ Հիւրկանու անկեալ, զականջն ատամամբքն 'ի բաց կտրէր. զի թէ և այլ ժամանակ փոխեացի, անհնար լիցի նմա զքահանայապետութիւնն տնել, քանզի օրէնքն զօղջանդամն հրամայեն կայուցանել քահանայ:

Աւ Փասայեղ եղբայր Հերովդի իւրով զարկեալ զղլուս իւր զքարի, առաքեցաւ բժիշկ Անտիոնէ, իբր թէ բժշկել գնա. ելից զվէրն թուսաւոր դեղովք և վախճանեցոյց:

Աւ Քարդափրանայ հրաման տուեալ սակառապետին Հայոց Աշրուսաղէմ զՀերովդէս որսալ. իսկ սակառապետն ելեալ արտաքս քան զպարիսպն, զՀերովդէս պատրել. զոր չստեալ յանձն Հերովդի, այլ և ոչ կալ 'ի քաղաքին, երկուցեալ 'ի պատամանն անտիոնեանցն, 'ի դիշերի 'ի ծածուկ ընդանեօքն հանդերձ առ եղամայեցիս փախէր. 'ի Մասանդան յամուր թողեալ զընտանիսն, ինքն 'ի Հռոմ փութայր հասանել: Բայց զօրքն Հայոց ձեռնառութեամբ անտիոնեանցն Աշրուսաղէմ մտանեն՝ ոչ ինչ ումեք յնստեալ, բայց միայն զՀիւրկանու զինչն առնուին աւելի քան զերեքարիւր քանքար: Աւ ընդ դատան սոպատակեալ, զՀիւրկանեանն առեալ աւերէին. և զմարիսաղոց քաղաքն գերի առեալ, թագաւոր կայուցանելով զԱնտիոնոս: Աւ զՀիւրկանոս կապեալ ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն. և Տիգրան հրաման տայ Քարդափրանայ նստուցանել զլերին Հելեից՝ որ 'ի մարիսաղոց, 'ի քաղաքն Շամիրամայ: Աւ Տիգրանայ ոչ աւելի բաւեալ քան զերեամ՝ յետ այնորիկ՝ վախճանի, թագաւորեալ ամս երեսուն և երիս:

Ի

Այլ պատերազմ Հայոց ընդ զօրս հռոմայեցոց, և սպարապետ Սիդնի և Բենդիգեայ:

Հերովդէս անցեալ 'ի Հռովմէ առաջի Անտիոնի և Ալեսարու և սինկղետոսին, զինքեան միամտութիւն առ հռովմայեցիս պատմէ, և թագաւոր եղեալ հրէաստանի Անտիոնի, առնու իւր զօրովեզ օգնականութեան զԲենդիգիոս սպարապետ հռոմայեցոց զօրօք, 'ի պատերազմել ընդ զօրս Հայոց և քակել զԱնտիոնոս: Որոյ հասեալ Ասորիս, փախտապետ առնէ զզօրս Հայոց, և զՍիդնի թողեալ ընդդիմակաց Հայոց մերձ 'ի Աշփրատ, և զՊակարոս սպանեալ, զառնայ Աշրուսաղէմ 'ի վերայ Անտիոնի: Իսկ Հայոց միւսանդամ օգնականութիւն դտեալ 'ի Պարսից, գիմեալ 'ի վերայ Սիդնի, և փախտապետն 'ի Բենդիգիոս արկանեն, հեղումն արեանց առնելով անբաւս:

ԻԸ

Եթէ զհարգ Անտոնինոս իւրովի զիմեալ 'ի վերայ զօրացն Հայոց, առնու զՇամշատ:

Օչարեալ Անտոնինոս, իւրովի հասանէ ամենայն զօրօք հու- մայեցոց. և հասեալ 'ի Շամշատ, ըէ զմահն Տիգրանայ. և առեալ զքաղաքն, և թողեալ զՍովխոս զօրավիզն Հերովզի՝ մարա դնել ընդ Երուսաղէմի 'ի վերայ Անտիգոնի, և ինքն 'ի ձմերոց զնայ Ղազիպոս: Փութայր հասանել ըստ շամշութեան առնն կնամուրջ, ցանկութեամբ վառեալ 'ի Կղէսպատրեայ զՀայն եղիպտացոց: Այս Կղէսպատրեայ գուտր է Պտղմէս Պիտիսի, թուն Պտղմայիդ Կղէսպատրայ, և Հերովզի յոյժ սիրելի. վասն որոյ առաւել ևս յանձնէ Անտոնինոս զՀերովզէս Սովխայ: Որ և մարտուցեալ իսկ քաջապէս, առնու զԵրուսաղէմ. և սպանեալ զԱնտիգոնոս, թագաւորեցուցանէ զՀերովզէս ամենայն հրէաստանի և Պալիլեայ:

ԻԻ

Յաղազս թագաւորելոյն Արտաւազայ, և և պատերազմել ընդ հոռմայեցիս:

Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս 'ի գաւառս Աղիովտի և Աբերանայ, թողլով 'ի նոսա զմասն արքունի որ 'ի շէնս այնմ գաւառաց, հանդերձ առանձին մտից և ուժկաց, ըստ օրինակի ազգականացն՝ որ 'ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաւել թագաւորազնն քան զայնս արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ ՂԱՂբատ 'ի բնակութիւն արքայի:

Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և բմպելեաց պարապեալ, մօրից և եղեզնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զիտոզ արածելով. զիմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և սարուկ արդարեւ որովայնի լինելով, զպղբիս մեծացուցանէր: Սա բարեւրով յիւրոց զօրացն վասն առաւել պղերզութեանն և սաստիկ

որկորամարութեանն, մանաւանդ զի և զՄիջագետս Անտոնի հանեալ էր 'ի նմանէ, զայրացեալ՝ հրաման տայր զօր յարուցանել զբիւրաւորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լերինն Սաւկասու հանդերձ Աղուանիք և Վըքք. խաղայ իջանէ 'ի Միջագետս, և հարածական առնէ զգօրս հոռմայեցոց:

ԻԳ

Չերբակալ արարեալ Անտոնինոս Արտաւազդ:

Մընչեալ առիւծաբար զազանութեան Անտոնինոս, առաւել ևս թունեալ 'ի Կղէսպատրայ, քանզի քէն պահէր վասն ըկանաց իւրոյ հանոյն, որ 'ի Տիգրանայ. և ոչ միայն Հայոց, այլ բազում թագաւորաց լինէր մահաբեր, զի նոցայոցն տիրեացէ իշխանութեանց: Սակս որոյ բազում թագաւորս սպանեալ Անտոնի, 'ի Կղէսպատրայ հաւատայ գնոցա իշխանութիւնն, բայց 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնիէ, և որ միանգամ ընդ Աղատ զետոյն էին: Այս առեալ զբազմութիւն զօրացն, գիմէ 'ի վերայ Արտաւազդայ. և անցեալ ընդ Միջագետս, կտտրէ անհնարին զգօրս Հայոց, և ձերբակալ առնէ զարքայն նոցա: Այս դառնայ Ղազիպոս պարզեւել Կղէսպատրի զԱրտաւազդ որդի Տիգրանայ, հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին:

ԻԴ

Յաղազս թագաւորելոյն Արշամայ, և զառաջինն մասնաւոր հարկիլ Հայոց հոռմայեցոց, և արձակումն Հերկանոսի և վասն նորին վասնզ ազգին բազրատունեաց:

Իբրաներորդի ամի 'ի կատարումն աւուրց թագաւորութեանն Արշէզի, ժողովեալ զօրք Հայոց՝ հրամանաւ նորին թագաւորեցուցին 'ի վերայ ինքեանց զԱրշամ, որ և Արշամ, որդի Արտաշեսի եղբօր Տիգրանայ, հայր Աբգարու: Օսա ամանք Ղատրուց կոչեցին Սանովայ, ըստ յորովից սովորութեան կրկին առնելով անուանա. որպէս Հերովզէս Ազրիպաս, և որպէս Տիտոս Անտոնինոս և կամ Տիտոս Յատոս: Բայց

կարգեսցեն առ ոչ ինչ վնաս առնել քաղաքին: Բայց Արշամայ վարեալ զԹագաւորութիւնն ամս քսան, վախճանեցաւ:

ԻՕ.

Թագաւորութիւն Աբգարու, և մտանել բոլորովին Հայոց ընդ հարկաւ հռոմայեցւոց. և պատերազմ ընդ զօրս Հերովդի, և սպանանել զհզօրորդի նորա զՅուսիփ:

Թագաւորէ Աբգար որդի Արշամայ 'ի քսաներորդ ամի Արշաւրի արքայի Պարսից: Այս Աբգարէս կոչիւր աւագ այր՝ վասն առաւել հեղութեանն և իմաստութեանն. որում յետոյ և տիքն. զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ատրուց, կոչեցին Աբգարիտս: Ի սորա երկրորդ ամի Թագաւորութեանն հարկին հռոմայեցւոց բոլորովին ամենայն կողմանքն Հայոց: Քանզի հրամայեալ յԱւգոստոս կայսերէ, որպէս ասի 'ի Ղուկայ աւետարանին, աշխարհագիր լինել ընդ ամենայն տիեզերս. վասն որոյ և 'ի Հայս առաքեալ զործակաւք հռոմայեցւոց բերելով զպատկերն Աւգոստոսի կայսեր, կանգնեցին յամենայն մեհեանս: Օայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ:

Օամին աւուրբք լինի խռովութիւն 'ի մէջ Աբգարու և Հերովդի: Քանզի Հերովդի հրամայեալ զիւր պատկերն հապ 'ի կայսերական պատկերն կանգնել 'ի մեհեանս Հայոց, զոր չառեալ յանձն Աբգարու, պատճառս 'ի վերայ նորա յուզէր Հերովդէս: Առաքէ զզօրս Թրակացւոց և գերմանացւոց ասպատակաւ հինից յերկիրն Պարսից, հրաման տուեալ ընդ աշխարհն Աբգարու անցանել: Իսկ Աբգարու ոչ հաւատնեալ, ընդդիմանայ ասելով, եթէ ընդ անապատ է հրաման կայսեր անցանել զօրացոյ 'ի յերկիրն Պարսից: Ընդ որ դաւանացեալ Հերովդէս, անձամբ ինչ ոչ կարէր վճարել, պէս պէս ցաւոց զնա ըմբռնեալ՝ վասն որոյ 'ի Քրիստոս համարձակեցաւ, որպէս պատմէ Յովնէպոս. առաքէ զհզօրորդին իւր, որում տուեալ էր զգուտոր իւր որ էր յառաջ կին Փերուրի եղբօր իւրոյ: Աս նորա առեալ զբաղմութիւն զօրացն, դայ հասանէ յաշխարհն Միջագետաց, պատահէ Աբգարու 'ի զօրանիստ գաւառին Բուզնան. և մարտուցեալ մեռանի, և զօրքն փախստական

լինին: Այն հետայն վախճանի և Հերովդէս, և Հրէից ազգապետ ՂԱբբեղայոս նորին որդի Աւգոստոս կացուցանէ:

ԻԷ.

Շինուած Երեսիայ քաղաքի, և յեշտակունն սակաւուք ազգի մերոյ Լուսաւորչին:

Օկնի ոչ բազում աւուրց վախճանի Աւգոստոս, և փոխանակ նորա Թագաւորէ հռոմայեցւոց Տիբեր. և Պերմանիկոս կետար եղեալ, ձաղէ զառաքեալն 'ի Հռովմ զիշխանս Արշաւրի և Աբգարու, յաղագս պատերազմին նոցա՝ յորում սպանին զհզօրորդին Հերովդի: Ընդ որ խտացեալ Աբգարու, խորհի ապստամբութիւն և պատրաստութիւն պատերազմի: Յայնչամ շինէ քաղաք զտեղի պահպանութեան զնոզին Հայոց, ուր յառաջագոյն զգուշանային Եփրատու 'ի Կաստիսէ, որ կոչի Երեսիայ. և փոխէ 'ի նա զաբբեղնիս իւր՝ որ 'ի Մծբին, և զամենայն կուռս իւր, զՆաբոզ և զԲէլ և զԲաթնիքալ և զԹարաթայ, և զմատենան մեհեանիցն վարժարանին, և միանդամայն զգիւանս Թագաւորացն:

Յետ այր մեռեալ Արշաւր, Թագաւորէ 'ի վերայ Պարսից Արտաշէս որդի նորա: Արդ Թէպէտ և ոչ է կարգ պատմութեանս 'ի ժամանակի, և ոչ ըստ կարգի զոր ասելս ձեռնարկեցաք, այլ քանզի սերունդք Արշաւրի Թագաւորին են, և արիւն և հարազատութիւն Արտաշէսի որդւոյ նորա, սիկզն արացուք յաղագս պատուականութեան մարդկանն, նախակարգեալ 'ի զիրս առ ընթեր Արտաշէսի. զի իմացին որք ընթեռնունն, եթէ համազգիք քաջին են: Իսկ զկնի ապա նշանակեցուք և զժամանակ զալստեան հարցն նոցա 'ի Հայս, որք են կարենանք և սուրենանք, յորմէ սուրբն Պրիզոր, և յորմէ կամարականք, յորժամ 'ի շարի կարգին հասանիցեմք 'ի ժամանակն Թագաւորին, որ զնոսա ընկալաւ:

Բայց Աբգարու ոչ յաջողեցաւ խորհուրդն ապստամբութեան. զի խռովութիւն անկեալ 'ի մէջ ազգականաց իւրոց՝ Թագաւորութեանն Պարսից, զոր ժողովեալ անդր չուէր 'ի համոզել և 'ի դադարեցուցանել զնոսա:

ԻԸ

Յաղագս երթալոյն Աբգարու յարևելս և թագաւորեցուցանելոյ Պարսից զԱրտաշէս. և թէ զհարգ կարգեաց զեղբարս իւր, յորոց մեր Լուսաւորին և նորին ազգակիցքն:

Երթեալ Աբգարու յարևելս, դտանէ թագաւորեալ Պարսից զԱրտաշէս որդի Աբշաւրի, և ընդդիմացեալ նմա զեղբարս իւր. քանզի նա խորհէր ազգաւ 'ի վերայ նոցա թագաւորել, և նոքա ոչ առնուին յանձն: Այն որոյ պաշարեալ զնոսա Արտաշէսի և երկիւղ մահու եղեալ 'ի վերայ նոցա, բազում պատասմունք և անմիաբանութիւնք 'ի մէջ զորացն և այլ ազգականացն լինէին: Վրանզի էին Աբշաւրի թագաւորի որդիք երեք և դուստր մի. առաջին՝ նայն ինքն արքայն Արտաշէս, երկրորդն Սարէն, երրորդն Սուրէն, և քայր սոյին՝ որ անուանեալ կոչի Արշմ, կին զօրավարին ամենայն Արեաց 'ի Տօբէն կարգեցեալ:

Իսկ Աբգարու համոզեալ զնոսա խաղաղանալ, 'ի մէջ ամենեցունց հաստատէ զայս ինչ սահմանելով. թագաւորել Արտաշէսի հանդերձ ծննդովք իւրովք՝ որպէս և խորհեցան, և զեղբարսն անուանեալ Պահլաւս՝ յանուն քաղաքին իւրեանց և աշխարհին մեծի և քաջարեայ. որպէս զի լինել նոցա պատուականազոյն և առաջին քան զամենայն նախարարութիւնս Պարսից՝ որպէս արգարեւ զարմս թագաւորաց: Եւ դաշինս և երդմունս 'ի միջի հաստատեալ, զի թէ լեցի սպառել զարմից Արտաշէսի 'ի պատանեաց, նոքա մատնիցեն 'ի թագաւորութիւնն: Եւ արտաքոյ ցեղի նորա թագաւորեցելոյ՝ ցեղս որոշել զնոսա երիս, կոչմամբ այսպիսեաւ. Մարենի Պահլաւ, Սուրենի Պահլաւ, և զքոյրն՝ ասպահապետի Պահլաւ, յառնն տանուտերութենէ զանունն որոշեալ:

Եւ ասեն զսուրբն Վրիդոր 'ի սուրենեանն Պահլաւէ, և զկամսարականս 'ի կարենեանն Պահլաւէ: Եւ զայր զարմն զորպիսութիւն 'ի կարգին պատմեցուք. միայն նշանակելով այժմ առ ընթեր Արտաշէսի, զի ծանիցես զազգս զայս մեծ, թէ հաւատտի արիւն Աղարշակայ են. այս ինքն զարմ Աբշակայ մեծի, եղբօր Աղարշակայ:

Եւ այսոցիկ այսպէս կարգեցելոց, և զգիր ուխտին ընդ իւր առեալ Աբգարու՝ դառնայ ոչ առողջ մարմնով, այլ շարաշար ցաւովք ակտացեալ:

ԻԹ

Գարձ Աբգարու յարևելից և առ օգնականութիւն Արեւոյ 'ի մարտ ընդ Հերովդի շորորդապետի:

Իբրեւ դարձաւ Աբգարիս յարևելից, լուսւ նա զհաւիմայեցոց, թէ 'ի կատիւածանս անկեալ են վասն նորա, որպէս թէ զկնի զօրու գնաց յարևելս Աբգար: Այն որոյ յղէ առ դործակալս հաւիմայեցոց զպատճառս երթալոյն իւրոյ 'ի Պարսս, միանդամայն և զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս և ընդ եղբարս նորա՝ սոյ տանել: Եւ նոքա ոչ հաւատացին նմա. վասն զի և թշնամիք շարախօսէին զնմանէ, Պիղատոս և Հերովդէս շորորդապետ և խստնայ և Փիլիպպոս: Իսկ Աբգարու եկեալ 'ի քաղաքն իւր Մոգեսիայ, միաբանեաց ընդ Արեւոյ արքայի պատրիացոց, սասարս տալով նմա 'ի ձեռն Խոսրանայ սրունն արծրունայ՝ մարտնչել ընդ Հերովդէի. Վրանզի նախ զդուստրն Արեւոյ կին առեալ Հերովդէի, և անարգեալ 'ի բաց եթող. և զՀերովդիադայ մեկնեալ յառնէ իւրմէ եհան կենդանւոյն, յաղաղս որոյ սպանեալ զՅովհաննէս Մկրտիչ: Եւ եղև պատերազմ ընդ նա և ընդ Արեւ վասն անարգանաց դատերն. յորում սաստկապէս հարեալ սատակեցան զօրքն Հերովդի յօգնականութենէ քաջայն Հայոց. որպէս յաստուածային գողցես տեսութենէ, վրէժս հասուցանել ընդ մահուան Մկրտչին:

Լ

Առաքումն իշխանացն Աբգարու առ Մառինոս, յորում տեսին զՔրիստոս մեր Վրիտոսս, ուստի եղև սկիզբն հաւատացն Աբգարու:

Ընդ այն ժամանակս եկաց 'ի գործ հաղարապետութեան կայսեր 'ի վերայ փրենիկեցոց և պաղեստինացոց, Ասորոց և Միջագետաց Մառինոս որդի Ստորգեայ. առ որ առաքեաց Աբգարիսս երկուս 'ի զըլխաւորաց իւրոց, զՄար Իհար բղեշին Աղձնեաց, և զՇամշադրամ նահապետ ասպահանեաց տոհմին, և զԱնան հաւատարիմ իւր՝ 'ի քաղաքն Բեթբուրին, զպացուցանել նմա զպատճառս երթալոյն իւրոյ յա-

րևելս, ցուցանելով և զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս և ընդ Եղբարս իւր, և առնել զնա թիկունս օգնականութեան: Որոյ եկեալ զտին զնա յԱշխեթերոյս: Եւ նորա ընկալեալ զնոսա խաղաղութեամբ և մեծարանօք, առնէ պատասխանի Աբգարու. Մի կասկածեր 'ի կայսերէ սակս այնր, միայն զի զհարկեալն լիով փութացիս:

Եւ նոցա դարձեալ անտի, ելին յԱրուսաղէմ տեսնել զՓրկիչն մեր Վրիտտոս վասն լրոյ համբաւոց սքանչելագործութեանցն. որում և ակնատեսս եղեալ, պատմեցին Աբգարու: Ընդ որ զարմացեալ Աբգարու, հաւատաց ճշմարտապէս իբր յարդարեւ սրբի Աստուծոյ, և ասէ. Այն զօրութիւնք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ. զի չեք ոք 'ի մարդկանէ որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստուած: Եւ քանզի ապականեալ էր մարմինն իւր 'ի չարաչար ցաւոց, որ պատահեցին նմա 'ի Պարսից աշխարհին յառաջ քան զեւթն ամ, և 'ի մարդկանէ ոչ եղև նմա հնար բժշկութեան, ետ տանել նմա թուղթ աղաչանաց, զալ և բժշկել զնա 'ի ցաւոցն, օրինակ զայս:

ԼԵ

Թուղթ Աբգարու առ Փրկիչն Յիսուս Վրիտտոս:

Աբգար Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ և բարեբար, որ երևեցար աշխարհի երուսաղէմացոց, ողջոյն:

Եւ եալ է իմ վասն քոյ և վասն բժշկութեանդ, որ լինին 'ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի, տոս դու կուրաց տեսնել և կաղցոյ գնալ և զըստոս սրբել, և զայսս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եղի 'ի մտի իմում մի յերկուց աստի. կամ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից գործես զայդ. կամ թէ սրբի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես: Արդ վասն այնորիկ զրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեացես առ իս և բժշկեացես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Ես և լուայ զի Հրեայք տրանջեն զքէն և կամին չարչարել

զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և զեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս:

Որոյ տարեալ զթուղթն, պատահեցին նմա յԱրուսաղէմ: Չայս վկայէ աւետարանական բանն, եթէ էին տմանք 'ի հեթանոսաց ելելոյ առ նա. վասն որոյ ոչ համարձակին, որք լուանն, ասել ց՛՛խուսս, այլ ասեն ց՛՛փիլիսոս և ց՛՛Անդրեաս. և նոքա ասեն ց՛՛Յիսուս: Իսկ ինքն Փրկիչն յայնմ ժամանակի յորում կոչեացն զնա, ոչ առ յանձն. բայց թղթոյ արժանի արար զնա, որ ունի այսպէս:

ԼԿ

Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թուոմաս Առաքեալն հրամանաւ Փրկչին:

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Չի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատացեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատացեն և կեցցեն: Իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս զալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրև կատարեցից զայս, սպա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցասս քո բժշկեացէ, և կեանս քեզ և որոյ ընդ քեզ են շնորհեացէ:

Չայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յեղեատացոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի:

ԼԿ

Վարդութիւն յԱդեսիայ Առաքելոյն Թադէի, և պատճեն թղթոցն հնգից:

Բայց յեա համբառնալց Փրկչին մերոյ՝ թափմաս առաքեալ, մի յերկտասանիցն, առաքեաց մի յեթանամից անտի՝ զԹադէոս, 'ի քաղաքն Ադեսիայ՝ բժշկել զԱբգար և աւետարանել ըստ բանին Տեառն: Որոյ եկեալ 'ի տուն Տուբիայ իշխանի հրէի, զոր ասեն լինել

յազգէն բազրատունեաց . որոյ խուսեալ յԱրշամայ՝ ոչ ուրացաւ զհրեա-
 թիւնն ընդ այլ ազգականս իւր , այլ նոյն օրինօքն եկաց մինչև հաւատալ
 'ի Վրիտաս : Եւ էլ համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն : Եւ եալ
 Աբգարու ասէ . Կա է վասն որոյ գրեացն Յիսուս . և իսկոյն կոչեաց
 զնա : Եւ եղև 'ի մտանէն թաղէի , տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու
 յերեսն թաղէի . և յարուցեալ 'ի գահայեցն անկաւ 'ի վերայ երեսաց
 իւրոց և երկիր եպագ նմա . և զարմացան ամենայն իշխանքն՝ որ շարջն
 կային , զի ոչ գիտացին զտեսիլն : Ես է ցնա Աբգար . Եթէ դո՞ կցես
 արդարև աշակերտ օրհնորոցն Յիսուսի , զոր ասաց առաքել ինձ այսր , և
 կարող կցես բժշկել զցաւս իմ : Պատասխանի եա թաղէ . Եթէ հաւա-
 տացես 'ի Վրիտաս Յիսուս յորդին Ատուծոյ , ասցին ինդրուածք
 որտի քո : Ես է ցնա Աբգար . Ես հաւատացի 'ի նա և 'ի հայրն նորա .
 վասն որոյ կամեցայ առնուլ զգօրս իմ և դալ կոտորել զՀրեայնն , որ
 խաչեցին զնա , եթէ ոչ էր արդեւեալ վասն թագաւորութեանն հոս-
 մայեցւոյ :

Եւ յայտմ բանէ սկիզբն արարեալ թաղէի , աւետարանեաց նմա
 և քաղաքի նորա . և եղեալ ձեռն 'ի վերայ բժշկեաց զնա , և զԱբգիտ
 պատագրոս իշխան քաղաքին և պատուական յամենայն տանն արքայի .
 նա և զամենայն՝ որ էին 'ի քաղաքին հիւանդք և ախտաժեաք , բժը-
 կեաց : Եւ հաւատացին ամենեքեան . և մկրտեցաւ ինքն Աբգար և
 ամենայն քաղաքն . և զդուրս տաճարաց կոռցն փակեցին . և որ 'ի վերայ
 բազնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ . և
 ոչ զքր ածէր բռնութեամբ 'ի հաւատոս , բայց օր ըստ օրէ յաւելեալ 'ի
 հաւատացեալն բազմանային :

Իսկ Առաքելոյն թաղէի զխորարար ոմն մետաքսագործ մկրտեալ ,
 և անուն կոչեցեալ Ազգէ , ձեռնադրեալ 'ի վերայ Եղեսիայ , փոխանակ
 իւր թողու առ արքայի : Եւ իւր առեալ հրովարակ յԱբգարէ , զի
 ամենեքեան լուիցեն աւետարանին Վրիտաստի , գայ առ Սանատրուկ
 քեռարդի նորին , զոր կարգեալ էր 'ի վերայ աշխարհին և զօրացն : Բայց
 Աբգար յօժարեցաւ գրել թուղթ առ Տիրերիտ կայսր , որ ունի օրի-
 նակ զայս :

Թուղթ Աբգարու առ Տիրերիտ :

Աբգար արքայ Հայոց , տեսան իմում Տիրերի կայսեր հոսմայե-
 ցւոյ ինդալ :

Պիտեալ իմ , թէ ոչ ինչ ծածկի 'ի քումմէ թագաւորութենէդ ,
 այլ իբրև զմտերիմ քո՝ աւելի ևս իմացուցանեմ 'ի ձեռն գրոյ : Օր
 Հրեայք , որ բնակեալ են 'ի դաւառս պաղեստինացւոյ , ժողովեալ խա-
 չեցին զՎրիտաս առանց իրիք յանցանաց , 'ի վերայ մեծամեծ երախ-
 տեայն՝ զոր արար առ նոսա , նշանս և սքանչելիս , մինչև զմտեալս ան-
 դամ յարուցանել : Եւ զիտեա , զի զօրութիւնքս այս ոչ են սոսկ մար-
 դոյ , այլ Ատուծոյ : Օրի և 'ի ժամանակին յորում խաչեցինն զնա՝
 արեգակն խաւարեցաւ , և երկիր շարժեալ տատանեցաւ . և ինքն յեա
 երկոյ աւարց յարեաւ 'ի մեռելոց և երևեցաւ բազմաց : Եւ այժմ՝ յա-
 մենայն տեղիս անուն նորա 'ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծա-
 մեծս կատարէ . որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս : Եւ արդ այսու-
 հետև տերութիւնդ քո զիտէ , որ ինչ արժան է հրամայել 'ի վերայ
 ժողովրդեանն Հրեայ , որք զայն գործեցին , և գրել ընդ ամենայն տիե-
 ղերս , զի երկրպագեցեն Վրիտասի իբրև ճշմարիտ Ատուծոյ : Ողջ լեր :

Պատասխանի թղթոյն Աբգարու 'ի Տիրերայ :

Տիրերիտ կայսր հոսմայեցւոյ , Աբգարու թագաւորի Հայոց
 ինդալ :

Օրթուղթ մտերմութեանդ քո ընթերցան առաջի իմ , վասն որոյ
 շնորհակալութիւն 'ի մէջք քեզ հասցէ : Թեպէտ և 'ի բազմաց մեր
 լուեալ զայդ յառաջագոյն , եցոյց և Պիլատոս ստուգապէս վասն նշա-
 նացն նորա , և եթէ յեա յարութեանն 'ի մեռելոց հաւատարիմ եղև
 բազմաց , թէ Ատուած է : Ման որոյ և ես կամեցայ առնել զայդ , զոր
 և դու խորհեցար : Եւս քանզի սովորութիւն է հոսմայեցւոյ՝ աստուած
 'ի հրամանէ թագաւորի միայնոյ ոչ նստուցանել , մինչև ոչ փորձեալ
 քննեայի նա 'ի սինկղիստոն , վասն որոյ և իմ յայտնեալ զբանս զայս
 սինկղիստոսին , արհամարհեաց սինկղիստոն , զի ոչ քննեցաւ նա յառա-
 ջագոյն 'ի սմանէ : Եւս մեք առաք հրաման ամենայն ումեք որում և

հաճոյ թուեցի Յիսուս, ընկալցին զնա ընդ աստուածս. և մահ պնտցիկ սպառնացեալ, որ չարախօս կայցեն զքրիստոնէից: Աս վասն ժողովրդեանն Հրէից, որ յանգղնեցան խաչել զնա, զորմէ լուս՝ թէ ոչ արժանի խաչի էր նա և մահու, այլ պատուի և երկրպագութեան, յորժամ առից պարապումն 'ի պատերազմէս սպանիացոց սպտամբողաց յինէն, քննեալ հասուցից նոցա զարժանն:

Գարձեալ զրէ թուղթ Աբգար առ Տիրերիս:

Աբգար արքայ Հայոց, տեսան իմում Տիրերի կայսեր հառվայեցոց խնդալ:

Չթուղթ գրեալ ըստ արժանի քոյոյ տերութեանդ տեսի, և ընդ հրաման մտածութեանդ քո ուրախացայ. և եթէ ոչ ցաննուցուս ինձ, գործ սինդղխտարիդ յոյժ այսպնելի է. քանզի առ դոսս՝ 'ի քննութենէ մարդկան տուեալ լինի աստուածութիւնն: Աս արդ այսուհետեւ եթէ ոչ լինիցի հաճոյ Աստուածն մարդոյն, Աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայսմանէ մարդոյն արժան է քուել զԱստուածն: Բայց քեզ տեսան իմոյ հաճոյ թուեցի առաքել զայլ սք յԱրուստաղէմ փոխանակ Պիղատտի, զի լուծցի նա անարգանօք յիշխանութենէն՝ յոր կարգեցեր զնա. վասն զի արար զկամս Հրէիցն, և խաչեաց զՎարիստոս 'ի տարապարտուց առանց քոյոյ հրամանի: Ողջ լինել քեզ ըզձամ:

Չայս գրեալ Աբգարու, զհաւատար թղթոյն եզ 'ի գիւանի իւրում, որպէս և զայլն: Պարեաց և առ Ներսէհ մանուկ արքայ ասորեստանի 'ի Բաբելոն:

Թուղթ Աբգարու առ Ներսէհ:

Աբգար արքայ Հայոց, որդւոյ իմոյ Ներսէհի խնդալ:

Չգիր սղջունի քոյոյ տեսի, և զՊերոզ լուծի 'ի կապանաց, և զիմաս նորա թողի նմա. և եթէ կամ իցէ քեզ, կարդեացես զնա 'ի վերակացութիւն Նիմուէի, որպէս և կամիս: Այլ վասն այնր զի գրեցեր առ իս, թէ տուր ածել զայրդ բժիշկի, որ զնշանադ աննէ և քարոզէ այլ աստուած 'ի վեր քան զհսր և զջուր, զի տեսից և լուսոյ զմա, նա ոչ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր որդւոյն Աստուծոյ

արարչի հրոյ և ջրոյ. և վիճակ հասեալ 'ի կողմանս Հայոց առաքեցաւ: Բայց յընկերաց նորա գլխաւորաց Սիմոն անուն, նա 'ի կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ՝ լուիցես նմա, յորժամ և հայրն քս Արտաշէս: Աս նա բժշկեաց զամենայն հիւանդութիւնս, և ճանապարհ կենաց ցուցցէ:

Աս յաւել ևս զրել առ Արտաշէս արքայ Պարսից օրինակ զայս:

Թուղթ Աբգարու առ Արտաշէս:

Աբգար արքայ Հայոց, Արտաշէսի եղբօր իմում Պարսից արքայի խնդալ:

Պատեմ զի արդ լուեալ է քո վասն Յիսուսի Վարիստտի որդւոյն Աստուծոյ, զոր խաչեցին Հրէայքն. որ յարեան 'ի մեռելոց, և առաքեաց զաշակերտան իւր ընդ ամենայն տիեզերս՝ առուցանել ընդ հանուր: Աս մի յաշակերտաց նորա զլխաւորաց Սիմոն անուն՝ է 'ի կողմանս քոյոյ տերութեանդ: Արդ խնդիր արարեալ զացես զնա, և նա բժշկեաց զամենայն ախտս հիւանդութեանց՝ որ 'ի ձեզ, և ճանապարհ կենաց ցուցցէ. և հաւատացես բանի նորա, դու և եղբարք քո և ամենեքեան, որ հնազանդին քեզ կամուսր: Չի ախորժելի է ինձ, զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինչ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ:

Աս մինչ դեռ պատտաստանի այոց թղթոց ոչ էր ընկալեալ, վախճանի Աբգարիս, թաղաւորեալ ամս երեսուն և ութ:

ԼԳ

Յաղագս վիպութեան Առաքելոցն մերոց:

Յետ մահուանն Աբգարու բաժանի թաղաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թաղաւորել յԱդեմիայ, և քեռորդի նորա Սանատրուկ 'ի Հայս: Պատանէ որ ինչ առ սոցա ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուսա Առաքելոյն 'ի Հայս, և հաւատալ Սանատրոյ, և թողուլ զհաւատն յերկեղէ նախարարացն Հայոց, և կատարումն Առաքելոյն և որք ընդ նմա՝ 'ի գաւառին Շաւարշան՝ որ այժմ կոչի Արտաղ, և պատառումն քարին

և յիրար զալ և ընդունել զմարմին Առաքելայն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել 'ի դաշտին. և մարտիրոսանալ թաղաւորի դատերն Սանդխայ հուպ 'ի ճանապարհն. և աստ ուրեմն յայտնեալ նշխարաց երկրցունց, և փոխել յառապարն: Այս ամենայն, որպէս ասացաք, այլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ, ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք սճով երկրորդել: Վայնպէս և որ ինչ վասն կատարմանն Ադդէի աշակերտի Առաքելայն յորդուցն Աբղարու, գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ:

Որ իբրև թաղաւորեաց յետ մահուան հօրն, ոչ եղև ժառանգորդ հայրենի առաքինութեանն, այլ եբաց զառճարս կոսոյն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն: Աւ յղեաց առ Ադդէ, զի արասցէ նմա խոյր բեհեղեաց անդաւածով սոխոյ, որպէս յառաջագոյն առնէր հօրն նորա: Աւ պատասխանի ընկալաւ, թէ ոչ արացցեն ձեռք իմ խոյր դադաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Վրիստոսի Աստուծոյ կենդանւոյ: Աւ խոյն հրամայեաց միւսմ 'ի զինակրացն կարել զաստ նորա սրով: Որոյ երթեալ, և տեսեալ զնա՝ զի նստէր յաթառ վարդապետութեանն, էած սուսերաւ և 'ի բաց կարեաց զարուստ նորա. և նոյնժամոյն աւանդեաց զողին: Օչ այս ծայրաքաղ արարեալ համառօտ յիշատակեցաք, որպէս զառ 'ի յայլոց պատմեալ նախկին:

Բայց վիճակեցաւ շայց և Բարդուղիմէոս Առաքեալ, որ և կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս քաղաքի: Իսկ զՍիմոնէ, որ Պարսիցն վիճակեցաւ, ոչ զհաւատախն կարեմ պատմել՝ եթէ զինչ գործեաց և կամ ո՞ր կատարեցաւ: Վանդի պատմի յամանց, Սիմոնի ումեմն Առաքելոյ կատարիլ 'ի Վերիտիւրայ. և թէ նա իցէ ճշմարտիւ, և թէ էր աղաղաւ դալուստ նորա անդր, ոչ զիտեմ. այլ միայն նշանակեցի, զի գիտացես՝ թէ ոչ ինչ մնայ յիմեջ ջանից պատմել քեզ զամենայն, որ ինչ անկ է:

ԼԵ

Վասն Սանատրիկ թաղաւորութեանն, և սպանման ճննդոցն Աբղարու, և վասն Հեղինեայ տիկնոջ:

Սանատրուկ թաղաւորեալ, զորս ժողովէ 'ի ձեռն քաջացն բազրատունեաց և արժրունեաց դայեկաց իւրոց, իջանել տալ պատերազմ

ընդ որդիան Աբղարու, զի բոլորն տիրեցէ թաղաւորութեան: Աւ մինչ դեռ նա յայտմ էր, աստուածային իմն ակնարկութեամբ խնդրեցաւ վրէժ մահուանն Ադդէի յորդուցն Աբղարու: Վանդի սիւն կճեայ կանդնել տայր յԱդդէսիայ 'ի վերնաստունն ապարանից իւրոց, և ինքն 'ի ներքոյ կալով հրամայէր զորպէսն առնել. որ զերծեալ յառնողայն, անկաւ 'ի վերայ նորա և խորտակեաց զտոսն և սատակեաց:

Աւ խոյն պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ, խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեաց զնստս 'ի քրիստոնէութեան հաւատոց, և նոքա տացեն զքաղաքն 'ի ձեռս և զգանձս թաղաւորին: Օր արարեալ, յետոյ ստեաց. նա և զամենայն զաւակ տանն Աբղարու մաշեաց սրով, բայց յաղջկանց՝ զոր եհան 'ի քաղաքէն բնակել 'ի կողմանս Հաշանից: Սապէս և զղլուխ կանանցն Աբղարու, որում անուն էր Հեղինէ, առաքեաց յիւրային քաղաքն բնակել 'ի Խառան, 'ի վերայ թողլով նմա զտիկնութիւնն ամենայն Սիջազետաց, փոխանակ բարեացն զոր գտեալ էր 'ի ձեռն նորա յԱբղարէ:

Այս Հեղինէ զարդարեալ հաւատովք, որպէս և զայր իւր զԱբղար, ոչ հանդուրժեաց բնակել 'ի մէջ կռապաշտիցն. այլ չողաւ յԱբրուստողէմ յառուրս Կլաւդեայ, 'ի սովին՝ զոր մարդարեացաւն Աբարս. և սուեալ զամենայն դանձս իւր յԱդիպատս, և գնեաց ցորեան բազում յոյժ և բաշխեաց ամենայն կարօտերոց. որում և վիայէ Յովնէպոս. որոյ և շիրիմ նշանաւոր կայ առաջի դրանն յԱբրուստողէմ մինչև ցայսօր ժամանակի:

ԼԹ

Յաղագս նորոգման Մծբին քաղաքի, և անուանակոչութեան Սանատրիկ, և մահուան նորին:

Այլ որ ինչ գործք եղեալ Սանատրիկ, ոչ ինչ յիշատակաց արժանի համարեցաք բայց 'ի շնուածոց Մծբին քաղաքի: Օր 'ի շարժմանէ խախտեալ, քակեաց և վերստին շինեաց պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ. և զինքն անդրի 'ի միջին հաստատեաց, մի դրամ 'ի ձեռն ունելով. որ նշանակէ պայպիսի ինչ, եթէ 'ի շինել քաղաքիս ամենայն դանձքս ծախեցան, և այս միայն մնաց:

Բայց թէ ընդէր Սանատրուկ կոչեցաւ, ասելի է: Վանդի յաւուրս ձմեռացոյ ճանապարհորդեալ 'ի Հայս քոյր Արգարու Օդէ, պատահէ բքոյ 'ի լեբինս Արգուաց. զրուեաց զամենեսեան մրբիկ, մինչ ոչ գիտեալով ընկեր զնկեր' ընդ 'որ վարեցաւ: Իսկ դայեկին նորա Սանտայ, քեռ Բիւրատայ բազրատունայ, կնոջ Խտարնայ արծրունայ, ասեալ զմանուկն, քանզի տղայ էր, եդ 'ի մէջ ստեանց իւրոց, մնալով 'ի ներքոյ ձեանն զերիս տիւս և զերիս գիշերս: Չորմէ առապելարանն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յատուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն: Բայց որչափ եղաք վերահասու, այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրակն լեալ, պատահեաց մանկանն և դայեկին: Արդ կոչեցաւ Սանատրուկ, 'ի դայեկին զանուանակոչութիւնն ասեալ, որպէս թէ տուրք Սանտայ:

Սա թագաւորեալ յերկրասաներորդի ամի Արտաշէսի Պարսից արքայի, կեցեալ ամն երեսուն՝ մեռաւ յորտի, նեախ ուրուք դիպեալ փորոսեացն. իբր թէ վրէժս հատուցեալ ընդ չարչարման սրբոյ դատերն: Ղ Նրուբնայ որդի Ափշագարաց դպրի գրեաց զամենայն գործս, որ ինչ յաւուրս Արգարու և Սանատրկոյ, և եդ 'ի դիւանին յԱդեսիայ:

ԼԵ

Թագաւորել Արուանդայ և կոտորել զորդին Սանատրկոյ, և գերծանել Արտաշէսի փախտեամբ:

Յետ մահուանն Սանատրկոյ շիթի թագաւորութիւնն: Վանդի Արուանդ ամն, որդի կնոջ արշակունայ, թագաւորէ յութերորդ ամի Վարեհի վերջնայ: Աւ ունին զրոյցք յաղաղս նորա այսպէս: Աին ամն յազդէ արշակունեաց, անձամբ խարստի և խշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմադրուեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարդ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՍիտուաւրս: Աւ 'ի զարդանալ մանկանցն կոչեն անուանս Արուանդ և Արուաղ: Աւ 'ի չափ հասեալ Արուանդայ, լինի սրտեայ և անդամովք յաղթ: Սա 'ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ Սանատրկոյ, գտանի երեկելի մինչև ամենայն նախարարացն Հայոց առաջին լինել և խոնարհութեամբ

և առատաձեռնութեամբ զամենայն ոք յինքն յանդուցաներ: Աւ 'ի մեռանէն Սանատրկոյ, միարանեալ թագաւորեցոյցին զնա առանց արանց յազդէն բազրատունեաց լինել թագադիր:

Բայց 'ի թագաւորելն իւրում Արուանդ, կտակած ունելով յորդուցն Սանատրկոյ, կոտորէ զամենեսեան: Թափ թէ վրէժս հատուցաւ սպանման որդուցն Արգարու: Բայց մի ամն տղայ Արտաշէս անուն, զոր ասեալ տընտուի նորա, վախեաւ 'ի կողմանս Հերայ՝ 'ի հովուականս Սոլիստանի, ըւր աննելով դայեկի նորա Սմբատայ, որդոյ Բիւրատայ բազրատունայ, 'ի Սպեր գաւառի, 'ի շէնն Սմբատուանի: Արդ իբրև ըէ Սմբատ, որդի Բիւրատայ, զթթն Սանատրկոյ և զգոյժ կոտորման որդուց նորա, ասեալ զերկուս դատերս իւր՝ զՍմբատանոյչ և զՍմբատուբհի, նատուցանէ 'ի Բայբերդի, արս քաջս թողլով 'ի վերայ ամրոցին. և ինքն հանդերձ միով կնաւ իւրով և սակաւ արամբք գայ անցանէ 'ի խնդիր մանկանն Արտաշէսի: Որում իրազգած եղեալ արքային Արուանդայ, հետայոյցս առաքէ. վասն որոյ բովանդակ ժամանակս ընդ երես լեբանց և գաշտայ սլլակերպեալ շքելով հետի հանդերձ մանկամբն, մուցանէ 'ի հովուականս և յանդէորդս, մինչև պարսպ գտեալ ժամ, անցանէ առ Վարեհ արքայ Պարսից: Աւ քանզի այր քաջ էր Սմբատ և ծանօթ յառաջագոյն, պատուի մեծապէս ընդ զօրագլխան Պարսից, որպէս և մանուկն ընդ որդիս թագաւորին, ասելն բնակելոյ ասեալ զՎաստ և զՈղոմն կոչեցեալ գաւառս:

ԼԸ

Որ ինչ Արուանդայ վասն 'ի բուռն անելոյ զմանուկն Արտաշէս. և 'ի բոց թողոյ զՄեջպոտս:

Բայց Արուանդայ զմտաւ անեալ, թէ սրբիտի չար թագաւորութեան նորա սնանի 'ի Մարս, խէթ սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն: Հանապաղ 'ի յարթնութեան յայն հոգալով, նա և 'ի քուն անուրջս ահաղկնս նմին իրի տեսաներ: Ս շան որոյ 'ի ձեռն հրեշտակաց և պատարագաց խնդրել հաշտեցուցանել զարքայն Պարսից, տալ 'ի ձեռս զԱրտաշէս. ասելով, թէ Արիւն իմ և հարազատութիւն, ընդէր

անուցանես զՄարդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս, ընելով բանից Սմբատայ յեղուզակի, որ ասէ, թէ որդի է Արտաշէս Սանատրիոյ. և զորդի հախուց և զանդէորդայ ջանայ տանել արշակունի, և արին քո և հարազատութիւն համբաւելով զնմանէ: Աս չէ որդի Սանատրիոյ, այլ ընդ խաբս գտեալ Սմբատայ զմար մն տղայ, բաջաղի: Այնպէս և առ Սմբատ յէր բազում անգամ, թէ ընդէր այդ քո անտի աշխատութիւնդ. խաբեալ 'ի սանտուէդ, անուցանես զորդի Մարիդ հակառակ ինձ: Աս ըսէ ոչ սիրելոյ բանս պատասխանեաց: Յայնժամ առաքէ Արուանդ և սատակէ զքաջն 'ի Բայրերդի, զերեալ զգտերնս Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարպէս:

Բայց թիկունս տանել Արուանդայ զհոռվմոյեցիս՝ ոչ ինչ վտանդի 'ի թագաւորութեանն Վէպիանու և Տիտոսի, թողլով 'ի նոսա զՄիջագետս: Աս յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց 'ի Միջագետաց, և հարկս առաւելագոյնս տայր Արուանդ 'ի Հայոց: Իսկ գործակարացն հոռվմոյեցոց մեծապէս հանդերձեալ զքաղաքն Ադեսիայ, 'ի նմա հաստատեն զտունս զանձուց հարկաց ժողովելոց 'ի Հայոց, 'ի Միջագետաց և յատրեստանեաց: Աս ժողովն 'ի նմա զամենայն զիւանս, և կարգեն զպրոցս երկուս. մի՝ զրունն իւրեանց զԱտրին, և մեւս ևս զՅոյնն. և զզիւանն հարկաց և զմեհենականն, որ կայր 'ի Մենայ պնդագացոց, անդր փոխեն:

ԼԹ

Յաղագս շնուածի Երուանդաշատ քաղաքի:

Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյն. քանզի էր հեռացեալ գետն Արափս, և յերկարել ձմերայնոյն, և 'ի դառնահատ հնչմանէ հիւսիսայ պողպեալ ձուլեալ վտակն, ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտաներ տեղոյ: Բնդ որ նեղեալ Արուանդայ, նա և ամբազունի ևս տեղոյ եղեալ 'ի ինդիր, փոխէ զարքունիսն յարեմուտս կոչս 'ի քարակաուր մի բլուր, զորով պատուեալ Արափսայ ընդդէմ Ախուրեանն հասի գետ: Պարպէ զբլուրն, և 'ի ներքաղոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կարեալ զքարինան

մինչև յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրոյ գետոյն 'ի փորուածն. յըմպելեաց պատրաստութիւն: Օ միջնաբերդն ամբացուցանէր բարձր պարսպք, և դրունս պղնձիս կանգնէր 'ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս 'ի ներքուտ 'ի վեր մինչև ցղուռնն. և 'ի նմա որդայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանայն, որպէս զի բմբունացի՝ թէ սր գալտ ելանելով դաւել կամիցի զարքայն: Աս էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն ելեմտից ճանապարհ տունջենային, իսկ մեան դիշերային և մարդադաւայ:

Խ

Թէ որպէս շինեաց զԲաղարան քաղաք կոչոց:

Բայց Արուանդ շինեալ զքաղաքն իւր, և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրաց ուրոյն 'ի կոչոյն, զոր ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել 'ի քաղաքն, զի մի 'ի դաշն և 'ի զահել անդ աշխարհի, ոչ զղուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռադոյն 'ի նմանն իւր քառասուն սուպարիտաւ զհիւսիսով՝ նման իւր քաղաքին շինեաց քաղաք փոքր 'ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բաղարան, այս ինքն թէ 'ի նմա յորինեալ է զկազմութիւն բաղնայն. և փոխեաց անդր զամենայն զիւռուսն որ յԱրմաւիր: Աս մեհեանս շինեալ, զեղլայր իւր զԱրուալ քրմնպետ կացուցանէր:

ԽԼ

Վասն անկելոյ զանտաւն, որ կոչի Ծննդոց:

Տնիկ և մայրի մեծ 'ի հիւսիսայ կողմանէ գետոյն, և սրմովք ամբացուցանէ, արդելլով 'ի ներքս այժեմունս երազանս, և զեղանց և զեղջերուաց աղդ, և ցիւս և վարագո. որք 'ի բազմութիւն աճեցեալ լցին զանտաւն, որովք սարխանայր թագաւորն յաւուրս որոտց: Աս անուանէ զանտաւն Ծննդոց:

ԽԲ

Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերս:

Վաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք: Վասն զի զմիջոյ հայտին մեծի ընտ մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբրոյն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն պղեստանոյ, իբր զարտեանաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կազմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարևանդաց համեմատ: Իսկ 'ի հարաւոյ հարթութիւն դաշտաց, ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. իսկ գետն բերանացեալ գարաւանդօք ափանցն՝ զերկթերթիան նշանակէ շրթունա: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անբթթելի իմն գողցես 'ի բարձրաւանդակ թագաւորանիսան զհայեցուածն ունի. և արդարեւ բերրի և թագաւորական դաստակերան:

Չայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ՝ պարզէէ մեծն Տրդատ մարդկան ազգին կամարականաց, որպէս զմտերմաց և արեան կցորդաց ազգին արշակունեաց. զոր յիւրում տեղին պատմեցուք:

Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլով ական հայեցուածով. վասն որոյ ընդ այդանալ աշարջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմն օրձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և 'ի հայեցուածոյն դժնութենէ ասեն պայթել օրձաքար վիմայն: Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւական ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոյն անուամբ վնասեցէ զորս կամի:

ԽԳ

Թէ որպէս Սմբատոյ օգնական արարեալ զնախարարս Պարսից՝ ինդրէ թագաւորեցուցանել զԱրտաշէս:

Իսկ 'ի զարգանալ մանկանն Արտաշիսի, և 'ի բազում արութիւնս քաջութեան ցուցանել դայեկին Սմբատոյ, հաճեալ ընդ նա նախարարք Արեաց, մաղթեն զթագաւորն տալ նմա պարգևս զինչ և խնդրեցէ:

Եւ յանձն առեալ թագաւորին, ասէ յնախարարն. Տեսէք զինչ կամի այրն քաջ: Եւ նոքա ասեն. Անմահ բարերարութիւնդ քո. ոչ այլ ինչ կամի Սմբատ, քան թէ զարինդ քո և հարազատութիւն, զԱրտաշէս որդի Սանատրիկոյ զմերժեալն 'ի թագաւորութենէ իւրմէ, հաստատել յիւրում թագաւորութեանն: Եւ յանձն առեալ՝ արքային արքայից, տայ 'ի ձեռն Սմբատոյ մասն ինչ 'ի զօրացն ասորեստանի և զզօրս Արարպատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեցեն 'ի դահն հայրենի:

ԽԴ

Յաղագս լեւոյ Երուանդայ զգալն Արտաշիսի, և գումարեալ զզօրս 'ի պարաստութիւն պատերազմի:

Լուր հասանէ առ Երուանդ յուտեացուց դաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօր բազում 'ի ձեռն Սմբատոյ, զի 'ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս՝ 'ի թագաւորութիւն իւր: Չայս իբրև լուս Երուանդ, եթող անդէն զբազումն 'ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց 'ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զզօրս շայոյ և զՎրաց և զկողմանցն Կեսարու, այլ և զՍիջաւ դետացն աղբւսիք և տրովք: Եւ էին աւուրք դարնայնոյ. վասն որոյ երազ ժողովեցան զօրքն ամենայն. նա և Արգամ տանուտէր ազգին Սուրացան, որ 'ի ծննդոյն Աթահակայ, ամբօս հետևակաւ: Վասն զի էր Երուանդայ դարձուցեալ 'ի նա զգահն երկրորդական, զոր հանեալ էր 'ի նոցանէ Տիգրանայ և տուեալ էր իւրում քեռաունն Միհրդատայ. իսկ յետ մահուանն Միհրդատոյ՝ ոչ լինէր ումէք տուեալ, մինչև Երուանդայ դարձուցանել զնա առ Արգամ: Եւ ոչ միայն նմա, այլ և ամենայն նախարարացն տայր պարգևս, և զօրացն ամենեցուն պարգևէր առատապէս:

ԽԵ

Թէ որպէս ընդ մուսն Արտաշիսի յիւր աշխարհն աջողեցաւ գործն:

Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսի աճապարէր հասանել 'ի սահմանս ուտեացուց: Բնդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուանդ: Չայն իբրև լուսն այլ նա-

խարաքն Հայոց՝ լուծանէին Լբանէին և զատել Լճրուանդայ խորհէին . նա և զայն ևս տեսանէին, եթէ զօրքն հռովմայեցոց ոչ հասանեն նմա 'ի թիկունս: Իսկ Լճրուանդ առաւել ևս յորդորագոյն տայր զպարզեան, և բաշխէր միոյ միոյ սամբը 'ի նոցանէ զգանձան. և որչափ առատանայր, առաւել ևս առելի լինէր: Վրանդի գիտէին ամենեքեան, եթէ ոչ առատութեան տայ, այլ առ երկիւղի վասնէ: Եւ ոչ այնչափ սիրելի զայնտիկ առնէր՝ որոց շատն տայր, քան թէ թշնամի զայն՝ որոց ոչն տայր պերճագոյնս:

Խ.Օ.

Երուանդայ պատերազմ ընդ Արտաշիսի և փախուստ, և առումն քաղաքի նորա և մահ:

Բայց Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ ելանէ առ ամին ծովուն Պակեղամայ, զթիկամբք Արագածն կոչեցեալ լերինն. ածապարէին հասանել 'ի բանակն Լճրուանդայ: Եւ ոչնչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա, միայն կատկածէին 'ի Սուբացանէն Արգամայ, զի այր քաջ էր և բազմաց տէր տիգաւորաց: Եւ ճամբարն Լճրուանդայ էր բացագոյն 'ի քաղաքէ նորին աւելի քան երեքհարեւր ասպարիսաւ 'ի հիւսիսոյ 'ի վերայ գետոյն Ախուրեանս: Օայս իբրև լսէր Լճրուանդ, հաներ ընդ առաջ զբազմութիւն զօրացն, և ճակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն: Իսկ Արտաշիսի առաքեալ պատգամ առ Արգամ նահապետ Սուբացանաց հանդերձ բազում երգամանք, թողուլ 'ի վերայ նորա զոր ինչ գտեալ է Աճրուանդայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զի զԼճրուանդ թողեալ 'ի բաց զնասցէ:

Եւ իբրև հանդէպ ճակատուն Լճրուանդայ ելին նշանք Արտաշիսի, Արգամայ առեալ զբազմութիւն հետեակացն 'ի կողմ ելանէր: Եւ Սմբատ հրամայէր զհողան պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ զճակատն իւր, իբրև զարծիւ յերամն կաքաւուց խոյանայր: Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ և յահեակ թեան էին, 'ի նա խառնեալ միանային: Եւ զօրքն Վրաց, հանդերձ արքայիւն իւրեանց Փարսմանաւ, թեպէտ և յանդուղն յարձակմամբ յառաջեալ բախէին, արագապէս դանային 'ի մեւս կողմն փախուցեալ: Եւ անդ էր տեսանել կտորած անհնարին զգնդին Լճրուանդայ և զօրաց Սիջադեւոց: Եւ 'ի խառ-

նակել այսպիսի ճակատուց, պատահեն Արտաշիսի արք քաջք տաւրացիք, որոց զոգիս 'ի բաց եղեալ, Լճրուանդայ պայմանեալ՝ տպանանել զԱրտաշէս: Որոց զիպեալ հետի ընդ մէջ անցանէր Պակասի որդի սարնտուին Արտաշիսի, և սատակեալ գնտա, ուր և զկէս դիմաց նորա 'ի վայր բերեալ սուսերաւ, զյաղթութիւն ստացեալ՝ մեռանի 'ի վերայ այսպիսեացս: Եւ մնացեալ զօրքն 'ի փախուստ դառնային:

Իսկ Լճրուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ, ելանէ 'ի խանս կարգեալս 'ի բանակէն իւրմէ 'ի քաղաքն իւր, հեծեալ 'ի նոր ձիս հանդոյց 'ի հանդուցէ փախել: Եւ քաջն Սմբատ զհետ մտեալ, սատակագոյն վարէր գնա 'ի գիշերի մինչև ցրուան քաղաքին: Եւ Սմբաց զօրացն անցեալ 'ի կողմն երուանդական գնդին, նսեմաւ 'ի վերայ դիականցն բանակէին: Իսկ Արտաշիսի հասեալ Լճրուանդայ, ընդ շրջապատեալ առադաստն 'ի կաշոյ և 'ի կտաւէ պարսպին էջ, և 'ի խորանս նորա բնակեցաւ զայն գիշեր: Եւ այդուն եղէլոյ՝ տիրաբար արարեալ, զպաննալսն թաղել հրամայեաց. և անուանեաց զհովան, ուր 'ի վերայ դիակացն բանակեցաւ, Սմբաց մարդ. և զտեղի ճակատուն՝ Լճրուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայտ տեղաջ վանեաց զԼճրուանդ: Եւ ինքն շուեաց 'ի քաղաքն Լճրուանդայ. յառաջ քան զմիջօրեայ հասեալ 'ի դատտակերան Լճրուանդայ, և միաբան գաջմամբ հրամայեաց արաղակել զօրացն՝ Սար ամատ, որ թարգմանի Սարս եկն. յիշեցուցանելով զթշնամանան, զոր յղէր Լճրուանդ առ թաղաւորն Պարսից և առ Սմբատ, Սար գնա կոչելով: Յայտ 'ի սոյն ձայն անուանեցաւ դատտակերան Սարմէտ, իբր 'ի կամաց Արտաշիսի, բառնալ զանուն Լճրուանդայ 'ի տեղաջէն. այս պատճառ է անուանակոթեան դատտակերանին:

Բայց Սմբատայ գիշերոյն զհետ Լճրուանդայ եկեալ սակաւ վաշտկանաւ, զդուան քաղաքին պահէր մինչև 'ի գալն Արտաշիսի և զօրացն ամենեցուն: Եւ 'ի մարտնչել քաջացն ընդ ամբոցին, անձնատուրք եղեն մարդիկ ամբոցին, և բացին զդուան քաղաքին: Իսկ մի ոմն 'ի զինուորացն մտեալ եհար վաղերբ զգլուին Լճրուանդայ, և ցրուեաց զուղիղն 'ի յատակս տանն. և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթաղաւորութիւնն ամն քանն: Բայց Արտաշիսի յիշեալ՝ թէ խառնուած արշակունուց է Լճրուանդ, հրամայէ զգի նորա թաղել մահարձանօք:

ԽԼԷ

Թագաւորէլ Արտաշիսի և առնել բարի իւրոց երախտաւորացն:

Յետ մահուանն Արուանդայ մտեալ Սմբատայ զարքունականն յուղէր զգանձան. և գտեալ զԹագն Սանատրիոյ արքայի, գնէ 'ի գլուխն Արտաշիսի և Թագաւորեցուցանէ 'ի վերայ ամենայն երկրիս Հայոց 'ի քրան և իններորդի ամի Պարեհի Պարսից արքայի: Իսկ Արտաշիսի առեալ զԹագաւորութիւնն, սայ պարգևս զօրացն Սարայ և Պարսից, և արձակեաց յաշխարհն իւրեանց: Տայ և առնն քաջին և պատուականին Արդամայ զխոտացեալ գահն երկրորդական, և պսակ յակնԹախապ, և զինդ յերկտին ականջն, և կարմիր զգետ միոյ ստինն. սարգալ ունել սակի և պատուաքաղ, և սկեղինօք ըմպել նուազօք: Աւ ոչ ինչ ընդ հատ յայոց պատուոց սայ գայեկին իւրոյ Սմբատայ, բայց միայն յերկուց զնդայ և 'ի կարմիր կոշիկ. և աւելի քան զհայրենական զեր Թաղակապ ասպետութիւնն և զիշխանութիւն արևմտեայ զօրուն, հաւատայ 'ի նա զամենայն զօրս Հայոց, և զբարբ աշխարհիս զգործակար և զհամօրէն տունն արքունի: Աւ զԱրտէս զորդի որդւոյ իւրոյ ստընտուին Պիտակայ՝ ազգ զնա սերելով, անուն կոչէ զնահատակութեանցն հօրն, Պիտակայեան. քանզի, որպէս ասացաքն, զկէս զիմացն առեւրա 'ի վայր բերին 'ի վերայ Արտաշիսի:

Պատմի սորա 'ի նոյն աւուրս սերեալ ազգ և զորդին Տուրայ, պատանիս հինգ հանդերձ տասամբ, յանուն հօրն իւրեանց արունիս. ոչ վասն արութեան ինչ զործոց, այլ միայն վասն քաութեան հօրն նոցա, զոր առնէր 'ի տանէն արքայի առ Սմբատ, քանզի ընտանի էր Արուանդայ, սակս նորին և սպանաւ 'ի նմանէ:

ԽԼԸ

Սպանումն Արուաղայ, և շինել միւսոյ Բագարանի, և հարկիլ Արտաշիսի հօովմայեցոց:

Օկնի սյարիկ հրաման սայ Սմբատայ, երթալ յամուրն Բագարան, որ հուպ 'ի քաղաքն Արուանդայ 'ի վերայ Ախուրեան գետոյ, զի

սպանցէ զԱրուաղ եղբայր Արուանդայ: Օր կալեալ Սմբատայ, երկան զուրանէ հրամայէ կապել, և ընկերուլ 'ի պտոյտ մի գետոյն: Աւ 'ի տեղի նորա 'ի վերայ բաղնայն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ մուկի որումն երազահանի, որ յայն սակս և Սոգաշաէ անուն կարգային: Աւ սպա աւար առեալ զգանձան Արուաղայ, և ծառայս անձինս հինգ հարեւր, նա և զընտիր ընտիր գանձուցն մեհենից, բերէ Արտաշիսի: Աւ Արտաշիս պարգևէ Սմբատայ զծառայսն Արուաղայ. բայց զգանձան հրամայէ տանել Պարեհի Պարսից արքայի, յաւելլով և ինքն 'ի գանձան, 'ի շնորհակալութեան պատիւ իբրու հօր և օգնականի:

Յայնժամ Սմբատայ զծառայսն Արուաղայ, զոր գերեացն 'ի Բագարանէ, տարեալ ընտելեցուցանէ 'ի Թիխանց Մասեաց, 'ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերան: Ինքն անցանէ 'ի Պարսս ընծայատար Պարեհի, ոչ ինչ փոյթ առնելով զհօովմայեցոց իշխանութեանէ: Իսկ 'ի զնան Սմբատայ 'ի Պարսս հասանեն հարկահանք կայսեր և սպոյ ծանր 'ի սահման Հայոց, զորս մաղթեալ Արտաշիսի և կրկին տուեալ զհարկան, հաշտեցուցանէ: Աւ զայս մեղ ստուգապէս պատմէ Ուղիւպ քուրմ Հանույ, զբող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեղ առաջի, որում և Պարսից մատենաքն վկայեն և Հայոց երգն վկասանաց:

ԽԼԹ

Վասն շինուածոյ Արտաշատ քաղաքի:

Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ 'ի վկայանանայն, որ պատմին 'ի Պաղթան. շինել զբաղաքն, և խնամութիւն ընդ Աւանք և ծնունդք զարմիցն, և իբր արժանք Սաթիկան ընդ վեշապազունն՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմս Աշղահակայ, որ ունին գամենայն գառ ստորտոյն Մասեաց. մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութեանէն, և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ որդւոցն Արտաշիսի և զբողութիւն ընդ միմեանս 'ի ձեռն կանանցն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վկայանանայն. բայց յիշատակեցուք և մեք կարճառօտիք, և զայլաբանութիւնն ճշմարտեցուք:

Արթեալ Արտաշիսի 'ի սեղին, ուր խառնին Արասն և Սեծա-
մօր, և հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Ար-
տաշատ: Չեռնաու լինի նմա և Արասն փայտիք մայրից. վասն որոյ
անաշխատ և երազ շինեալ, կանգնէ 'ի նմա մեհեան, և փոխէ 'ի Ռա-
զարանէ զպատկերն Արտեմիդայ և զամենայն կուռս հայրենիս. բայց
զԱպողոնի պատկերն արտաբոյ քաղաքին կանգնէ հուպ 'ի ճանապարհն:
Աւ յարուցանէ 'ի քաղաքէն Արուանդայ զբերութիւն Հրէիցն, որ փո-
խեալ էին անդ յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ: Աս և
զամենայն վայելութիւն քաղաքին Արուանդայ, զոր տարեալ էր յԱր-
մաւրայ և զոր անդէն արարեալ նորա, փոխէ յԱրտաշատ. և առաւել
ևս յինքննէ յօրինէ իբր զքաղաք արքայանիսս:

Օ

Յարձակումն Ալանայ 'ի մեզ և պարտումն, և խնամութիւն Արտաշիսի
ընդ նոսա:

Օպայտու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամե-
նայնիս, յինքեանս արկանելով և զկէս Ալայոյ աշխարհին, մեծաւ ամ-
բոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զիւրոյ
զօրայն բազմութիւն, և լինի պատերազմ 'ի մեջ երկրիս երկոյունց
ազգայն քաջաց և աղեղնաւորաց: Սակաւ ինչ սեղի տայ ազգ Ալանայ,
և զնացեալ անցանէ ընդ գետն մեծ Սուր, և բանակի առ եզերր գետոյն
'ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշիսի բանակի 'ի հարաւոյ, և գետն ընդ
մեջ նոցա:

Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօ-
րայն Հայոց ամեն առ Արտաշէս, զնսպաղութիւն խնդրէր արքայն
Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խնդրեցոյէ. և երզմունս և դաշինս ա-
սեր հաստատել մշանջենաւորս, որպէս զի մի ևս մանկունք Ալանաց աս-
պատակաւ հինից ելցեն յաշխարհն Հայոց: Աւ 'ի չառնուլ յանձն Ար-
տաշիսի առ 'ի տալ զպատանին, գայ քոյր պատանուին յափն գետոյն 'ի
գարաւանդ մի մեծ, և 'ի ձեռն թարգմանչաց ձայնէ 'ի բանակն Արտա-
շիսի. Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին
Ալանաց. եկ հաւանեաց աչազեղոյ գտտերս Ալանաց՝ տալ զպատանիդ.

զի վասն միոյ քինու ոչ է օրէն գիւցազանց զայլոյ գիւցազանց զարմից
բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և 'ի սարկաց կարգի
պահել, և թշնամութիւն յախտեանական 'ի մեջ երկոյունց ազգաց
քաջաց հաստատել: Աւ լուեալ Արտաշիսի զայսպիսի խնաստուն բանս,
զնաց յեզր գետոյն. և տեսեալ զկոյնն զեղեցիկ, և լուեալ 'ի նմանէ
բանս խնաստութեան, ցանկացաւ կուսին: Աւ կոչեցեալ զգայեակն իւր
Սմբատ, յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, առնուլ զօրիորդն 'ի կնութիւն
իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին
արձակել 'ի խաղաղութիւն: Աւ հաճոյ թուեցեալ Սմբատայ, առ արքայն
Ալանաց յղէ՝ տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍաթիինիկ 'ի կնութիւն
Արտաշիսի: Աւ ասէ արքայն Ալանաց. Աւ ուստի՞ տացէ քաջն Ար-
տաշէս հազարս 'ի հազարաց և բերս 'ի բերուց ընդ քաջազոյ կոյս
օրիորդիս Ալանաց:

Օպայտ սեղի առապելբարանելով վիպասանքն յերգէն իւրեանց
ասեն. Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի սեւան զեղեցիկ, և հանեալ
զոսկեօլ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ
գետն, և ձգեալ զոսկեօլ շիկափոկ պարանն՝ ընկեց 'ի մեջք օրիորդին
Ալանաց, և շատ ցաւեցոյց զմեջք փափուկ օրիորդին, արազ հասու-
ցանելով 'ի բանակն իւր: Որ և ճշմարտութեամբ ունի պրպէս: Քանզի
պատուեալ է առ Ալանս մարթ կարմիր, քոյքա շատ և ոսկի բազում
տուեալ 'ի փարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթիինիկ: Այս է ոսկեօլ
շիկափոկ պարանն: Վոյնպէս զհարսանեացն առապելեալ երգեն, պրպէս
ասելով. Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մար-
գարիս 'ի հարսնութեան Սաթիինիկանն: Քանզի սովորութիւն իսկ էր
թագաւորայն մերոյ, փեսայութեամբ 'ի դուռն տաճարին հասանել՝
դահեկանս ճապաղել իբրև զհիւպատեանն հովմայեցոյ. սապէս և թա-
զուհեացն յառազատիս՝ մարգարիս: Այս է ճշմարտութիւն բանիցս:

Սա առաջին եղեալ 'ի կանանցն Արտաշիսի՝ ճնանի նմա զԱր-
տաւազդ և այլս բազումս, զորս ոչ կարևոր համարեցաք այժմ՝ անուամբ
թուել. բայց զինիսն յորժամ 'ի գործ ինչ հասանիցեմք:

ԾԵ

Սպանուան Արդամայ և սրբուց նորա:

Ի չափ հասեալ Արտաւազդայ սրբուց Արտաշխի, եղև սյր քաջ, անձնահաճ և հպարտ. և նախանձ բերելով ընդ ձերուանցն Արդամայ, հրապուրեաց զհայր իւր ցամուռ Արդամայ, որպէս թէ թագաւորել 'ի վերայ ամենայնի խորհոյն: Այսպէս ընկեցեալ զնա 'ի պատուոյն, ինքն առնու զերկրորդութիւնն: Յետ այսր երթալով Արտաշխի 'ի ճաշ Արդամայ, կտակած իմն անկեալ, իրր թէ գաւել զարքայն խորհեցան, յարուցանեն սրբիքն արքայի սաղշաղ, և անդէն իսկ 'ի հացին քարշեն զալին Արդամայ: Այս խառնութեամբ մեծաւ եկեալ Արտաշառ Արտաշէս արքայ, դարձեալ արձակեաց զսրդի իւր զՄաժան մեծաւ զնդաւ, և զբազումն յաղպէն Մուրացան սպանանել հրամայեաց, և զտարսանն Արդամայ սցրել. և զհարձ նորին, որ կարի չընաղ էր գեղալ և մնացեալ զնացիւք տակ, զոր կոչէին Մանդու, ածել 'ի հարձութիւն Արտաշխի: Օ, որ դարձեալ նուաճեալ յետ երկուց ամաց, 'ի բաց տալ հրամայէ զինչն բաց 'ի հարձէն:

Իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնու 'ի բաց 'ի նոցանէ զերկրորդութեան պատին, յաւելու ևս հանել և զՆախճաւան, և ըստ հիւսիսոյ Արափայ զամենայն գեւղս, յորում և սպարսնա և բերգս 'ի նոցանէ շինէ իւր 'ի ժառանգութիւն: Այսմ ոչ կարացեալ համբերել սրբուցն Արդամայ, ընդդիմանայ նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդոցն սատակէ զամենայն ծնունդս Արդամայ հանդերձ հարբն, և որք միանգամ երևելիք էին յաղպէ Մուրացան. և զբաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա: Այս ոչ սպրեաց 'ի նոցանէն, բայց միայն աննշանաւորք սմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս սպրեցան 'ի զբան արքունի: Այս Արդամ է որ յառասպելին Արդաւանն անուանի, և այս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ:

ԾԶ

Իթէ մրպէս Սմբատ, և զինչ Ալանս գործեաց. և բնակել Արտաղու:

Սիրելի է ինձ ստել և փսնս առնն քաջին Սմբատայ. քանզի արդարեւ ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի 'ի ճշմարտութենէն. որ

ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան սուտոյն որսորդ, և զեղեցիութեան ալեզք վայելացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունէրով յաշնն որպէս զբակնտիկն 'ի վերայ սակաւ և 'ի մեջ մարդարտոյ ծագէր. և 'ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զզոյշ յամենայնի, և սուշութիւն յաջողուածոց ունէր 'ի մարտս առաւել քան զամենայն ոք: Օ, ի յետ այնչափ արութեանոց՝ օգնական Սաթինկայ եղբորն յաշխարհն Ալանայ հանդերձ զօրու երթայ հրամանաւ Արտաշխի: Վաճղէ մեռաւ հայր Սաթինկան, և այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանայ, և հալածէր զեղբայրն Սաթինկան. զոր վանեալ հէրքէ Սմբատ, և տիրացուցանէ 'ի վերայ աղպին զեղբայրն Սաթինկան, և զերկիր հակառակորդայն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սատակ Արտաշառ: Այս հրամայեալ Արտաշխի բնակեցուցանել զնոսա 'ի հարաւայ յարևելից կուտ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, 'ի վերայ պահելով զբնիկ անուան Արտաղ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն Արտաղ կոչի մինչև ցայսօր ժամանակի:

ԾԳ

Աւերուան Կասրից, և զրդուութիւն ընդ Սմբատայ զարմիցն Արտաշխի և ընդ միանան:

Յետ մեռաներայ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր զԱրտաշէս սրդի նորին 'ի վերայ Պարսից աշխարհին: Այս ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք ըրինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պասիթաճար գաւառ, որ է Պաղմանց լեռան, և ծովեղբայրք, և այսր ևս քան զնոսա. նա և Կասրից երկիրն յայն սակս ապստամբեն 'ի մերոյ արքայէն: Այսն սրոյ առաքէ 'ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրգըն շայոց, ինքն արքայ յաղարկաւոր երթալով աւուրս եւթն: Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեւեան. բայց զերկիրն Կասրից աւերեալ, առաւել քան զարտաղեան զերին ածէ 'ի շայս. ընդ որս և զՕսարդմանոս անուն թագաւոր նոյն: Այսն սրոյ արժանի ըստ փաստակոյն պարզէէ նմա Արտաշէս զմասն արքունի, որ 'ի շէնս Պաղթան, և զՈւղտու ակունս, և առ այսօրիկ՝ և զաւարն ամենայն նմա թաղու: Ընդ որ նախանձեալ Արտաւազդ,

կամեցաւ սպանանել զՍմբատ . և յայտնեալ խորհրդոյն , բաղում խոս-
 վութիւն վասն այնր լինէր հօրն : Իսկ Սմբատայ տեղի տուեալ զնայ
 զկողմամբք ասորեստանի . իւրով կամաւ թողաւ զիշխանութիւն զօրացն
 Հայոց , ընդ որ խանդայր Արտաւազդ : Հրամանաւ Արտաշէսի բնակէ 'ի
 Տմարիս , որ այժմ՝ կոչի Կորդրիք , 'ի Ալլիե նաուցեալ զբազմութիւն
 զերւոյն . քանզի էր 'ի ծերութեան կին արարեալ յասորեստանեաց
 հուսկ յայն կողմանս , զոր յոյժ սիրեաց , վասն այնորիկ և զնորին կող-
 մամբք բնակեցաւ :

Իսկ Արտաւազդ յետ զնալոյն Սմբատայ առնու 'ի հօրէն , սրում
 ցանկայրն , զիշխանութիւն զօրացն ամենայնի : Եւ նախանձ բերելով ընդ
 նմա և զբարցն՝ 'ի գրգռութենէ կանանց իւրեանց , վասն որոց կարգէ
 Արտաշէս զՎ ըյր՝ հազարապետ , զայր իմաստուն և բանաստեղծ , և
 հաւատայ 'ի նա զամենայն գործս ամեն արքունի . և զՄաժան կարգէ
 քրմապետ 'ի Աշի գիյն Արամազդայ : Բաժանէ Արտաշէս և զիշխանու-
 թիւն զօրուն ընդ չորս . զարեւելեանն թողաւ 'ի վերայ Արտաւազդայ , և
 զարեւմտեանն այց Տիրանայ , զհարաւայինն 'ի Սմբատ հաւատայ և զհիւ-
 սիսայինն 'ի Օարեհ : Եւ Օարեհ էր սյր սեղ . և յորս էրէց նահատակ ,
 իսկ առ պատերազմունս վաս և տաղտուկ . զորոց զհորձ առեալ Վարձա-
 մայ սրունն արքայի Վ ըայ , ապտամբեցուցանէ զերկիրն . և կապեալ
 զՕարեհ , 'ի բանտի դէն 'ի Կաւկաս : Բնդ սրում պատերազմեալ Ար-
 տաւազդայ և Տիրանայ հանդերձ Սմբատաւ , դարձուցանեն զեղբայրն 'ի
 մեծ կապանայ և 'ի բանտէ :

ՆՎ

Պատերազմ ընդ զօրս Գամետիանոսի 'ի Բասեան :

Ազմուկ շիթից իմն լեալ յարեւմտս , ընդ որ վատահացեալ Ար-
 տաշէս՝ նշխահեալ ընդգիմանայ հռովմայեցւոցն , ոչ տարով հարիս : Իսկ
 Գամետիանոսի կայսեր ցասուցեալ , զօրս 'ի վերայ Արտաշիսի առաքէ .
 որոց հասեալ 'ի կողմանս Կեսարու , զՏիրան և զգօրն արեւմտեան
 առաջի եղեալ՝ ածեն տաղնապաւ մինչև ցքաջ ընդարձակ հովիտն Բա-
 սենայ . յորում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արեւելեայ և հիւսիսային
 զօրօքն , հանդերձ ամենայն որդւովքն արքայի , և պատերազմեալ սաստ-

կապէս , վտանգին : Յորոյ 'ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հա-
 բաւային զօրօքն , ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զսրդիսն արքայի , յաղ-
 թութիւն և զբաւ պատերազմին արարեալ : Օ ի թէպէտ և ծերագոյն
 էր , երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զձակասն , և հետամուտ
 եղեալ հալածեաց զգօրն հռովմայեցւոց մինչև 'ի սահմանս Կեսարու :

Օ այս կամելով երգել յառասպելն , Գամետ զոմն ասեն եկեալ ,
 որ է ինքն կայսրն Գամետիանոս . ոչ եկեալ այսր , այլ զհրաման նորա և
 զգօրս պղբաբանելով յանուն նորա կոչեն :

Բայց ըստ բախտին եղեալ Արտաշիսի , մեռանի 'ի նոյն ժամանակի
 Գամետիանոս 'ի Հոտմ , և զինի նորա Ներուաս ոչ առեւ թագաւորեալ
 քան զմի ամ : Բնդ որս առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից ,
 սապատակ ևս 'ի Յոյնս արարին : Բնդ ստա հայելով եղիպտացւոց և
 կողմանցն պաղեստինացւոց , արդելուն և նոքա զհարկին հռովմայեցւոց :

ՆԵ

Յաղագս Տրայիանոսի և նորին գործոց , և մահուանն Մաժանայ յեղբարցն :

Օ այսու ժամանակօք լինի թագաւորեալ հռովմայեցւոց Տրայիանոս ,
 և խաղաղացուցեալ զամենայն արեւմուտս , դիմէ 'ի վերայ եղիպտացւոց
 և պաղեստինացւոց . և նուաճեալ զնոսա ընդ իւրով ձեռամբ , խաղայ
 յարեւր 'ի վերայ Պարսից : Եստ աճապարեալ Արտաշէս մեծապէս
 ընծայիք իջանէ ընդ առաջ նորա , զմեղանս 'ի յանձն առեալ , հանդերձ
 հարիօք անցերոց ամացն լինի առաջի նորա . և թողութիւն 'ի նմանէ
 դտեալ , դառնայ յաշխարհս Հայոց : Եւ Տրայիանոս անցեալ 'ի Պարսս ,
 և զամենայն զկամս իւր կատարեալ , դառնայ ընդ Ատրիս :

Բնդ առաջ նորա իջանէ Մաժան . մասնութիւն զեղբարցն առնէր .
 Գիտեա , ասէ , արքայ , եթէ զԱրտաւազդ և զՏիրան վտարանդիս ոչ
 արացես , և զգօրն Հայոց Օարեհն ոչ հաւատասցես , հարկքն անաշ-
 խատ 'ի քեզ ոչ եկեացեն : Օ այս արար Մաժան քէն պահելով վասն
 Սմբատայ , զի և զնա նորա էր մուցեալ . ընդ նմին և զՏիրան խորհեցաւ
 հանել , զի ինքն լինի քրմապետ միանգամայն և տպարապետ արեւմտից :
 Օ որմն ոչ ինչ փոյթ արարեալ Տրայիանու , արձակե ունայն : Իսկ Ար-
 տաւազդայ և Տիրանայ իմացեալ զխորհուրդն նորա , դարան գործեալ

յորս սպանին զՄաժան, զոր տարեալ թաղեցին 'ի բաղնայն աւանի իբր զքրմապետ: Իսկ Արտաշէս յայնմ հետէ անսպթաք հարկեաց Տրայիանու, և յետ նորա Ադրիանոսի կայսեր զամենայն աւուրս իւր:

ԾԹ

Թէ որպէս բազմամարդացոյց Արտաշէս զաշխարհս, և սահմանս հաստատեաց:

Յետ ամենայն առաքինութեանց և դործոց սուրբութեանց Արտաշէսի, հրամայէ զսահմանս զիւղից և աղարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց՝ եկամուտ բազում ածելով յաղզս, և բնակեցուցանելով 'ի լեւրինս և 'ի հայկոսս և 'ի դաշտս: Աւ նշանս սահմանաց հաստատեաց այսպէս. հրաման տարով քարինս կոպիւլ չորեքկուսիս, և սնակածև փոսել զմէջն, ծածկելով յերկրի. և չորեքկուսիս 'ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ: Ընդ որ նախանձեալ Արտաշէսի, որդւոյ Սասանայ, զնոյն նման հրամայէ աւնել և 'ի Պարսից աշխարհին և յիւր անունն անուանել: զի մի ևս յիշեացի անունն Արտաշէսի:

Բայց ասի, 'ի ժամանակս Արտաշէսի ոչ գտանել երկիր անդործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս:

ԾԽ

Յաղագս նախարարութեանն ամատունեաց:

Յաւուրս արս ասէն եկեալ զաղզ ամատունեաց 'ի կողմանցն արևելից Արեաց աշխարհին: Բայց են տըք բնութեամբ Հրեայ 'ի Սանուեայ ուժմնէ. որոյ որդի իւր մեծահասակ և ուժեղ, Սամոն անուն կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրեիցն՝ ըստ յուսոյ զնախնեացն կոչել անուանո: Բայց է ճմարիտ և այժմ 'իսկ տեսանել 'ի զարմս ամատունեաց, քանզի անձնեպէրն և բարեձէք ըստ պատշաճի վայել են ամենայն իրօք և ուժեղք: Տարեալք են տըք 'ի Արշակոյ առաջին 'ի Պարթևաց թագաւորեցելոյն, և յառաջագիմութեամբ անդէն Արեաց աշխարհին 'ի պատիւ հասեալք 'ի կողմանս Ահմատանի: Բայց թէ յինչ

պատճառաց զարուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ. այլ պատուին Արտաշէսէ զեղևք և դատասկբաօք, և անուանին ամատունէք, որպէս թէ եկք: Աւ կեպ 'ի Պարսից մանուկանս զնոսս կոչեն յանուն նախնայն:

ԾԲ

Վասն առուեղինից տոհմին, թէ ուստի սերեալ ազգ:

Ի տրս աւուրս և առուեղեանքդ յաղզէ Աւանաց մերձաւորք Սաթինիկոյ զհետ նորա եկեալք, կարգեցան յաղզ և 'ի նախարարութիւն աշխարհիս Հայոց, որպէս հարազատք թագուհայն մեծի. և 'ի ժամանակս Կարսիւս հօրն Տրդատայ ինամացեալ բնդ ուժմն քաջի Քասաղայն եկեալ հատուածի:

ԾԳ

Արուեստից զիտութիւն որ են յաւուրս Արտաշէսի:

Քանզի բազում ինչ գործք յաւուրս Արտաշէսի գործեցան, վասն այնորիկ 'ի բազում ճառս կոտորեցաք, զի մի երկայնութեամբ բանից տաղակութիւն բնութբոյցայն լինիցի. որոյ է վերջին ճառս այսպիսի ինչ, յիշատակել և զայլն ևս որ ինչ 'ի ժամանակս Արտաշէսի: Օգի թէպէտ և զայն ամենայն զոր ինչ յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգք և սովորութիւնք զեղևցիկք հաստատեցան 'ի Վաղարշակոյ և յայլոց առաջնոց թագաւորացն, այլ 'ի մեծամեծ արուեստից և 'ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և սոպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զաբաթոց ասեմ և զամոց և զտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչէր առ նոսս, այլոց աղզոց վարելով. և ոչ 'ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ 'ի վերայ դետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց դոյզն ուրեք. ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակեութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք: Աւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշէսի:

Կ

Յաղագս Մահուանն Արտաշխի:

Պեղեցիկ իմն պատմէ և Արիստոն փեղզացի յաղագս մահուանն Արտաշխի: Վանդի 'ի ժամանակի որպէս ապատամբեցին Հրեայք յԱղբիանոսէ հռովմայեցոյ թագաւորէ, և ետուն պատերազմ ընդ Բուփոսի եպարքոսի առաջնորդութեամբ առն ուրումն աւաղակի, որոյ անունն էր Բարբրոսայ, այս ինքն աստեղ որդի, որ էր դարձովք չարագործ և սպանող, բայց անուամբ իւրով մեծարանեալ պարծէր, որպէս թէ յերկնից ծաղեաց նոցա փրկիչ, իբր նեղելոյ և գերեաց: Աւ այնքան աստիացոյց զմարան, մինչև 'ի նա հայելով 'ի բայ կացին 'ի հարկելոյ հռովմայեցոյ Ատրիք և Միջագետք և Պարսք ամենայն. քանզի էր և լուեալ, եթէ եմուտ յԱղբիանոս ակա ուրկութեան: Բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց 'ի նմանէ:

Աւ եղև ընդ այն ժամանակս հասանել Աղբիանոսի 'ի Պաղեստինէ և աստակել զապատամբն պաշարմամբ 'ի քաղաքի մի փոքր՝ հուպ յԱրուսաղէմ. վասն որոյ և ամենայն ազգին Հրեայ հրամայեաց մերժել 'ի հայրենի աշխարհէն, որ և ոչ 'ի բազում հեռաստանէ հայեցին յԱրուսաղէմ: Աւ ինքն շինէր զԱրուսաղէմ զաւերեալն 'ի Վեպիանոսէ և 'ի Տիտոսէ և յիւրմէ. և անուանեաց Աղիայ յիւր անուն՝ որպէս և կոչէրն իսկ Աղբիանոս՝ արեգակն: Բնակեցոյց 'ի նմա հեթանոսս և քրիստոնեայս, որոց եպիսկոպոս էր Մարկոս ոմն: Բնդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբք ասորեստանեաց. և մերոյն Արտաշխի հրամայեաց երթալ 'ի Պարսս հանդերձ իւրովք զիւզատատօք. զորոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւնս ետ մեզ, հանդիպի Արտաշխի 'ի Մարսս, 'ի Սահունդ անուանեալ տեղաւծ:

Պատմի և հիւանդանալ նմա 'ի Մարանդի, 'ի Բակուրակերտ աւանի. և զԱբեղոյ գոմն նահապետ արեղինից տոհմին, զայր շոյս և շղղմարար և սուտակապաս 'ի նորին խնդրոյ արձակէ յԱփեղեաց յԱրիգայ, 'ի մահեանն Արտեմիդայ, խնդրել 'ի կոռցի բժշկութիւն և զբազում կեանս: Որոյ ոչ ժամանեալ դառնալ, հասանէ փոխճանն Արտաշխի: Աւ դրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան 'ի մահուանն Արտաշխի, սիրելի կանայք և հարձք և մտերիմ ծառայք. և որպիսի շուք բազմադիմիս

արարին առ 'ի պատիւ դիոյն, քաղաքական կարգօք և ոչ որպէս զբարբարոսս: Պաղաղքն էին սոկեղէնք, դահուքն և անկողինքն բեհեցեայ. և պատմուճանն որ զմարմնովն ոսկեթել. թագ կապեալ 'ի գլուխն, և զէնն ոսկով առաջի եղեալ. և զգահոյիւքն շուրջ՝ սրդիքն և բազմութիւն ազգականայն, և առ այսոքիւք պաշտօնէկցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականայն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ 'ի պատերազմ ճակատիցին. և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զինինն ճայնարկու կուսանք սևազգեստք և աշխարող կանայք, և զհետ՝ բաղմութիւն ուամկին: Աւ այսպէս տարեալ թաղեցին: Աւ շուրջ զգերեզմանաւն լինէին կամուար մահուանք, որպէս վերագոյնն ասացաք: Աւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի:

ԱԸ

Արտաւազդայ թագաւորութիւն, և հալածել զեղորսս իւր և զբորս, և մահ հանդերձ սյուրանելով:

Յետ Արտաշխի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր 'ի դաւառս Աղիովտայ և Աբերանոյ, զի մի բնակեցեցն յԱյրարատ 'ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի սրդի ոչ գոյր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջուան Արտաշատ քաղաքն՝ որաւ կինճս և իշավայրիս զակամբք Պինայ, ազմկեալ իմն 'ի ցնորից խելագարանաց, ընդ վար յածելով երկվարան, անկանի 'ի խոր իմն մեծ, և խորասոյղ լեալ՝ անհետի:

Չամանէ երգիչքն Պաղթան առասպելաբանեն այսպէս. եթէ 'ի մահուանն Արտաշխի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցհայրն. Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս որպէս թագաւորեմ: Վասն որոյ անիծեալ զնա Արտաշխի՝ ասաց այսպէս. Աթէ դու յորս հեծցիս յաղատ 'ի վեր 'ի Մասիս, գրեզ կացին քաջք, տարցին յաղատ 'ի վեր 'ի Մասիս, անդ կացցես, և զայս մի տեսցես:

Չորացն զմաննէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում՝ կապեալ երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապաղ կրծելով զշղթայն, ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ 'ի ձայնէ կռանարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն: Այն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք 'ի դարբնաց, զհետ երթալով առասպելին, յաւուր միաշարթեալ երիցս կամ չարիցս բախեն դառն, զի զօրացին, ասեն, շղթայքն Արտաւազդայ: Բայց է ճշմարտութեամբ այսպէս, որպէս ասացաքս վերադոյն:

Այլ ամանք ասեն և 'ի ծնանելն զսա դիպեալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմիցն Աշդահակայ. վասն որոյ զնոսա բազում չարչարեաց Արտաշէս: Աւ գայտ նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ վիշապազունք դողացան զմանուկն Արտաւազդ, և դե փոխանակ եղին: Բայց ինձ արգարացեալ թուի լուրն այն, թէ 'ի ծնողենէն և եթ մնլութեամբ լեալ, մինչ նովիմք և վախճանեցաւ: Աւ ասուռ զթագաւորութիւնն Տիրան եղջայր նորին:

ԿԻ

Որ ինչ վասն Տիրանայ:

Թագաւորէ Հայոց Տիրան որդի Արտաշէսի յերրորդ ամի Պերդի առաջնոյ Պարսից արքայի: Սորա ոչ ինչ պատմին դորձք մեծամեծք, այլ միայն՝ թէ մտերմութեամբ ծառայեաց հոսովնայեցոց. և կայ խաղաղութեամբ, սրաց և զբօսանաց պարսպեալ, որպէս ասեն: Աւ ձիոց երկուց լեալ՝ թէթե առաւել քան զՊիդատոս երազութեամբ անբաւ. զորս ոչ երկրակոխս, այլ օղագնացս համարէին. յոր խնդրեալ հեծանել Պատարքէի ուրումն իշխանի բղտունեաց, պարծէր ընչեղադոյն գոլ քան զարքայ:

Աւ և կեալ առ նա կանխադոյն իւրոյ ազգին արշակունեաց, որ էին 'ի կողմանս Հաշտենից, ասեն. Բնդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեզ է. քանզի բաղմացար: Աւ նա հրամայէ ամանց 'ի նոյննէ երթալ 'ի գաւառն Աղիտի և Արբերանոյ: Իսկ սոցա առաւել ևս բողբ կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեզ է մեզ, ոչ ինչ ունինդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիւ՝ ոչ այլ ժառանգութիւն

տալ նոցա, բայց զոր ունին հաւասար արոհել յինքեանս: Չոր բաժանեալ ըստ մարդաթուի, գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք 'ի նոցանէ եկեալ 'ի գաւառն Աղիտի և Արբերանոյ:

Յաւուրս տրաւ ասեն լեալ զպատանի ոմն յազգէն անձաւացեաց, սեզ յամենայնի, Արախնաւու անուն կոչեցեալ. որ առնէ կին զվերջին կանանցն Արտաւազդայ, զոր 'ի Յունաց էր անեալ: Աւ քանզի զաւակ ոչ գոյր Արտաւազդայ, արքայ թողու յարախնաւու զամենայն տունն Արտաւազդայ: Չի ասէին զնա այր ընտիր լինել և համեստ յամենայնի, այլ և 'ի ցանկութիւն մարմնոյ իբրև զօրինաւոր դք: Չոր սիրեալ արքայի, տայ նմա զգահն երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ. և զհագս արևելեան զօրուն 'ի նա հաւատացեալ, առ նմա թողու զՊարտապ ոմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամացեալ էր ընդ նախարարս Ասպուրահանի, որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ աղարակօքն, և զայգին մեծ՝ յոր մտանէր առուն՝ գետ հանեալ 'ի ծովէն Պայլատուայ: Աւ ինքն զնաց զկողմամբք Ակեղեաց, 'ի յաւանին Չրմէս հաստատելով զարքունիսն: Ի հանդարտութեան վարեաց զթագաւորութիւնն՝ ամս քսան և մի. և մեռաւ 'ի ճանապարհի, ձեան հիւսիսոյ կալեալ:

ԿԳ

Յաղագս Տրդատայ բազրատունւոց և անուանց ազգի նորա առաջնոյ:

Տրդատ ոմն անուն յազգէն բազրատունեաց, որդի Սմբատուհեաց գտտեր քաջին Սմբատայ, այր սրտեայ և ուժեղ, կարճ հասակաւ և գծած տեպեամբ, զոր իւր փեսայացոյց արքայ Տիրան 'ի դուստր իւր յԱրանեակի: Որ ատեցեալ զայր իւր զՏրդատ, պչրանօք և պոստելեաւ կայր զօրհանապազ, աւաղելով զինքն, իբր թէ չընաղագել ընդ վատակերպոյ և քաջատահմիկ ընդ վատթարազղւոյ բնակէ: Բնդ որ զայրացեալ Տրդատ, յաւուր միում գանէ զնա գատտկապէս. և կտրեալ զդեղձան հերսն և զվարսիցն փետտեալ զտոպոլիս, հրամայէ քարչել արտաքս և ընկենուլ 'ի սենեկէն: Աւ ինքն զնաց սպտամբեալ 'ի կողմանս ամրութեանն Սարայ. և հասեալ 'ի Սիւնեաց աշխարհն, ժամանէ նմա համբաւ մահուանն Տիրանայ. զոր լուեալ՝ դադարէ անդ:

Եւ եղև յաւուր միում կոչել զնա յընթրիս Բակրոյ նահապետին Սիւնեաց. և յուրախանալն զինուով՝ տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր, և երգէր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ, տրփացաւ և ասէ ցԲակուր. Տուր ինձ զվարձակս զայս. և նա ասէ. Ոչ տամ, զի հարձ իմ է: Իսկ Տրդատայ բուռն հարեալ 'ի կինն, յիւրն քարշեաց 'ի բազմականն. շամշերով վաւաչէր ըստ օրինակի երիտասարդի անարգել տարփաւորի: Բնդ որ խանդացեալ Բակրոյ, յարեաւ հանել զնա 'ի նմանէ: Բայց յոտն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկսեղըն իբր զինու վարեցաւ, նա և զբարձակիցան 'ի բազմականացն 'ի բայ պուղեաց: Եւ անդ էր տեսանել նոր զմն Ոգիսես՝ զՊէնեբոպոյ զսեղեխն աստակելով, և կամ զՂապիթեայցն և զյուշկապարկացն կռիւս 'ի վերայ Պերիթեայ հարսանեացն: Եւ այնպէս յիւր վանսն եկեալ, խոյն 'ի ձի ելեալ հանդերձ հարձին 'ի Սպեր զնոց: Օայս աւելորդ եղև պատմել մեզ զնահատակութիւնն առնն ցանկասիրի:

Բայց զիտեա, զի 'ի Թողուլ ազգին բազրատունեաց զօրէնս հարցըն, նախ խժական ժառանգեցին յորջորջումն, Բիւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ 'ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն՝ Բաղադիս, Տուբիս, Սենեբիս, Եսուդ, Սափասիս, Վաղարիս, Եւանտս: Եւ ինձ Թուի, Թէ որ այժմդ կոչին բազրատունիք Բազարատ՝ Բազարիս է դա, և Եսուդ՝ Եշատ. զայնպէս և Վաղարիս՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ:

ԿԳ

Եթէ զհարգ Տեղբան վերջին, և զինչ 'ի նմանէ գործք:

Փոխանորդէ զՏիրան՝ եղացր իւր Տիգրան վերջին, Թագաւորեալ Հայոց 'ի քսան և 'ի չորրորդի ամի Պերողի Պարսից արքայի. և երկացնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի, ոչ ինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ, այլ 'ի յազջկանէ միջէ 'ի յունէ 'ի կալանս ըմբռնեալ, 'ի ժամանակին յորում վախճանեցան Տիտոս երկրորդ Թագաւոր հռովմայեցոց, որ անուանեցան Կոստանտոս Եւգոստոս: Եւ Պերող արքայ Պարսից 'ի հռովմայեցոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և

Պերող անուանեցաւ, որ է յաղթող. քանզի յառաջ անուանիւր Վաղեղեսոս 'ի Յունաց լեզուն. բայց Թէ Պարսք զինչ կոչէն զնա, ոչ զիտեմ:

Արդ յասպատակելն Պերողի ընդ Եսրիս՝ 'ի կողմանս պաղեստինացոց, վասն նորա և հրամանաւ նորին՝ և մերն Տիգրան 'ի մէջերկրեայ. և 'ի կալանս ըմբռնեալ յազջկանէ միջէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչ դեռ Ղուկիանոս կեսար յԱթէնս զմեհեանն շինէր. որոյ և անցեալ զօրօք բազմօք 'ի մէջերկրեայն յետ մեռանելոյն Պերողի նուաճեաց զՀայոց, և արձակեաց զՏիգրան: Եւ զՈսիի զկոյս, զմերձաւոր իւր, նմա կնութեան. զոր եկեալ 'ի Հայոց 'ի բայ Թողուլ, և 'ի նմանէ լեալ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ոսիեայ՝ ոսիսեան. և զառաջին մանկանցն զլուխ նահապետ կացուցանէ, և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեցին արշակունիք:

Եւ այլ՝ որ ինչ կրտսերադոյն ազգ, եթէ աստ և եթէ զկողմամբ Կորձէից, հաստատէ այս Տիգրան. որք միանգամ անազգիք էին՝ 'ի վաշտս և անձամբ երևելիք, և վասն նորա փրկութեան պատերազմեալ ընդ Յոյնս, որք 'ի Կորձէից և որք 'ի մերմէ կողմանէս, զյառաջադանից ասացելոյ մօտուորաց Վձենից և զարմից հայկազանց, ամանք 'ի յեկաց: Օոր ոչ անուամբ պատմեցուք. է ինչ՝ որ վասն յոյսանի ոչ լինելոյ մեզ, և է ինչ՝ որ վասն աշխատութեան 'ի վաստակելն խոյս տալով. Երրորդ, զի և անհաստատութիւնն բազմաց՝ կարծիս 'ի ներքս ածէ ընդ բնան անցանել: Եւ այսորիկ ազգաւ՝ ոչ ինչ վասն այնց ազգաց, որք 'ի վերջնոյն Տեղբանայ կարգեցան, ճառեցուք, Թէ և բազում անգամ վասն այսր 'ի մէջդ աղերսիցես. այլ միայն զորս հաւաստի զիտեմք զինիսն: Օի որչափ էր հնար, փախեաք յաւելորդ և 'ի պաճուճեալ բանից, և որ ինչ յանհաւաստին հայէր բանն և մտածութիւնն. միայն զհետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ և կամ 'ի մէջ՝ զարդարոյն և զճմարտի: Օնոյն և աստանօր պատրաստելով, արգելում զնթացս բանից յոչ պատշաճէն և որ զանհաւաստութեանն 'ի ներքս ածել ակնարկէ կարծիս: Եւ զքեզ, որպէս բազում անգամ, և այժմ՝ աղաչեմ, մի յաւելորդան հարկաւորել զմեզ. և սակաւ և կամ յոյլով բանիւք՝ զմեձ և զհաւաստի բովանդակ աշխատութիւնս մեր՝ ընդ վայր և աւելորդ ցուցանելով գործ. զի նմանազոյն որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս:

ԿԵ

Յազգաս թագաւորեցին Վաղարշայ, և շինելոյ զաւանն Բասենոյ, և պատել պարսպաւ զՆոր քաղաք, և պատերազմ ընդ Խաղրաց և մահ նորին:

Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսուն և երկու ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի: Սա շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ 'ի վերայ ճանապարհին. ուր 'ի գնալն մօր իւրոյ 'ի ձմերոց Մարտա, յանկարծակի պատեալ երկանց 'ի գնացու՝ ծնաւ 'ի վերայ ճանապարհին, 'ի գաւառին Բասենն, 'ի տեղոջ՝ ուր խառնին Սուրց և Արափս. զոր շինեաց յիւր անուն, և կոչեաց Վաղարշաւան: Սա պատեաց պարսպաւ և զհզօր աւանն Վարդգէսի, որ 'ի վերայ Վասախ գետոյ. զորմէ յառասպելն ստեն. Հաստեած գնացեալ Վարդգէս մանուկն 'ի Տուհայ գաւառէն, զՎասաղ գետով, և կեալ նստեալ զՇ ընչ բլրով, զԱրափմէք քաղաքաւ, զՎասաղ գետով, կուել կոփել զդուռն Արուանդայ արքայի: Այս Արուանդ՝ առաջինն է սակաւակեացն, որ 'ի հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի, շինեաց զաւանս զայս. յորում և Տիգրան միջին յարշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից, որ եղև քաղաքադեւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք:

Սա թագաւորեալ ամս քսան, մեռաւ. թէ ըսկ և այլքն կեցին. բայց ստեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղաքս բարի անուանն քան զթուրադոյնս 'ի թագաւորաց: Վասն զի 'ի սորա աւուրս միաբանեալ ամբօխութիւն 'ի հիւսիսականացն, զԽաղրաց ասեմ և զՆասրաց, արտաքս քան զդուռն Ղորայ ելանել, առաջնորդ և թագաւոր ունելով ինքեանց զՎ նասեպ ոմն Սուրհայ. որք անցեալ վտարին այսր զՎուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբօխի մեծաւ և արամբք մարտկօք՝ ցիր դիտթաւալ կացուցանել զամբօխն ընդ երեսս դաշտին, և ձիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն Ղորայ: Ուր միւսանդամ միաբանեալ թշնամեացն, յորինեցին ճակատ. զորս թէպէտ և վանեալ քաջացն Հայոց՝ փախտականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի 'ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց:

Աւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորա յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի: Աւ նոյն հետացն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեւանն մեծ, վրէժս պահանջելով զմահուան հօրն. և վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր աղան զայնտիկ, մի 'ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս. և զիւրոյ տերութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լեցի ընդ հնազանդութեամբ լինել հոսկանցեաց:

Կ.Օ.

Եթէ ուստի զայստիկ պատմէ:

Օրուցէ մեզ զայս Բարդաճան, որ Ադեոսայ. քանզի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ երևեցաւ պատմադրոյ: Որ յառաջ աշակերտեալ էր աղանդին Վաղենտինոսի, զոր յետոյ անարդեալ յանդիմանեաց. ոչ զարով 'ի ճշմարտութիւն, այլ միայն 'ի նմանէ զատուցեալ՝ այլ հերձուած յարդարեաց յինքենէ: Սակայն զպատմութիւնս ոչ ստեաց, զի էր այր կորովի բանիւք. որ և առ Անտոնինոս համարձակեցաւ գրել թուղթ, և բազում ասացուած արար ընդդէմ աղանդոյն մարկիոնացոյց և բաշխից և կոոց պաշտաման, զոր 'ի մերում աշխարհիս:

Վասն զի եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարացէ 'ի խուժ հեթանոսացս, և իբրև ոչ ընկալեալ եղև, եմուտ նա յամուրն Մէնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իրեանն, և փոխեաց զամենայն 'ի լեզու ատորի. որ և ապա անտի յեղաւ 'ի նոյն բան: Յորում պատմէ 'ի մեհենիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի 'ի բաղնացն աւանի, որ 'ի Բագրեանդ գաւառի, բազին 'ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի 'ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեացեն, և ընդունիցին հեւրք երեկօթիւք: Յորում և զկնի Վաղարշ սօն աշխարհախումբ կարգեաց իսկզբան ամի նորոյ, 'ի մուսն Նաւասարդի: Յայժմ պատմութենէ առեալ մեր երկրորդեցաք քեզ 'ի թագաւորութենէն Արտաւաղոսայ մինչև յարձանն Խոսրովու:

ԿԷ

Եթէ որպէս Ազաթանդեղոս պատմեաց համառօտ :

Որպէս ասացաք, 'ի Ա շղարշայ առնու զԹաղաւորութիւնն Խոսրով որդի նորա, հայր սրբոյ մեծին Տրդատոց : Յաղագս սորա և համատահմիցն կարճ 'ի կարճոյ իմն անցանելով աջուլ քարտուղարն Տրդատոց Ազաթանդեղոս, փոքր 'ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ Պարսից Թաղաւորին, և զբառնալ տերութեանն Պարթևաց յԱրտաշէն որդւոյ Սասանայ, և զնուածել Պարսից ընդ ձեռամբ նորա, և զքննանդիր լինել Խոսրովայ հօր Տրդատոց, և ասպատակաւ հինից աւերել զաշխարհն Պարսից և ասորեստանի : Յետ որոյ ասէ, Թէ յլեաց Խոսրով յիւր բնիկ աշխարհն 'ի կողմանս Վաշանայ, զի իւր տոհմայինքն 'ի Թիւկունս հասցեն, և Արտաշէի ընդդէմ կացցեն : Այլ նոքա, ասէ, չլինէին ունկնդիր, զի հաւանեալք և միամտեալք էին 'ի տերութիւնն Արտաշէի քան ընդ տերութիւն աղգատոհմին իւրեանց և եղբայրութեանն : Եւ եթէ, Խոսրով առանց նոցա վրէժս պահանջէ. և զնովիմբ ածեալ՝ ասէ, Թէ ամս տասն ստէպ ստէպ դոցս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցանէր : Եսէ ասպ և զգալն Անակայ նենդութեամբ, հրապուրեալ 'ի խոտմունս Արտաշէի, որ ասաց՝ եթէ զբուն պատուական զձեր սեպհական Պահլաւն, զայն անդրէն 'ի ձեզ դարձուցից, և զքեզ Թաղաւ փառաւորեցից : Այն որոյ յանձն առեալ Անակայ, սպանանէ զԽոսրով :

Արդ Թէպէտ և Ազաթանդեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ յաւէտ ձիգ և երկայն առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ ճառերով խիզբանէն, և ճշմարիտ ասացուածովք հո՞ծ և խիտ :

ԿԸ

ԶԹաղաւորական ազգացն, յորմէ ցեղք պարթևականք որոշեցան :

Յաղամայ քաններորդ առաջներորդ նահապետ մեզ զԱրբաշամ աստուածային չբատմութիւնքն ցուցանեն. և 'ի նմանէ եղեալ ազդդ

Պարթևաց : Վանդի ասէ, յետ մեռանելոյն Սասայի՝ առեալ Արբաշամու կին զՎեռուրայ. յորմէ ծնան Եմբան և եղբարք նորա, զոր Արբաշամ 'ի կենդանութեանն իւրում մեկնեաց յԱսահակայ, արձակելով յերկիրն արևելից : Յորոյ սերեալ ազգ Պարթևաց. և 'ի նոցանէ Արշակ քաջ, որ ասպատակեալ 'ի մակեդոնացոց՝ Թաղաւորեաց յերկիրն Վաշանայ ամս երեսուն և մի. և յետ նորա որդի նորին Արտաշէս ամս քսան և վեց. ասպ Արշակ նորին որդի, որ կոչեցան մեծ, որ զԱնտիոքան եսպան, և զԱ շղարշակ զեղբայր իւր Թաղաւոր կացոյց Հայոց, երկրորդ իւր առնելով : Եւ ինքն չուեալ 'ի Բահլ, հաստատեաց զԹաղաւորութիւնն իւր ամս յիսուն և երես. վասն որոյ զարմբ նորա Պահլաւ անուանեցան, որպէս և եղբօրն Ա շղարշակայ՝ 'ի նախնայն անուն արշակունիք : Եւ են Թաղաւորք պահլաիկք այսօրիկ : Յետ Արշակայ մեծի առնու զԹաղաւորութիւն նորա Արշական՝ յերեքտասաներորդի ամի Ա շղարշակայ Թաղաւորին Հայոց՝ ամս երեսուն. ասպ Արշական՝ ամս երեսուն և մի, յետ որոյ Արշէզ, ամս քսան, ասպ Արշախր՝ ամս քառասուն և վեց : Սորա լինին որդիք երեք և դուստր մի, որպէս յառաջագոյն ասացի. որոյ անուանքն՝ անդրանիկան Արտաշէս կոչիւր, երկրորդին՝ Պարն, երրորդին՝ Սուրէն, և դուստրն անուանեալ Սիլմ :

Արդ յետ հօրն վախճանելոյ, կամ եղև Արտաշէսի ազգաւ 'ի վերայ եղբարցն Թաղաւորել. զոր յանձն առեալ եղբարցն, ոչ առաւել սղբական բանիւք և պատրողօք, քան Թէ տատիւ նուածեալ նորա : Եւ Արգարու պայման ուխտի և դաշինս 'ի միջն հաստատեալ, Թաղաւորել Արտաշէսի ծննդովք իւրովք : Իսկ եթէ հացին զարմբ նորա, եղբարցն մատչել 'ի Թաղաւորութիւն ըստ կարդի աւագութեան : Եւ Արտաշէսի զոցս 'ի նոցանէ գտեալ, գաւառս պարգևէ, ազգ զնոսս սերելով յանուն իւրաքանչիւր. և 'ի վերոյ քան զամենայն նախարարութիւնս կարգէ, գնաննականն 'ի վերոյ պահելով զանուն ազգին, զի կոչեցին այսպէս. Պարնի Պահլաւ, Սուրենի Պահլաւ, և քոյրն՝ ասպահապետի Պահլաւ, քանդի 'ի վերայ զօրաց էր այր նորա : Եւ այս կարգաւորութեամբս ձգեցան բազում ամս, մինչև վերացաւ 'ի նոցանէ տերութիւնն :

Բայց մի ատանօր բամբաստեցես զմեզ իբր զաւելագործ որ, որպէս Թէ զմի անդամ պատմեալն դարձեալ ասացաք. այլ զիտեա, զի

ախորժեւրով վասն ազգականաց մերոյ Լուսաւորչին քաջաճմուտ կամեցեալ լինել ընթերցողացն, կրկնագրեցաք երկրորդելով:

ԿԹ

Թէ զեւրդ ցեղն Արտաշեսի Պարսից արքայի մինչև ցվախճան:

Արդ անցցուք այսուհետև ընդ թիւ թագաւորաց ցեղին Արտաշէի մինչև ցբառնալ 'ի նոցանէ աերութեանն: Յետ Արշաւրի, որպէս ասացաք, թագաւորէ Արտաշէս ամն երեսուն և չորս, Պարեհ ամն երեսուն, Արշակ ամն իննևտասն, Արտաշէս ամն քսան, Պերոզ ամն երեսուն և չորս, Վաղարշ ամն յիսուն, Արտաւան ամն երեսուն և մի: Չոս սպանեալ սասհրացոյն Արտաշի, որդւոյ Սասանայ, բառնարով զթագաւորութիւնն Պարթևաց, հանելով 'ի նոցանէ զաշխարհն ժառանգութեան: Բագուս ևն ժամանակիս այսորիկ պատմուք 'ի Պարսից և Մարտոց, այլ և 'ի Յունաց: Քանզի յիսկզբան թագաւորութեանն Պարթևաց մինչև ցղադարումն ընդ հռովմայեցոց կալան դործեբբեմն հնազանդութեամբ և երբեմն պատերազմաւ, զոր պատմէ Պաղեփատոս և Պորփիր և Փիլիմոն, և այլք բագուսք: Բայց մեք ասասցուք 'ի մատենէն, զոր եբեր Խոտհհրբուտ զԲարսումայի:

Հ

Եթէ զինչ առասպելք պահլաւկաց:

Այս Խոտհհրբուտ դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից, և անկեալ 'ի ձեռն Յունաց, յորժամ Յուլիանոս, որ և Պառաւատտն, զորու հանդերձ 'ի Տիղբոն չաղաւ, և 'ի մեռանելն նորա անդ, ընդ Յորբիանու 'ի Յոյնս ընդ արքունական սպասաւորն եկն. և մերոյ հաւատոյս դաւանեալ, անուանեցաւ Աղիաղար. և յոյն լեզու ուսեալ, պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու: Ընդ նոին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս մատենն մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի որումն անուամբ, զոր Պարսք Ուսատոսհան կոչեն. յորմէ մեր ուսեալ, երկրորդելք այժմ 'ի զիրս յոյս, թողալ զառասպելեաց նոցա

բարբանջմունս: Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելն յաղաքս երազոյն փափազոյ, և արտադասութեան հրոյն մանուածոյ՝ որ 'ի Սասանայ, և պատումն զհօտիւն, և լուսնակն, և ակտարմուղացն յառաջասացումն՝ որ են քաղեայք, և որ ինչ զինի այսորիկ. և պունկական խորհուրդն Արտաշի հանդերձ սպանութեամբք, և անվիտ հանձարբանութիւն մողին դատեր վասն նոխաղին, և որ ինչ այն ամենայն: Կա և այժին զիեցումն մանկանն ընդ հովանեաւ արծուոյն, և գուշակումն աղուաուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբանեկութեամբ գայլուն. և միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ: Այլ մեք ասացուք միայն զսոցոյն, որ ինչ ճամբարութեանն վայելէ պատմութիւն:

ՀԸ

Առաջին արշաւանք Խոտրովու յասորեստան, յորում համարեր օգնել Արտաւանայ:

Քանզի յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշի՝ որդւոյ Սասանայ, երկու ցեղք Պահլաւին՝ որ ասպահապետդ և սուրենեան 'ի Պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ թագաւորեալ ցեղին իւրեանց հարազատութեան ազգին, որ է Արտաշէսին, կամաւ յանձն առին թագաւորել Արտաշի՝ որդւոյ Սասանայ: Այլ մտերմութիւն պահելով առ եղբայրութիւն ազգականութեանն տան Կարն Պահլաւին, ընդդիմացան պատերազմաւ Արտաշի՝ որդւոյ Սասանայ: Բայց յառաջագոյն իբրև լուսաւ զաղմուկ շիթիւն թագաւորն Հայոց Խոտրով, զիմեաց յօգնականութիւն Արտաւանայ, թէ հնար լիցի աճապարել ապրեցոցանել միայն զԱրտաւանն. և միջամուխ եղեալ յասորեստան, լուէ զթթ մահուանն Արտաւանայ, և զմիաբանութիւն ամենայն զօրաց Պարսից և նախարարաց, նա և զիւրոյ ազգին Պարթևաց և պահլաւկաց, բայց 'ի ցեղէն Կարնան. առ որ հրեշտակս առաքեալ, զասոնայ յաշխարհս մեծաւ արամութեամբ և զկիմանօք: Այլ նոյն հետայն փոյթ ընդ փոյթ ազգ առնէ Փիլիպպոսի կայսեր հռովմայեցոց, օգնականութիւն 'ի նմանէ խնդրելով:

ՀԻ

Խոտորվաց օգնականութիւն գտեալ 'ի Փիլիպպոս, զիսկ 'ի վերայ Արտաշէր պատերազմաւ:

Աղմուկ խռովութեան լեալ 'ի Թագաւորութեան Փիլիպպոսի, ոչ կարաց 'ի հռովմայեցոց զնոցայ պարապեցուցանել՝ առ 'ի զօրավիշն լինել Խոտորվու: Այլ օգնէ նմա 'ի ձեռն զրոյ, հրամայելով սատարել նմա յամենայն կողմանց: Որոյ ընկալեալ զպայտի հրաման, հասանեն նմա յօգնականութիւն յԱզգիպտոսէ և յանապատէն մինչև 'ի ծովեղերն Պոնտոսի: Որոյ գտեալ զայսչափ բազմութիւնս, խաղայ 'ի վերայ Արտաշէրի. և ճակատ առեալ 'ի փախուստ դարձուցանէ, Թափելով 'ի նմանէ զատրեատան և զայլ արքայսնիստ աշխարհս:

Գարձեալ յղէ 'ի ձեռն հրեշտակաց առ իւր տոհմայինսն պարթև և պահլաւիկ ազգս, և առ ամենայն զօրս աշխարհին Վուշանաց, զի առ նա եկեալ վրէժս յԱրտաշէր պահանջեցեն, և զարժանաւորն 'ի նոցանէ Թագաւորեցուցէ, զի մի աւերութիւնն հեռացի յինքեանց: Իսկ նոցա ոչ առեալ յանձն, յառաջասացեալ ցեղիցն՝ որ ասպահապետդ և Սուրեն անուանին, դառնայ Խոտորվ յաշխարհս մեր. ոչ այնչափ ուրախացեալ ընդ յաղթութիւնն, որչափ ընդ վերջակացութիւն ազգականացն զժգմեալ: Յայնժամ հասանեն առ նա օմանք 'ի հրեշտակաց իւրոյ, սրբ 'ի պատուականագոյն ազգն երթեալ էին, 'ի խորագոյն աշխարհն, 'ի նոյն ինքն 'ի ներքս 'ի Քահլ. բերին նմա համբաւ, Թէ ազգական քո Վէհամանն, հանդերձ ցեղիւն իւրով Կարնան Պահլաւին, ոչ հնազանդեաց Արտաշէրի, այլ 'ի կռչդ քո զիմեալ զայ առ քեզ:

ՀԳ

Գարձեալ յարձակումն Խոտորվու 'ի վերայ Արտաշէրի առանց հրովմայեցոց օգնականութեան:

Թեպէտ և յոյժ զուարճացաւ Խոտորվ ընդ լուր գալստեան ազգականացն, սակայն ոչ յամեաց ուրախութիւնն, ընդ հուպ հասանելով բոթն՝ եթէ ինքնին Արտաշէր հանդերձ միաբանութեամբ զօրացն հե-

տահաս եղեալ, կոտորեաց զամենայն ցեղ Կարնան Պահլաւին. ջնջելով զամենայն արու՝ յերեսասարդաց մինչև ցտաբնդխոյս, բայց 'ի միոյ տղայոյ, զոր առեալ մտերիմ՝ տան նորա, Քաւրդ անուն, փախեաւ յաշխարհն Վուշանաց՝ հասուցանելով յազգայինս նորա. զոր բազում ջանիւ խնդրեալ Արտաշէրի զմանուկն 'ի ձեռն առնուլ, ոչ կարաց յազգականացն կուսակցելոյ. մինչև յոչ կամաց երդնուլ՝ անկասկած լինել մանկանն. վասն որոյ բեւր առասպելս յօգեցին Պարսք զմաննէ, անբանից սպասուորել մանկանն: Սա է Պերդամասն նախնի մեծի ազգին կամաւորականաց, զոր յիւրում աեղւթն պատմեցուք:

Այլ մէք այժմ որ ինչ զկնի կոտորածի ազգին կարնան Պահլաւին, զորոյ զվրէժն ոչ Թուրպոյնս ինչ խնդրեաց Թագաւորն Հայոց Խոտորվ: Թեպէտ վախճանեալ Փիլիպպոսի և շիթեալ Թագաւորութեանն հռովմայեցոց, մարդ 'ի մարդոյ սոնդով զտէրութիւնն սակաւժամանակեաց՝ Վեկիստ և Գալլստ և Վաղերիանոս կայսերք, ոչ օգնեցին նմա, սակայն Խոտորվ զօրօք իւրովք և այլ սիրելեօք յարեցելովք յինքն և հիւսիսային ազգօք Արտաշէրի յաղթեաց, հալածական առնելով մինչև յաշխարհն հոգկաց:

ՀԻ

Յազալս գարտեան Անակայ և լինելութեան սրբոյն Գրիգորի:

Արդ փախուցեալ 'ի Խոտորվայ Արտաշէր մինչ 'ի յաշխարհն հոգկաց և նեղեալ յոյժ, բազում խոտամունս նախարարացն առնէ, Թէ սրբութեաց զնա յայնմանէ, Թէ հնարիւք դեղոյ և Թէ գաղտնի խողխողմամբ սրոյ. պէս պէս պարգևս տալ խոտամոսոցր. Սնտուանդ պարթևագանցդ, ասէ, զիւրահնար գողցես 'ի ձեռն կեղծաւոր սիրոյ զգաւելն: Ազգականութեան անուամբ պատրել՝ 'ի գոսս վատահանայ. խոտամոսոցր զբուն տունն դարձուցանել 'ի նոսա, որ Պահլաւն կռչէր, զարքայսնիստ քաղաքն Քահլ, և զամենայն աշխարհն Վուշանաց: Նա և Թագաւորութեան ձև և շուք խոտամոսոյր, և զհասարակ Արեաց, ընդ իւրով ձեռամբ երկրորդ իւր լինել: Յոր հրապուրեալ Անակայ, որ էր 'ի ցեղէն սուրենեան Պահլաւէ, յանձն առնու սպանանել զԽոտորվ: Առ հատուածի պատճառաւ փախտական լինի յԱրտաշէր. և զհետ մտանելով

զորացն Պարսից առ պատճառէ՝ որպէս թէ փախտատական վարելով զնա ընդ ասորեստան, հանեն դառեղերը սահմանացն Արարատականի ընդ մէջ Կորդուաց: Օ՛ր լուեալ մեծին Խորրովայ յուտեացոց դաւառին, իբր զհարենեանցն կարծեցեալ եկաւորութիւն, դունդ առաքէ յօշնականութիւն Անակայ: Որոց պատահեալ Անակայ, ածեն զնա հրամանաւ թաղաւորին 'ի դաւառն, որ անուանեալ կոչի Արտազ, 'ի տեղի դաշտաւայրս, ուր յայտնեցան նշտարք որբոյ և մեծի Առաքելոյն թաղէի:

Աւ աստ ասեմ զրոյց զքանչեղի ծերոյն՝ որ ասեր, թէ 'ի նախնեաց ա՛նխմ ստիւրութիւն, որդի 'ի հօրէ ա՛նջով զխշատակ զբուցացս այտոցիկ, որպէս Որամկողորայն յաղագս Տարծոյ և Սիմն կոչեցեալ լեւրինն: Արդ 'ի բնակելն Անակայ 'ի դաշտին Արտազու, պատահէ սորա տեղի օթարանին մօտ առ դիրս որբոյ Առաքելոյն, որպէս թէ 'ի ներքսագոյն արտապանի խորանին. և անդ ասեն զյղութիւն մօր որբոյ և մեծի Առաւորչին: Վ անն որդի և զնորին Առաքելոյ շնորհն ընկալեալ, որ առ հանգստարանաւ նորին զլինելութիւնն էառ, զնորին ելլոյ զհօրէնը մշակութեանն պակասութիւն:

Աւ յետ անցելոյ երկուց ամաց դարտեանն Անակայ 'ի Հայս, յերբորդումն սպանանէ զԽորով, որ թաղաւորեաց ամն քառասուն և ութ. և մեռանի ինքն և իւրքն ամենայն, պահելով խնամոյն Աստուծոյ զսա միայն, որ ակնարկութեամբն Աստուծոյ և շնորհք Առաքելոյն ստեղծանել կամ լուսաւորել ասեմք յարդանդի մօրն, զառաքելութեան իւրոյ զշնորհս 'ի ձեռն տայով նմա: Իսկ զմնացեալս 'ի զբուցացս ուսուցանէ քեզ Ագաթանդեղոս:

ՀԵ

Յաղագս Փերմեղիանեայ եպիսկոպոսի Աեսարու կապագովկացոց և պատմութեանց նորին:

Փերմեղիանոս եպիսկոպոս Աեսարու կապագովկացոց էր սքանչելի յուսումնասիրութեան, որ և 'ի սղայութեան իւրում առ Որոգինէս երթեալ վարժեցաւ: Սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցոյ, որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Վահկոսի յարեաւ, և որ հուսկ յետոյ յամն Վիսկղեախանոսի, շարսյարեալ 'ի նա

և զգործս թաղաւորացն: Յորում ասէ՝ վեշտասաներորդ եպիսկոպոս կացեալ արեքսանդրացոց Պեսարոս, վիպեալ յիններորդ ամի հալածանացն: Չորէ բազում վկայեալս և 'ի Խորովու 'ի մերում աշխարհիս, համայն և յետ նորս օտարք յօտարաց: Բայց զի ոչ ճշմարտութեամբ սճով պատմէ, և ոչ զանուանս նշանակէ կամ գտեղի կատարմանցն, ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք երկրորդել: **Նոյնպէս** և որ զԱնանէ որդւոյ Սեւեբայ ասէ, պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի 'ի Միջագետս, և մեռանել 'ի մէջ Ադեսիայ և Խառանու, և մերոյն Խորովու ոչ յոք հակամտեալ:

Իսկ որ ինչ զկնի մահուանն Խորովու մինչև ցթաղաւորութիւնն Տրդատոյ 'ի ժամանակս անիշխանութեանն պատմէ, ստոյգ համարելով՝ երկրորդեմք համառօտ բանիւք: Բայց որ ինչ և 'ի թաղաւորութեանն Տրդատոյ և յետ նորս, ոչ հեղգութեամբ և անդգուշաբար վիպեալ, և ոչ կամուար սխալանօք 'ի ամս յարմարեալ բան, այլ որ ինչ 'ի յիշատակաց զիւսնադիր մասննիցն Յունաց: Իսկ ըստ նմանեացն սպա և որ ինչ 'ի համբաւոց արանց իմաստնոց և հնախօս սիրարանից ստուգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զբուցեցաք:

ՀՕ

Գիմուքն 'ի մեզ Արտաշէի, և յաղթել կայսեր Տակիտոսի:

Նայն այր ասէ, թէ յետ սուսերահարն լինելոյ Խորովու, միաբանեալ նախարարք Հայոց՝ ածեն իւրեանց յօշնականութիւն զգօրս Յունաց, որ 'ի Փոխուղիայ, Պարսից ընդդիմանալ, և պահել զաշխարհս: Ախտիցն սղղեցին Վաղերիանոսի կայսեր: Բայց վասն զի գունդք անցեալ ընդ Վանուք զեա՝ զբազում գաւառս զերի վարեցին, և զԱխիզադայ կղզիս աւար առին, վասն որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թեարիկէ Վաղերիանոս. նա և ոչ յերկարէ զիւսնան, առնելով 'ի նմանէ զթաղաւորութիւնն Կղաւդիոս, և յետ նորս Աւրելիանոս հուսկ ընդ հուսկ փոխանորդելով զմիւսնան. այլ և ամականօք թաղաւորեալ Ախնտոս և Տակիտոս և Փղոսիանոս եղբարք: Վ անն որոյ համարձակաբար արշաւեալ 'ի մեզ Արտաշէի, և զգօրս Յունաց փախտատական արարեալ, զերելով զյղով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ: Յորմէ գաղ-

Թեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգաւն արշակունեաց 'ի Յոյնս ապաւինէին. յորոյ մի էր և Արտաւազդ մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոտրովու՝ 'ի դուռն կայսեր հասուցանէ: Այն որոյ հարկաւորեալ Տակիտոս, ընդդէմ Արտաշէի դայ զկողմամբ Պնտոսի, և զեղբայր իւր զՓղաւխանոս այլով գնդաւ ընդ Աիւլիկոյ արձակէ: Իսկ Արտաշէի հասեալ 'ի Տակիտոս, 'ի փախուստ դարձուցանէ, որ և սպանաւ 'ի յիւրոյն 'ի Ղանիւս պնդացոց, որ են Խաղտիք. նոյնպէս և եղբայր նորա Փղաւխանոս յետ ութսուն և ութ աւուր 'ի Տարսն:

Է

Յազազս խաղաղութեան Պարսից և Յունաց, և շինելոյ Արտաշէի զՀայս յամս անիշխանութեանն:

Բայց Յունաց թողաւորեաց Պուրս, և խնդաղութիւն արարեալ ընդ Արտաշէի բաժանէ զաշխարհս սահմանադրութեամբ փոստ դարձելով: Աւ Արտաշէի նուաճեալ զազգ նախարարացն, զգաղթեալն անդրէն դարձուցանէ, և զամբախանն 'ի վայր իջուցանէ, բայց 'ի նախարարէ ումննէ՝ որոյ անուն Օտայ կոչուր, 'ի սահմ ամատունեաց, որ փետայ էր ազգին սպիւնեաց, և մուցսղ Խոտրովիկոսոյ՝ դատեր Խոտրովի. որջացեալ յամուրն Անի իբր 'ի կաղաղի հանդարտութեան զօղեալ:

Իսկ Արտաշէի գեղեցիկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց, 'ի կարգ առաջին հաստատեր: Աս և զարշակունիսն, զմեկուսացեալն 'ի թագէն և յԱյրարտան բնակելոյ, կարգէ 'ի նոյն տեղիս մօտւք և ուճկօք, որպէս էինն: Աս զմեհննիցն պաշտամունսն առաւել ևս յորդորէ. այլ և զհօրն որմդգական, որ 'ի վերայ բազնին՝ որ 'ի Բազաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրինս զոր արար Աղաբըշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցաւ 'ի Բազարան և դարձեալ յԱրտաշատ, զայնտօիկ փշէր Արտաշէր: Աս զերկիրս զբով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենեւին զիւր անունն հաստատէ:

Աս և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ դքաբինս յերկրի կացուցանելով նորոգեաց, և յիւր անունն փոխելով՝ արտաշիւրական անուանեաց: Աս կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց,

հանդերձ պարսիկ գործակալքք, ամս քսան և վեց. և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ ընդ արքայի մանուկ, յթագաւորելն Տրդատայ, ամ մի:

Ը

Վոտրունն ազգին մանդակունեաց յԱրտաշէ:

Բայց Արտաշէի լուեալ էր, թէ ոմն 'ի նախարարացն Հայոց առեալ յորդուցն Խոտրովու, փախուցեալ ապրեցոյց: Աս քննեալ, թէ ով որ նա իցէ, եղև վերահասու, թէ նա է Արտաւազդ յազգէն մանդակունեաց. հրամայեաց զամենայն ազգն ջնջել սատակմամբ: Վանդի 'ի գաղթելն Հայոց յԱրտաշէ՝ գաղթին և նոքա ընդ ցեղս այլոց նախարարացն. և 'ի նուաճելն Արտաշէի զայլն, դառնան և նոքա, և սատակին սրով ամենեքին: Բայց կոյս մի գեղեցիկագիտակ 'ի քերցն Արտաւազդայ զօղացեալ Տաճատայ ուրումն, որ էր լեալ յազգէն աշոցան, 'ի զաւակէ Վառշարայ հայկաղնոյ, փախուցեալ 'ի կեսարացոց քաղաքին ապրեցուցանէր, ամուսնաւորեալ ընդ ինքեան վասն չքնաղագեղ կերպարանին:

Թ

Յազազս նահատակութեանն Տրդատայ յամս անիշխանութեան Հայոց:

Պատմէ զնահատակութեանցն Տրդատայ, նախ 'ի մանկութեանն յերկար կամակար աշտանակեալ, և կորովի ձիավարեալ, և զէնս շարժեալ յաշողակարարս, և այլ պատերազմականս ուսանել ատրժակս. ապա բոտ պեղդպոնէսացոց մեհննական հրամանին ձիփիտեայ 'ի մրցանակս ազնին առաւելեալ քան զԱլլիտոտորագոս հռոգացի, որ զվղէ և եթ կալեալ յաղթեր. դարձեալ և քան զԱլերասոս արդիացի. զի նա զիճղակ եզին թափեաց, իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ: Աս 'ի ձիթութացս մեծի կրկիթին կառավարել կամեցեալ, 'ի հմտութենէ հակառակագրին տատուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառան. ընդ որ ամենեքին զարմացան: Աս 'ի պատերազմելն Պուրսոսայ ընդ

Պատթա, եղև սով սաստիկ. և յոչ գտեցրց շտեմարանաց՝ յարեան զորքն 'ի վերայ և սպանին զնա. նոյնպէս և 'ի վերայ ամենայն իշխանացն դիմեցին: Իսկ Տրդատ միայն ընդդէմ կացեալ, չեթող զըք մտանել յապարանն Լիկիանոսի, առ որում ինքն Տրդատ էր:

Բայց Ղարոս հանդերձ որդւովքն Ղառինեաւ և Նովեոխանոսի թագաւորեաց. և զորաժողով եղեալ, ետ ճակատ ընդդէմ Պարսից արքային, և յաղթեալ՝ դարձաւ 'ի Հռոմ: Այնն որոյ բազում ազգս 'ի սասարութիւն կալեալ Արտաշրի, թիկունս արարեալ զանապատն տաճկաստանի, դարձեալ ետ ճակատ ընդ զօրս հռովմայեցոց կրկին՝ աստի և անտի Ափրատու, յորմէ սպանաւ Ղարոս 'ի Յոնտովն: Այնպէս և Ղառինոս, որ 'ի վերայ Ղառնակայ չոգաւ յանապատ, ընդ որում և Տրդատ. և սաստիկեցաւ նա և զօրն, և մնացեալքն 'ի փախուստ դարձան: Յորում և Տրդատոյ վերաւորեալ երկիւորն, ոչ աճապարեաց ընդ փախտեայնն, այլ առեալ զզէնն իւր և զկազմած ձիոյն, 'ի լուղ ընդ լայնատարած խորայտակն անցանէր ընդ Ափրատ 'ի բուն զօրսն իւրեանց, ուր Լիկիանոսն էր: Ընդ նոյն աւուրս լինի սպանեալ և Նովեոխանոս 'ի Թարսիէ, և փոխանորդեալ զթագաւորութիւնն Վիտիղեստիանոս: Իսկ որ ինչ 'ի նորա ժամանակն դորձք, յայտնէ քեզ Ազաթանգէզոս:

2

Յայտարարութիւն սակաւօր անդեան և վարուց Գրիգորի և որդւոցն, 'ի Թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնաւորի 'ի Յաղատճանի:

Այր ամն 'ի Պարսից ոչ 'ի փոքունց և յաննշանից, որում անուն էր Բուրդար, զնացեալ անտի և եկեալ 'ի կողմանս Վամրաց, պանդխտեցաւ 'ի Մեսարիայ: Աւ առեալ կին 'ի հաւատացելոց, որում անուն Սոփի կոչուր, քոյր ուրում մեծասան, որ Աթաղեսս յորջորջէր, դարձաւ անդրէն զնալ յերկիրն Պարսից հանդերձ կնաւ իւրով. զորոյ զհետ հասեալ աներոյ նորա Աթաղեայ, համոզեալ արգելչոյ: Որոյ հանդիպեալ ծննդեանն մերոյ Առաւորչին, ըստ պատահման մտանէ սարնտու մանկանն. և 'ի հասանել աղէտին՝ առեալ Աթաղեայ զքոյր իւր և զայնն նորա հանդերձ մանկամբն 'ի կապազովկացոց աշխարհն դառնայր:

Այլ զայս ամենայն զործէ յառաջատեսութիւնն Աստուծոյ, որպէս կամբ են իմոյս ասել բանի, յաղազս որ 'ի մեզ փրկութեան ճանապարհ: Ապա թէ ոչ, որում յուսոյ ակն ունելոյ զմանուկ պահչուիկ 'ի հռովմայեցոց իշխանութեանն սուսցանէին, և Վրիտասի ընծայէին հաւատով:

Բայց յարբուն հասակի հասեալ մանկանն, փեսայացուցանէ հաւատացեալ ամն այր, որում անուն էր Վաւիթ, 'ի դուստր իւր Մարիամ. որ յետ երկոց ամաց երկուց որդւոց լինելոյ, 'ի կամաց երկոցունց մեկնեալ 'ի միմեանց զատչին: Մարիամ հանդերձ մանկամբն կրտսերաւ 'ի վասն կանանց անկեալ կրծուսորիւր. որոյ յարբուն հասեալ մանկանն, զհետ ընթանոյ միայնաւորի մի, որում անուն էր Նիկոմաքոս, և նա առաքէ յանապատ: Իսկ անդրանիկն առ դպեկաց մնացեալ, որ սպա աշխարհավարեալ ամուսնացաւ: Բայց հայնն նոյնն Վրիգոր անցեալ զնաց առ Տրդատ՝ զհայրենեացն հատուցանել պարտիս, կամ որպէս պարտ է ասել ճշմարտութեամբ՝ զառաքելութեան վեճակ մերոյ աշխարհիս և զքահանայութեանն հանդերձ մարտիրոսութեամբ վարժելով:

Բայց արդարև հօր սքանչելոյ որդիք զարմնայլք առաւել քան զառաւել. զի ոչ նա ընդրեաց զըրզիսն՝ յորժամ դարձաւ ընդ Տրդատոյ, և ոչ նոքա չոգան առ նա. և այն գրեթէ վասն երկիւղէ հալածանացն. բայց և ոչ 'ի քահանայանալն և 'ի փառաւորել հօրն երեւեալ պերճացան նոքա: Այնն որոյ և ոչ նա յամեաց 'ի Մեսարիայ, այլ փութապէս դարձեալ՝ 'ի սերաստացոց քաղաքին անայր հաւաքել զնիւթ վարդապետութեանն: Այլ թէ և բազում աւուրս արարեալ 'ի Մեսարիայ, ոչ ինչ՝ զորոց զմտան ածէր՝ առնելոց էին, անպառօն և անանցականին միայն սկելով. որք ոչ զպատին յինքեանս ձգէին, այլ պատին զհետ նոցա ընթացաւ, որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգէզոս:

2Ե

Եթէ ուստի և զնորդ ազգ մամիկոնէից:

Այլ յիճանեալ Արտաշրի որդւոյ Սասանայ, թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ: Ի սորա աւուրս եկեալ 'ի Հայս նախնի ազգին մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն, 'ի քաջա-

տոհմիկ և 'ի զլիսուր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին, ասեմ իսկ զՂենայցն՝ որ ունին զբոյց այսպիսի:

Յամն կատարման կենացն Արտաշէի, Արբոկ ամն Ղենբակուր, որպէս ասի 'ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդէք Բղդոսի և Մամգուն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Աւ չարախօսեալ Բղդոսայն զՄամգունայն, հրամայեաց թագաւորն Ղենաց Արբոկ սպանանել զՄամգունն: Քոր իմացեալ Մամգունայն, ոչ դայ 'ի կոչն արքայի. այլ փախուցեալ աղևիւ իւրով անկանի առ Արտաշէր թագաւորն Պարսից: Աւ Արբոկ հռեշտակա առարէ խնդրել զնա. և 'ի չսեղն Արտաշէի, պատերազմ 'ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ղենաց: Աւ իսկոյն մեռեալ Արտաշէի, թագաւորէ Շապուհ:

Արդ թէպէտ և ոչ տայ Շապուհ զՄամգուն 'ի ձեռն տեսուն իւրոյ, այլ և ոչ յԱրեաց երկիրն թողու. բայց ամենայն աղևիւն իւրով առարէ զնա, իբրև փտարանդի, առ գործակալս իւր որ 'ի շայս: Աւ յղէ առ թագաւորն Ղենաց՝ ասելով, թէ Մի թուեսցի չքեզ դժուար, զի 'ի ձեռս քո ոչ կարացի տալ զՄամգուն. վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ 'ի լոյս արեգական. այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեղը երկրի և 'ի մուտս արևու, որ հաւասար է նմա մահու. և արդ մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ: Աւ զի քան զամենայն բնակեալս 'ի վերայ երեսոց երկրի խաղաղասէր ասեն գոյ զազգն Ղենաց, յանձն առնու առնել զհաշտութիւն. ուստի յայտ իսկ է, թէ են արգարև խաղաղասէր և կենտասէր ազգ Ղենաց:

Աքանդելի է և աշխարհն առատութեամբ ամենայն պտղոյ, և գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքումաւէտ և սիրամարգաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրէշից, և որ եշայծեմունդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս, զփտեսան և զպոր, և այլ այսպիսիք: Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք, հասարակաց նոցա է զգետտ: Աւ այս յաղագս աշխարհին Ղենայց:

Իսկ Մամգունայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր, հանդիպեցաւ գալտեսանն Տրդատայ. և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղևիւն իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ. և Տրդատ

ընկալաւ զնա, բայց զկնի իւր 'ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ էա սեղի աղևիւն նորա և ուժիկ 'ի կերակուր, փոփոխելով տեղ 'ի տեղուջէ յբովանդակ ամն:

ՉԲ

Նահատակութիւնք Տրդատայ 'ի թագաւորութեանն յառաջ քան զհաւատան:

Վանդի ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ մանրախուզիւ ըննեալ, գտաք զթագաւորեն Տրդատայ յերրորդ ամի Վիտիլեախանասի, և գալ այսր հանդերձ մեծաւ զօրու: Որոյ հասեալ 'ի Կեսարիաց յուրք 'ի նախարարացն ընդ առաջ լինէին: Աւ ելեալ յաշխարհս, գտանէ զՕտայ սնուցեալ զքոյր իւր Խտարովիդուխտ, և պահեալ զգանձան ամրոցաւն հանդերձ յոյժ երկայնմտութեամբ. քանզի էր արդար և համբեր, ժուժկալ և առաւել իմաստուն. զի թէպէտ և ոչ ծանեաւ զճշմարտութիւն յաղագս Աստուծոյ, սակայն զստութիւն կուցն գիտաց: Նոյնպէս էր և սան նորա Խտարովիդուխտ, կուսան համեստ որպէս զօրինաւոր ոք, և ոչ ամենեկն ունել անդուռն բերան նման այլ կանանց:

Իսկ Տրդատ 'ի հազարապետութիւն շայոց զՕտայն կացուցանէ, շնորհակալութեամբ պատուէ զնա: Աւ առաւել ևս զիւր դայեկորդին, զմանդակունի Արտաւազդ, վասն լինելոյ նորա նմա պատճառ փրկութեան և հայրենականացն հասելոց փառաց. յաղագս որոյ 'ի ձեռն նորա տայ զսպարապետութիւն զօրացն շայոց: Նորին աղագաւ և զՏաճատ քեռայր նորին իշխան 'ի վերայ գաւառին Աշոցայ կարգէ: Սա էր որ յապայան զգացոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ, և նա արքայի, նախ զՎրիգոր Անակայ լինել սրգի, և ապա զկնի վասն որդւոցն Վրիգորի, որպէս հմուտ եղեալ 'ի կեսարացոց քաղաքին բնակելով:

Իսկ քաջին Տրդատայ երագապէս և բազում ճակատս տուեալ, նախ 'ի շայս և ապա 'ի Պարսոս, իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն: Որ 'ի միում նուազի առաւել քան զԱղիանանն զայն 'ի հնումն, կանգնեաց զնիզակն յօշոնական համաթիւ վիրաւորաց: Վարձեալ յերկրորդումն՝ կորովեացն Պարսից զփորձ առեալ զսաստիւթեան սկային և կուռ վառուածոցն, բազում վերօք պատեալ զձին՝ սաստիկեցին նետաձ-

դութեամբք. որոյ զարկուցեալ յերկիր ընկենայր զարքայն: Իսկ նորա յարուցեալ և 'ի հետի յարձակեալ, փոխանակ իւր զբազումն ընկենայր 'ի թշնամեացն, և զմիոյ ուրումն զձի կալեալ, արիաբար աշտանակեալ. դարձեալ յերկրորդին միւսանդամ կամուոր լեալ հետի, սուսերաւ զերամակս փղացն պուղէր: Եւ այսպիսի նահատակութեամբք յամեալ 'ի Պարս և յասրեստան, անդր ևս քան զՏիգրոն յարձակի:

29

Յաղագս առնել կին Տրդատոյ զԱշխեն, և Կոստանդին զՄաքսիմիոսոյ, և թէ որպէս հանդիպեցաւ հաւատոց:

Եկեալ Տրդատոյ յաշխարհս, առաքէ զԱմբատ ասպետ, զհայր Բագարատոյ, ածել զկոյնն Աշխեն՝ դուտոր Աշխադարոյ՝ իւր 'ի կնութիւն. որ ոչ ինչ նուազ էր կոյնն արքային հասակի: Եւ հրամայէ զրել զնա արշակունի, և զգեցուցանել ծիրանիս և թագ կապել, զի հարունացի արքայի: Յորմէ եղև որդի Խոսրով, ոչ համեմատ հասակի ծնուլաց իւրոց:

Ընդ նոյն աւուրս լինին հարսանիք և Մաքսիմիոսոյ դստերն Վիտղեաթիանոսի 'ի Միկովիոսոյ, փեսայանալով նմա Կոստանդիանոսի կեսարի, որդւոյ Կրտոսոյ թագաւորին Հռոմայ, որ ոչ էր 'ի դստերէն Մաքսիմիանոսի, այլ Հեղենայ պոռնիկ ծնեալ: Այս Կոստանդիանոս բարեկամացեալ 'ի հարսանիսն ընդ Տրդատոյ մեր թագաւորի: Եւ յետ ոչ բազում ամաց մեռեալ Կոստանդ, փոխանորդ նմա առաքէ Վիտղեաթիանոս զնորին որդի և զիւր որդիացեալն Կոստանդիանոս:

Սա յառաջ քան զթագաւորելն, մինչ դեռ կեսար էր, պարտեալ 'ի մարտն, և տրտմութեամբ մեծաւ ննջեալ, երևութացաւ նմա 'ի քուն խաչ աստեղեայ յերկնից, պարունակեալ գրով, ասէ. Այսու յաղթեա. զոր արարեալ սիւսնոյն և յառաջարեբեալ, յաղթեաց պատերազմացն: Բայց յետոյ հրապուրեալ 'ի կնոջէն իւրմէ Մաքսիմիոսոյ 'ի դստերէն Վիտղեաթիանոսի, յարոյց հալածանս եկեղեցւոյ. և զբազումն վկայեալ, ինքն եղեփանդական բորտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ վասն յանդգնութեանն: Օ, որ ոչ կարացին բուժել արիւղական կախարդքն և մարիսկեան բժիշկքն. յաղագս որոյ յլեաց առ

Տրդատ՝ առաքել նմա դութս 'ի Պարսից և 'ի հնդկաց, ասկայն և այնք ոչ հասին նմա յօգուտ: Օ, որ և քորմբ ոմանք 'ի դիւաց խրատուէ հրամայեցին բազմութիւն տղայոց զենուլ յաւազանս և ջերմ արեամբ լուանալ և սղջանալ. որոյ լուեալ զլալիւն մանկանցն հանդերձ մարցն կականմամբք, զթացեալ մարդասիրեաց, զնոցայն լաւ վարկուցեալ քան զիւրն փրկութիւն: Յաղագս որոյ զփոխարէնն Աստուծոյ ընդունի, յանրջական տեսութիւն Առաքելոցն առեալ հրամանն սրբիլ լուացմամբ կենսատու աւազանին 'ի ձեռն Սեղբեսարոսի եպիսկոպոսի Հռոմայ, որ 'ի նմանէ հալածանացն թագուցեալ էր 'ի Սորակախոն լեառնն. յորմէ և աշակերտեալ հաւատաց, զբռնաւորն ամենայն բառնալով Աստուծոյ յերեսաց նորա, որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանդեղոս:

29

Սատակումն սլիւնեաց 'ի ձենազնոյն Մամգուռնայ:

Ընդ հանգչելն Շապհոյ արքայի Պարսից 'ի պատերազմացն, և 'ի գնալն Տրդատոյ 'ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս, պարսպ առեալ խորհրդոց Շապհոյ, նութ չարիս 'ի վերայ մերոյ աշխարհիս. թովեալ զհիստիայիսն ամենայն՝ երանել 'ի Հայս, ժամ գնէ և իւր գալ Արեօք 'ի մեռս կողմանէն: Ի սորին բանս հրապուրեալ Սղոսկ նահապետ ազգին սլիւնեաց, զիւրեանն սպանանէ զփեայ՝ զձերացեալն Օտայ, որ էր 'ի սոհմէն ամատունեաց, և անուցոյ Խոսրովիկատոյ քեռ թագաւորին: Եւ այն ինչ ընդ հուպ եկեալ մեծին Տրդատոյ յարեմոսից, և լուեալ զայս ամենայն, և զխտացեալ՝ թէ ոչ 'ի ժամադրութիւն եկին Շապուհ, խաղայ 'ի վերայ հիստիասկանացն: Իսկ նահապետ ազգին սլիւնեաց ամբանայր յամրոցին, որ անուանեալ կոչէ Ողական, սպաւէն առնելով իւրեանց զբնակիչս Միմն կոչեցելոյ լերին. և ընդդիմացեալ թագաւորին, աղմկել զերկիրն. և մերձ առ լերամբն ոչ թողացուցանէր այլոմ՝ պարսպել գործոյ: Եսէ ամենայն նախարարութեանց տանս Հայոց արքայ. Որ քր ածէ առ իս գնահապետն սլիւնեաց, տաց նմա յախտեական իշխանութեամբ զգեօղս և զդաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին սլիւնեաց: Օ, որ յանձն առնայր ձենազնեայն Մամգուռն:

Աւ 'ի խաղալ թագաւորին զկողմամբ Ալուանից 'ի վերայ հիւսիսականացն, զնայ Մամգուն ամենայն աղխին իւրով զկողմամբ Տարօնոյ, որպէս թէ ապստամբեալ 'ի թագաւորէն. և 'ի չու անկեալ, առաքէ դաղտազնաց հետեւս, զգայուցանելով նահապետի ազգին սկունեաց զզնայն թագաւորին զկողմամբ Ալուանից. Վ անդ մեծ է, ասէ, թագաւորին Տրդատոյ, վասն որոյ զնայ զկողմամբ Ալուանից պատերազմել ընդ ամենայն լեւոնտոնեայն. վասն որոյ մեր է ժամանակ 'ի ճահ խորհել և գործել որ ինչ կամք էն. զի խորհեալ եմ դաշնաւոր լինել ընդ քեզ՝ վասն արհամարհանաց իմոց որ 'ի թագաւորէն: Բնդ որ ուրախացեալ նահապետ ազգին սկունեաց, ընդունի զնա երդամբ ուստից. բայց յամուրն ոչ թողու, մինչև տեսանել՝ թէ որպէս պահիցէ զմտերմութիւնն երդմանց և դաշնաւորութեանցն: Իսկ ասացեալն Մամգուն ամենեկին ջանացեալ զմտերմութիւն ցուցանել առ ապստամբին, հաւատարմացաւ նմա որպէս արդարեւ միամիտ գործակից. մինչև հրամայեաց նմա համարձակ մտանել յամուրն և ելանել:

Աւ յետ բազում վատահութեանն, 'ի միւսմ աւուրց հաւանեցուցանէ զնահապետ ազգին սկունեաց ելանել արտաքս յամրոցէն և որսալ երէս. և 'ի միջամուխ լինել որսոցն՝ զիպեցուցանէ աղեղամբն ընդ մեջ թիկանցն, և կործան յերկիր զարիւցանէ զապստամբն: Աւ ընթացեալ իւրով արամբքն 'ի գուռն ամրոցին, ունի զբերդն, կապելով զամենայն արսն որ ներքս: Աւ և զազգն սկունեաց խորհեցաւ բռնաւ, և կոտորեաց զամենեւեան. երկուք ամանք փախտական անկան յաշխարհն Օտփաց: Իսկ Մամգուն վաղվաղակի զգայուցանէ թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատոյ, զրէ հրովարտակ իշխել նմա ամենայնի. և կարգէ զնա նախարար 'ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր մամգունեան: Բայց մնացելոցն սկունեաց հրամայէ չլինասել:

26

Նահատակութիւնք Տրդատոյ 'ի պատերազմին յԱլուանս, յորում միջակտուր արար զթագաւորն Բաղայ:

Իսկ թագաւորն Տրդատ ամենայն հայրատանօք իջեալ 'ի դաշտն գարգարացոյ, պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. և 'ի

խառնել երկրցունց կողմանցն՝ յերկու ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայբար շահատակելով: Այ իարեմ ասել զերազութիւն ձեռինն, որպէս անբար 'ի նմանէ յերկիր անկեալ թաւաղալոր խաղային. օրինակ իմն 'ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թափեալ ցանցոյն, կայտուէին յերեսա երկրին: Օսր տեսեալ թագաւորին Բաղայ, մօտ հասանէ յարքայն. և հանեալ յատարալինէն զներդեայ քեխտապատ պարանն, և կորովութամբ ձգեալ յետուս կողմանէ, ճարպ զիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռն ածել ումք սուտերաւ. և ինքն վառեալ վերա պահպանակօք, ուր ոչ զձեին նետք: Աւ քանզի ոչ կորաց շարժել ձեռամբ զհսկայն, զանջիւք առ երկվարին. և ոչ այնչափ ինչ շութափեաց մարակել զերկվարն, քան թէ ահեակ ձեռամբն 'ի ներդեայն աճապարեալ սկային, և սաստկութեամբ ուժոյն զերեսա ցանցեալ, 'ի ճահ զիպեցուցանէր զերկայրին, և ընդ մեջ կորէր զայն և ընդ զոյդ պարանոցին զգլխի երկվարին:

Իսկ զօրայն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զգօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բաղիէ լեալ, 'ի փախուստ դառնային. զորոց զհետ մտեալ Տրդատ, վարէ մինչև յաշխարհն Հոնաց: Աւ թէպէտ ոչ փոքր հարուստս իւրոց զօրայն էհաս, և բազմայ անկումն մեծածայ, յորում մեռաւ և սպարապետն ամենայն Հայոց Արտաւազ մանդակունի, սակայն Տրդատ անտի ըստ հայրութեան օրինաց պատանդս առեալ, դառնայ: Որով պատճառաւ միաբանեալ զամենայն հիւսիսի, հանեալ զօր բազում, գումարտակ արարեալ, խաղայ յաշխարհն Պարսից, զիմեալ 'ի վերայ Շապհոյ՝ որդւոյ Արտաշի, չորս յիւրոցն առնելով զօրավարս, զՄիհրան առաջնորդ Վրաց, վատահացեալ վասն 'ի Վրիտատ հաւատոյն, և զԲաղարատ սպետ և զՄանածիհր նահապետ ազգին ուրշունեաց և զՎահան նահապետ ամատունեաց: Բայց յաղապս հաւատոյ Միհրանոյ և աշխարհին Վրաց ասել կայ մեզ առաջի:

29

Յաղապս Նունէի երանելոյ, եթէ որպէս եղև պատճառք փրկութեան Վրաց:

Կին ոմն, անուն՝ Նունէ, յընկերաց սրբոց հախիսիմեանցն 'ի ցրուելոցն, փախտեամբ հասեալ յաշխարհն Վրաց 'ի Մծիխիթայ, 'ի նոցա

քաղաքն նախագահ, յոյժ ձգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան, որով և զբազում ախտաժեստս բժշկեալ, և գլխովին զկին Միհրանայ առաջնորդին Վ ըաց: Վ անն որոյ հարցեալ զնա Միհրանայ, եթէ որով զօրութեամբ աննես զայս սքանչելիս, ուսաւ զքարոզութիւն աւետարանին Քրիստոսի. և ակործելով լուեալ, պատմեաց իւրոց նախարարացն հանդերձ գովեստիւ: Եւ իսկոյն եհաս 'ի նա լուր սքանչելեացն, որ եղեն 'ի Հայո 'ի Թաղաւորն և 'ի նախարարն, և զնկերացն երանելոյն՝ Նունեայ. ընդ որ հիացեալ, զըուցեաց երանելոյն՝ Նունեայ, որով և ստուգադոյն ևս տեղեկացաւ զամենայն ոճով:

Եւ եղև ընդ աւուրն ընդ այնտիկ ելանել Միհրանայ յորս. մուրրեցաւ 'ի դժուարս լերանց խաւարեալ օդով, այլ ոչ տեսանէլօք, ըստ այնմ՝ Թէ կոչէ զմէզ բարբառով, և դարձեալ՝ Թէ գտիւ 'ի գիշեր մթացուցանէ: Այսպիսի խաւարաւ ըմբռնեալ Միհրան, որ եղև նմա առիթ մշտնջենաւոր լուսոյն. քանզի զարհուրեալ, յիշեաց զոր լուաւ վասն Տրդատայ, եթէ կամեցաւ ճանապարհորդել յորս, հասին նմա հարուածք 'ի Տեառնէ. զոր համարեցաւ՝ Թէ և նմա այնպիսի ինչ դիպելոց է: Եւ երկիւղիւ մեծաւ պաշարեալ, խնդրեաց աղօթիւք լուսաւորիլ օդոյն և դառնալ խաղաղութեամբ, պաշտել զԱստուածն՝ Նունէի խոտանայր. որում հանդիպեալ, կատարեաց զասացեալն:

Իսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս, յլեաց աւսուրբն Պրիգոր, եթէ զինչ հրամայեսցէ նմա գործել այնուհետև. քանզի յօժարութեամբ ընկալան Վ իրք զքարոզութիւն աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռն, որպէս ինքն արար, և կանգնել զպատուական նշան խաչին մինչև ցօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա: Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն Արամազդայ. որ կայր մեկուսի 'ի քաղաքէն՝ դետոյն հզօրի ընդ մեջ անցանելով. զոր սովոր էին երկրպագել այդան այդուն 'ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա երևէր. իսկ եթէ ոք զոհէ կամէր, անցեալ ընդ գետն առաջի մեհենիցն զոհէր:

Բայց 'ի վերայ նոցա յարեան նախարարք քաղաքին, եթէ զով արդեւք փոխանակ կուոյն երկրպագեմք. ուսան՝ եթէ նշանի խաչին Քրիստոսի. զոր արարեալ կանգնեցին 'ի վերայ վայելուչ բլրոյն յարևելից կողմանէ քաղաքին, մեկուսի բաժանեալ և նա փոքրադոյն դետով:

Եւ երկրպագեցին ամենայն բազմութիւնն ընդ առաւօտն նոյնպէս 'ի տանեաց իւրաքանչիւր: Բայց յորժամ ելեալ 'ի բլուրն տեսին փայտ կոխեալ՝ ոչ ճարտարաց ինչ դործ, յարվք քան զսակաւս արհամարհեցին, իբր Թէ այնպիսեաւ լի իցէ ամենայն անտառն նոցա. և Թողեալ 'ի բաց դնացին: Իսկ բարերարին Աստուծոյ նայեցեալ 'ի գայթաղութիւն նոցա, առաքեաց յերկնից սիւն ամպոյ, և լցաւ լեառնն բուրմամբ անուշահոտութեամբ. և ձայն բազմութեան սաղմոսերգուաց լսելի եղև. քաղցր յոյժ և ծագեաց ըյս տապաւորութեամբ խաչի ըստ ձեոյ և չափոյ փայտեղինին, և կարով 'ի վերայ նորս հանդերձ երկոտասան աստեղօք. յոր ամենեցուն հաւատացեալ, երկրպագեցին նմա: Եւ յայնմ հետէ զօրութիւնք բժշկութեան կատարէին 'ի նմանէ:

Իսկ երանելին Նունէ ել զնոց աշակերտել զայլ ևս գաւառան Վ ըաց յանապակ լեզուէն, շրջելով անպաճառճարար և առանց աւելորդաց, օտարացեալ յաշխարհէ և որ 'ի ամա. կամ Թէ ճմարտագոյն ասել՝ 'ի խաչ ելեալ, 'ի կրթութիւն մահաւ զկեանսն առնելով, բանիւ վկայ բանին Աստուծոյ, և յօժարութեամբն իւրով՝ որպէս արեամբ պատկեալ: Չոր համարձակիմք ասել, Առաքելուհի եղեալ, քարոզեաց 'ի Աղարջաց սկսեալ առ դրամբք Արանայ և Ասարից մինչև 'ի սահմանս Մաքթաց, որպէս ուսուցանէ քեզ Աղաթանգեղոս: Բայց մեք դարձցուք անդրէն 'ի պատմութիւն Տրդատայ յարձակմանն 'ի Պարսս:

21:

Պարտուեալ Շապհոյ և սկսանց հնազանդութիւն ընդ ձեռամբ մեծին Աստանդիանոսի. և Տրդատայ ունել զԵկրատան, և գալ աղբականացն, և Թէ յայնժամ եղև դիւտ փրկական փայտին:

Բայց Տրդատայ Թեպէտ և զյաղթութիւն ստացեալ էր, այլ 'ի հարկանելոյ զօրուն և 'ի բազում անկելոց նախարարացն, զանդիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապհոյ, մինչև եհաս բազմութիւն զօրուն հռոմայեցւոց, որք ընդ ասորեստան յարձակեցան. և 'ի փախուստ Շապհոյ՝ դարձան և յաւարի առին զամենայն երկիրն: Քանզի և Տրդատ միահամուռ իւրովքն, և որք ընդ իւրովքն էին զօրքն, ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից զիմեաց տարեկան չուաւորութեամբ:

Յայնժամ զայ առ նա աղգականն իւր և հարազատ Կամար, առաջին որդի Պերոզամատայ: Այս Պերոզամատ է այն տղայն, որ 'ի կատորէն Արտաշէի զցեղն Կարնան Պահլաւին, փախուցեալ Քուրդայ ապրեցուցանէր: Որոյ հասեալ յերիաստարդութիւն, 'ի պատիւ հօրն և 'ի վերայ զօրուն կարգի յԱրտաշէն, առ 'ի պատերազմել ընդ խուժադուժ աղգան ընդ այնտիկ, նենդութեամբ խորհել արկանել զնա 'ի ձեռս բարբարոսայ: Որոյ եղեալ այր քաջ, սքանչելագէս մղեաց զպատերազմունն. և 'ի պարտել զՎ զբրին որ անուանէր Խաքան, նուաճեալ՝ տայ զգուտոր իւր նմա կնութեան. նա և այլ կանոյս առեալ զմերձաւորս Արտաշէի, և բազում որդիք եղեալ, զօրացեալ բռնութեամբ ունի զկողմանն զայնտիկ. թէպէտ և էր 'ի համար Արտաշէի, այլ ոչ տեսնէ զնա: Առ 'ի մեռանէն Արտաշէի՝ ոչ հնազանդի որդւոյ նորա Շապուհայ. 'ի մարտնէն 'ի բազում պատերազմունս յաղթէ, և 'ի մտերմայն Շապուհայ զեղակուր եղեալ մեռանի:

Առ նովիմբ ժամանակաւ այլ ոմն կեցեալ Վ զբրի Խաքան, որ թշնամութեամբ ընդ Կամարայ որդւոյ նորա վարէր: Իսկ Կամարայ դժուարին վարկուցեալ 'ի մէջ երկուց հօր թագաւորաց բնակել թշնամութեամբ, մանաւանդ զի և եղբարքն ոչ միաբանեցան ընդ նմա, խաղացեալ ամենայն ընդանօք իւրովք և աղխւ գայ առ Տրդատ մեր թագաւոր, եղբարց նորա առ Շապուհ երթալով: Այս Կամար ահագին քաջութեամբ նահատակեալ առ հարբն 'ի պատերազմունս, 'ի շահատակէն իւրում հարկանի յուռնէն սակերք զգլուխն. և վերացուցեալ մասն ինչ յսկերէ սկաւառակին, բժշկեալ 'ի զեղոց, պակաս գոյով բուրութիւն զազաթանն, անուանեցաւ Կամար այնր աղաղաւ:

Բայց Տրդատայ հաստատեալ իւր զլութնպարսպեանն Ալիքատան երկրորդ, և վերակացուս յինքննէ թողեալ, դառնայ 'ի Հայս, ընդ իւր անձերով զԿամար ամենայնիւքն: Վրանդի Շապուհ աղաչեաց զԱստանդիանոս զյաղթողն, խնդրել զհաշտութիւն, և հաստատել խաղաղութիւն մշտնջենաւոր. զոր արարեալ սրբոյն Աստանդիանոսի, յես այնորիկ առաքեաց զՀեղինէ զմայրն իւր յԱրտաշէմ 'ի խնդիր պատուական Խաչն, զոր և եգիտ իսկ զփրկական փայտն, հանդերձ հինգ բեւեռօքն:

ՁԸ

Կապուճն Լիկիանոսի, և փոխուճն արբունեացն 'ի Հոռովք, և շինել Կոստանդնուպօլսի:

Ի բառնան Աստուծոյ զբռնաւորսն ամենայն յերեսաց Կոստանդիանոսի՝ մեծարեաց նա զՎ իկիանոս մեծութիւն յոյժ, և ետ նմա կնութեան զքոյր իւր ոչ համամայր, ծիրանօք և պակաս կոյսերական զարդարեաց զնա. և յերկրորդականս հասուցեալ պատիւս. արքայ ամենայն արեւելից կացոյց: Բայց զոր աստուածային բանն առ երբայեցոյն անհարին համարեալ՝ չարութեանն փոխխումն, նոյն և աստանօք պատահի ընձու անկարելի է զտայտուցն փոխել, և եթովպացոյ զԹխութիւն, նոյնպէս մարդոյ ամպարչափ զբարն: Վրանդի նախ առ 'ի հաւատն գտանի դրժող, և երկրորդ առ բարեգործն իւր ապաստմբ: Յարոյց հաւածանս եկեղեցոյ, և նենդութիւն զաղանի ընդդէմ՝ Աստանդիանոսի. նա և չարիս բաղմագանս ամենեցուն հասոյց, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, ցանկատերս այս և զարշէլի ալևոր՝ ներկուածոյ ունելով զհերս. որ և զկին իւր 'ի մեծ նեղութիւն արգել, սակս տրիութեան երանելոյն Վրապիւռայ, վասն որոյ սպան զսուրբն Բասիլիոս Ամասիոյ պոնտացոյ եպիսկոպոս:

Առ իբրև յայտնեցաւ դաւն, և գիտաց թէ նմա լուս ոչ լինի Աստանդիանոս, ժողովեաց զօրս ընդդիմանալ պատերազմաւ: Առ ցրտացեալ 'ի սիրոյն Տրդատայ մեր թագաւորի, ակնածէր սրպէս արդարեւ 'ի թշնամոյ. քանզի գիտէր եթէ ստելի է արգարոյ ամենայն ամբարիշտ: Իսկ իբրև եկն յաղթողն Աստանդիանոս, մատնեաց Աստուած 'ի ձեռս նորա զՎ իկիանոս. յոր կնայեալ սրպէս 'ի ձերունի և 'ի քեռայր, և տանել 'ի Պաղլիլուս հանդերձ երկաթի կապանօք՝ զնել 'ի մետաղս, զի աղօթեացէ առ Աստուած՝ սրում մեղան, թերևս երկայնամիտ լիցի առ նա: Առ ինքն հանդերձ սրգովքն մի թագաւորութիւն զհոռովայեցոյն ցուցեալ, զքաննմեակն 'ի նիկիամիդացոյ քաղաքին կատարեաց: Օգի 'ի չարրորդ ամէ հաւածանայն սկսեալ թագաւորել մինչև ցերեքոտասներորդ ամն խաղաղութեան, զոր և այսօր տօնէ աշխարհ:

Առ ոչ պարտ վարկուցեալ 'ի Հոռով դաւնայ, այլ 'ի Ռիզանդիոն անցեալ՝ հաստատէր զաբբունինս, յանրջական իմն նախատեսութեանց

հրամայեալ. դերասպցածառս իմն առնելով շինուածս, հնդապատիկ յաւելեալ մեծացոյցանէ: Քանզի ոչ ուրուք մեծի թաղաւորի կայր 'ի նմա ձեռնարկութիւնք այսպիսիք՝ բայց 'ի սակաւ ինչ իրաց, որպէս տիեզերակալին Աղէքսանդրի մակեդոնացոյ, յորժամ անտի ընդդէմ Վարեհի սպառազինեցաւ, և սակս այնորիկ շինեաց յիշատակ իւր զասացեալն Ստրատիդին. քանզի 'ի նմա զպատերազմականն յորինեաց զկազմութիւն: Օր յետոյ Սեւերիոս արքայ հռովմայեցոյ նորոգեաց. և ինքն շինեաց զբազանին 'ի տեղոջ սեանն, որ ունէր ստորադիր խորհրդական անուն Արեգակն, ըստ թրակացոյ բառի Օւերսիպն, որոյ կոչմամբ յորջորջեցան և բազանիքն: Սա շինեաց և զտեսարանն և զգազանամարտկայն և զխաղաղայն, և զձիրնութացն ոչ կատարմամբ: Այլ Մատանդիանոս ամենապատիւ յարդարեաց, և անուանեաց նոր Հոսմ, իսկ աշխարհ կոչեաց զնա Մատանդիանոս քաղաք: Ասեն և զայս, եթէ գաղտնի եհան 'ի Հռովմայ զասացեալն Պաղադիոն քերածոյ, և եդ զնա 'ի Փորսնին ներքոյ սեանն զառ 'ի յիւրմէ կանդնեալ. բայց այս մեզ անհաւատալի է, այլոյ՝ որպէս կամք իցեն:

ԶԹ

Յաղագս Արիոսի չարափառի, և ժողովոյն՝ որ եղև վասն նորա 'ի Նեկիայ, և սրանչեւեացն՝ որ երևեցաւ 'ի Գրիգորիոս:

Բնդ այն ժամանակս երևեցաւ Արիոս աղէքսանդրացի, որ ուսոյց չարաչար ամբարշտել, ոչ գոլ զորդի հաւատար հօր, և ոչ 'ի բնութենէ և յեութենէ հօր, և ոչ ծնեալ 'ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար զամն և արարած և կրտսեր, և յետ ժամանակի գոյացեալ. որ ըստ արժանեաց իւրոյ ամբարիշտ այս Արիոս 'ի դարչելին ընկալաւ զաստակումն: Այլ ան որոյ ել հրաման յինքնակալէն Մատանդիանոսէ՝ ժողով լինել բազմութեան եպիսկոպոսաց 'ի Նեկիայ բութանացոյ: Այլ ժողովեցան Բիտան և Բիկէնոզ երիցունք 'ի Հոսմ քաղաքէ՝ ձեռնարկութեամբ որոյն Սեղբեստրոսի, Աղէքսանդրոս Աղէքսանդրի, Աւստաթիոս Անտիոքաց, Սնակարիոս Աբուսաղէմի, Աղէքսանդրոս Մատանդնուպօլի եպիսկոպոս:

Յայնժամ զայ հասանէ հրովարտակ ինքնակալին Մատանդիանոսի առ մեր արքայն Տրդատ, զի զուրբն Գրիգոր առեալ ընդ իւր 'ի ժողովն երթիցէ. զոր ոչ առ յանձն Տրդատ: Քանզի լուեալ էր զինամանալն Շապհոյ ընդ հնդկաց թաղաւորին, և ընդ արեւելեանն Խաքբանայ, և զզօրավարէն՝ Ներոսհի՝ որ և թաղաւորեաց ամս ինն, և Որմզդի՝ որ ապա և նա թաղաւորեաց ամս երես նահատակութեամբք: Այլ 'ի կասկածի եղեալ, զի մի արդեւք պայմանին ստիցէ ըստ սովորութեան հեթանոսութեանն, վասն այնորիկ ոչ եթող առանց իւր զաշխարհս: Բայց և ոչ սուրբն Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի մի՞ զառաւել պատինն վասն խոտովանողական անուանն 'ի ժողովոյն կրիցէ. որպէս զի այսպէս փախաբանօք և մեծաւ փութով կոչեն: Այլ նոքա առաքէն փոխանորդ իւրեանց զՈւրտակէս, հանդերձ ձջմարիտ խոտովանութեամբ երկուցունց՝ զբով: Որոյ երթեալ հասանէր մեծին Ղեւոնդի. և հանդիպի յայնժամ ժամու, զի մկրտէր զԳրիգոր զհայր Գրիգորի աստուածաբանի. որ իբրև ել 'ի ջրոյն, ըյս շուրջ փայլատակեալ զնովաւ, զոր ոչ սք 'ի բազմութենէն ետես, այլ միայն Ղեւոնդիոս՝ որ մկրտէրն, և մերն Ուրտակէս, և Աթալ Ադեսիայ, և Յակոբ Մծբրնայ, և Յոհան Պարսից եպիսկոպոս, որք նոյն շաղօք ուղեորէին 'ի ժողովն:

Գ

Գարձ Ուրտակիսի 'ի Նեկիայ, և հաւատալ ազգականացն, և որ ինչ 'ի Գառնի շինուածք:

Արթեալ Ուրտակէս ընդ մեծին Ղեւոնդի, հասանէ 'ի քաղաքն նիկիացոյ, ուր եղեն ժողովեալ հարբ երեքհարեւր և ութևտասն 'ի քահառուն արիանտաց, զորս նղովեալ մերժեցին 'ի հաղորդութենէ եկեղեցոյ. սապէս և ինքնակալն արտասահմանեաց 'ի մետաղս: Ապա դարձեալ Ուրտակեաց արժանահաւատ բանիւ, և քանն կանոնեալ զլսովք ժողովոյն, զայ հանդիպի հօրն և արքային 'ի Աղաղաշապատ քաղաքի: Բնդ որ ուրխացեալ որոյն Գրիգորի, սուղ ինչ գլուխ յինքենէ 'ի կանոն ժողովոյն յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին:

Յայնժամ ժամու և ազգային նոցա Աամար մկրտի իւրայովքն հանդերձ՝ 'ի ձեռն մեծին Գրիգորի, արքայի ընդունելով 'ի ջրոյն, սալ

նմա ժառանգութիւն զմեծ դատասկերան Արտաշիսի, որ այժմ ասի
 Գարսխանակերտ, և զգաւառն Շիրակի, որպէս ազգականի իւրում և
 մտերիմ հարազատի: Այլ նա ոչ աւելի բաւեալ քան զԵթն աւուրս
 յետ մկրտութեանն, վախճանի: Բայց թագաւորին Տրդատոյ մխի-
